

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РА
NATIONAL ACADEMY OF SCIENCES OF ARMENIA

Հ.ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ИНСТИТУТ ЯЗЫКА ИМЕНИ Р.АЧАРЯНА
H.ACHARYAN INSTITUTE OF LANGUAGE

ԼԵԶՈՒ

ԵՎ


ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

•

ЯЗЫК И ЯЗЫКОЗНАНИЕ
LANGUAGE AND LINGUISTICS

1(24)

2021



ԵՐԵՎԱՆ • ЕРЕВАН • YEREVAN

Հանդեսի հիմնադիրն է ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի
ինստիտուտը:
Լույս է տեսնում 2003 թ., տարին երկու անգամ:

Գլխավոր խմբագիր Համբարձումյան Վ. Գ.

Խմբագրական խորհուրդ

Ավետիսյան Յու. Ս., Բարլեզիզյան Ա. Կ., Բրուտյան Լ. Գ., Գալստյան Ա. Ս.
(գլխավոր խմբագրի տեղակալ), Թրագուտ Յ. (Ավստրիա), Խաչատրյան Գ. Կ.,
Կատվալյան Վ. Լ., Կորտլանդտ Ֆ. (Նիդերլանդներ), Հովհաննիսյան Լ. Շ., Սո-
համմադի Մ. Մ. (Իրան), Պետրոսյան Վ. Զ., Սարգսյան Ա. Ե., Սարգսյան Մ. Ա.
(պատասխանատու քարտուղար), Սաքայան Դ. Գ., (Կանադա), Սիմոնյան Ն. Ս.
(գլխավոր խմբագրի տեղակալ), Տեր-Մերկերյան Ռ. (Ֆրանսիա), Տոնապետյան-
Դեմոպուլոս Ա. (Ֆրանսիա):

Главный редактор Амбарцумян В. Г.

Редакционная коллегия

Аветисян Ю. С., Барлезизян А. К., Брутян Л. Г., Галстян А. С. (заместитель
главного редактора), Катвалян В. Л., Кортландт Ф. (Нидерланды), Мохаммади
М. М. (ИРИ), Оганесян Л. Ш., Петросян В. З., Сакаян Д. Г. (Канада), Саргсян А. Е.,
Саргсян М. А. (ответственный секретарь), Симонян Н. М. (заместитель главного
редактора), Тер-Меркерыан Р. (Франция), Тонапетян-Демопулус (Франция), Трагут
Я. (Австрия), Хачатрян Г. К.

Chief Editor Hambardzumyan V. G.

Editorial Board

Avetisyan Yu. S., Barlezizyan A. K., Brutyan L. G., Donabédian-Demopoulos A.
(France), Galstyan A. S. (deputy chiefeditor), Hovhannisyan L. Sh., Katvalyan V. L.,
Khachatryan G. K., Kortlandt F. (Netherlands), Mohammadi M. M. (Iran), Petrosyan
V. Z., Sakayan D. G. (Canada), Sargsyan A. E., Sargsyan M. A. (editorial secretary),
Simonyan N. M. (deputy chief editor), Ter-Merkeryan R. (France), Tragut J. (Austria).

ISSN 1829-0183

© Լեզու և լեզվաբանություն

© ՀՀ ԳԱԱ հրատարակչություն 2021

Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1660-ամյակը

Հայ գրի և հայ դպրության, դպրոցի հիմնադիրն է նա:

Հայոց լեզվի հնչունական յուրահատկության խոր ուսումնասիրմամբ և սաների բանավոր խոսքի փորձով նա հորինեց գրավոր խոսքի միջոցը՝ հայ գիրը: Անմահ է նրա ստեղծածը, արդեն հարյուրավոր տարիներ անց մնում է հայ մարդու ինքնության վկան և ուղեցույցը:

Հայերն ունեն իրենց գիրը, պարտական են նրան՝ իրենց զավակին: Տարբեր ժողովուրդների մշակույթում գրի հորինումը եղել է մեծ գյուտերից մեկը, եթե ոչ՝ մեծագույնը: Այսօր հայտնի լեզուների թիվը հարյուրներով է, իսկ այբուբեններինը՝ մեկ-երկու տասնյակով: Հայոց գիրը այդ մեկ-երկուսի մեջ է, հայությունը՝ հարյուր հազարների մեջ, արարչական և արարող:

Երանելի է հայոց գրերի ստեղծողը, մենք հիշում ենք նրան, նրա ստեղծածը հոգու և մտքի կրակ է. մեր ինքնության եզակին, թերևս Քրիստոսից հետո մեր առաջին ամփոփն է նրա ստեղծածը՝ հայոց գեղեցիկ և ինքնօրինակ գիրը:

Շատերն են գրել մեր ազգային հանճարի մասին, և շատ նկատառումներով. Պարույր Սևակը գրել է՝ «Սրի դեմ՝ գրիչ». և այս ձևակերպումը եղել է թե՛ նրա ժամանակ և թե՛ հայոց կյանքի գրեթե բոլոր ժամանակներում, նաև մեր օրերում. ստեղծարար գրիչ՝ ընդդեմ ավերիչ սրի: Նա աշխարհ եկավ տասնվեց անգամ հարյուր տարի առաջ, եղավ հայի մտավոր ինքնության և ինքնատիպության արձանատիպ միջոց գրի արարչի տեսքով, հայ գրավոր կրթության պահանջով, նվիրման պարտադրանքով:

Մենք կայինք նրանից առաջ, մենք կանք նրանից հետո, ու այդ միջոցում մենք ինքնագրվեցինք նրանով, մեր բերանացին դարձավ տողացի: Նա իր ժողովրդի զավակն է՝ գլուխ իրենով սկսվող նոր, քրիստոնյա կրթության զավակների տևական բաներգության շարքին:

Մենք նրանով ենք, ինքը՝ իր հետնորդներով, և ինչ երանություն է, որ նա Օշականում է, թե չէ դրանում էլ վրա կտար այլերի այլակայությունը: Սուրբ՝ սրբերի մեջ, մեծ հավատքի տեր մի ժողովրդի, դարերի մեջ՝ քաղաքակիրթ, հազարամյակներ ի վեր և հետ այսու ևս հազարամյակներ՝ մի մեծ ժողովրդի:

Եվ ասում ենք, միշտ ենք ասելու՝ Եվ այր մի Մաշտոց անուն:

ԲԱՌԱՔՆՆԱԿԱՆ ԵՎ ՍՏՈՒԳԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

Բանասիր. գիտ. դոկտոր Վ. Գ. Համբարձումյան
vazgengurgeni@mail.ru

Հիմնաբաներ: Բառաքնություն և առնչություններ տարբեր լեզվա-
ընտանիքի լեզուների միջև, զուգադիպումներ հայերենի և խուռաուրա-
տական լեզուների միջև. հայերենի նոր տվյալների ընդգրկում. ծագում-
նային և տիպաբանական զուգադրություն, արմատի վերականգնում և
համեմատություն հնդեվրոպական մյուս լեզուների հետ:

Ներածություն: Հին գրավոր մշակույթի պատմության, աղբյու-
րագիտության վերաբերյալ նորագույն տվյալները թույլ են տալիս
առաջավորասիական որոշ լեզուների առնչություններին, եղած
նյութին անդրադառնալ նոր հայեցակետից՝ կատարելով նաև որոշ
լրացումներ և ճշգրտումներ, որպիսով, ըստ հնարավորին, կարող
են ավելի ամբողջական լինել այդ լեզուների և դրանց կրողների
պատմության վերաբերյալ գիտական պատկերացումները:

Հայերենի և խուռաուրատական լեզուների առնչությունները
ոչ միայն մեկ լեզվաընտանիքի ներսում (ինքնակա), այլև տարբեր
լեզվաընտանիքների միջև (միջընտանիքային) քննության հարցեր
են առաջ բերում, որոնց լուծումը, մանավանդ համեմատությունից
դուրս մնացած տվյալների օգտագործմամբ, շարունակում է լինել
հնդեվրոպաբանության ուշադրության ոլորտում: Այդ առնչություն-
ներին անդրադարձած հիմնական աշխատանքները կատարվել են
1960-1980-ական թթ.: Եթե մի դեպքում փաստական նյութը խիստ
սուղ է (ըստ հայտնի արձանագրությունների՝ մի քանի հարյուրի
սահմաններում), ապա հայերենի դեպքում այն կարելի է լրացնել
գրավոր հուշարձանների ավելի մանրամասն, այլև հին և ներկայիս
բարբառների տվյալներով¹:

¹ Մ.Լ. Խաչիկյանի գրքում, օրինակ, խուռերեն բառերի և ձևայինների թիվը, մեր հաշվում-
ներով, 580-ն է, իսկ ուրարտերենինը՝ ավելի պակաս (Մ. Լ. Խաչիկյան, Хурритский и урарт-
ский языки, Ереван, 1985, էջ 150-177):

Ըստ այդմ՝ ստորև անդրադառնում ենք այդ առնչություններին վերաբերող հնչյունական, բառային և այլ կարգի մասնակի զուգադիպումների՝ ժամանակակից հնդեվրոպաբանության պատկերացումների (կոնտինուումի) շրջանակում:

Ելակետային է նաև այն, որ ի տարբերություն հայոց լեզվի պատմության նախագրային ժամանակաշրջանի համար առաջարկված շրջանաբաժանման՝ մեր ձեռագիր աշխատանքներից մեկում փորձել ենք տարբերել նույն ժամանակաշրջանի հաջորդական երեք շրջան՝ ընդհանուր հնդեվրոպական (հնդեվրոպական միասնության կամ համահնդեվրոպական) շրջանին (մ.թ.ա. IX - III հզր.) հաջորդող, որոնցից երկրորդը կոչվում է հայ-խուռաուրարտական փոխազդեցության շրջան (մ.թ.ա. II հզր. երկրորդ կես - մ.թ.ա. I հզր. առաջին երեք քառորդ):

1. Հնչյունական զուգադիպումներ:

Մինչև այժմ հայտնի աշխատություններում հայերենի և խուռաուրարտական լեզուների առնչությունների հարցը քննվել է հրնչյունական անցումների սահմանման, բառային զուգադիպումների անցկացման մեթոդիկայի կիրառմամբ՝ շեշտը գրեթե բացառապես դնելով ստուգաբանական վերականգնման փոխարեն զուգաբանական նկարագրման վրա: Այնինչ ներկայումս առաջնային է այդ առնչությունների պատմամշակութային, լեզվական-համեմատական քննությունը՝ պայմանավորված այդ լեզուներ կրողների պետական կազմավորումների, իրավական-տնտեսական շփումների հանգամանքներով. տեսական այս դրույթի մեթոդական հիմքը, կարծում ենք, ստուգաբանական վերականգնումն է:

Այսպես, բերվում են համեմատություններ հնդեվրոպական (հե.) հիմք-լեզվի և ուրարտերենի միջև, որոնց կից դրվում է հայերեն հնարավոր համարվող ձևը՝ առանց հնչյունական անցումների ընդհանուր կարգի հաստատման. 1) ոչ ռնգային ձայնորդը բաղաձայնից առաջ և բառավերջում ուրարտերենում կարող է ընկնել, սակայն չի նշվում, որ հայերենում նաև պահպանվում է. հմմտ. հե. *andh- «դուրս ելնել, ծաղկել» ուրարտ. a(n)dani «մարզ» (?). «դաշտ», հայ. *հանդ* «դաշտ. արտ»². 2) գտնում են, որ հե. *m ձայնորդը, իբրև բաղաձայն կամ երկբարբառի բաղադրիչ, ուրարտերենում և հայերենում պահպանվում է, սակայն կարելի է բերել օրինակ, որ հայե-

² St 'u Г. Б. Джаукян, Урартский и индоевропейские языки, Ереван, 1959, էջ 34-35:

ընտանիք» (?) - հայ. *(q)արմ, արմ-ատ* և այլն. հմմտ. *են-ք* «եռալը. քոր, բորբոքում» և այլն³; 2) Բառամիջի (նաև բառասկզբի) դիրքում բարբառներում միջին բարձրացման *ե*-ն վերածվում է *յե*-ի, նաև *ռ*-ն՝ *ռւե*-ի, որը բավականին հին երևույթ է (հմմտ. *eriec* «երեք», *eriesc* «երեսք», *uluec* «ոլոք/ոլոգ». Ձեռագիր, X դ.), հմմտ. հե. *eg' (o)->* ուրարտ. *ie-še* (-še-ն համարվում է երգատիվ հոլովի վերջավորություն [?]), հայ. (գրական) *էս* «անձն. դեր, 1-ին դ.»⁴:

Բերենք մի քանի նոր դիտարկում՝ նկատված հնչյունական մակարդակում⁵.

ա) ուրարտ. *ia* - հայ. *ա* [ä]. հմմտ. *Biainili* «Ուրարտու, ուրարտացի» - հայ. *Վան* [*Վհահն* (<**Բհահնա*, **բհահնացի*). **Vian*] (հե. **bheu-* «աճել. ապրել». հմմտ. *banε* «բնակարան. ապրելու տեղ»). այս օրինակում զուգադրելի է ուրարտ. *ia* - Վանի բարբառի քմային ձայնավոր [ä] հարաբերակցությունը՝ անկախ ժամանակային հեռավորությունից.

բ) ուրարտ. *b* - հայ. *բ* [b]. հմմտ. ուրարտ. *badusi/c* «մեծ (?)», հրեկայական (?)» - հայ. *բաղոց* «(բանջարանոցում) մեծ թումբ՝ ջրի դեմն առնելու համար» (հե. **bhad* «լավ»). նման անցում նշվում է բառասկզբի դիրքի համար (*b>p*-ին զուգահեռ), սակայն առանց օրինակի⁶.

գ) ուրարտ. *u* - հայ. *ռ* (երկար՝ երկբարբառային հնչյունով, **nnu*) [նախագր. հայ. **ō* (?)]. հմմտ. *Tušpa-* [<**Tušpa-i*] - Տոսպ [<**Տոուշպա-յ* (սեռ. հոլ.)] (տեղանուն) [<հե. **ou-* (?)].

դ) ուրարտ. *au* - հայ. *աւ*. հմմտ. ուրարտ. *bauše* «խոսք. հրաման» - հայ. *բան* «բառ, խոսք. իր, առարկա»⁷. այստեղ նկատի ունենք նաև՝ հայ. *գրաւսնուլ* «զբոսնել» (նխն. «խոսքի բռնվել. զբուցել») (?) (հե. *bhā-* «խոսել, ասել». հմմտ. լատ. *ambulo* «զբոսնել»).

³ Նույն տեղում, էջ 33:

⁴ Տե՛ս *Г. Б. Джаукян*, նշվ. աշխ., էջ 31: Նշվում է միայն նոր գրականում (բայց ոչ՝ նոր բարբառներում) *յես* հնչման մասին (հմմտ. *յես* [Ալ., Ախգ., Երև., Դրբ., Մշ., Տիգ., Հմշ. և այլն], *յես* [Վն.], *յես* [Ջղ.], *յիս* [Մրղ., Տփ.]):

⁵ Հարցի ավելի լայն քննարկումը հետագայի խնդիր է:

⁶ *Г. Б. Джаукян*, նշվ. աշխ., էջ 16:

⁷ *Г. Б. Джаукян*, *Взаимоотношение индоевропейских, хурритско-урартских и кавказских языков*, Ереван, 1967, էջ 18:

է) ուրարտ. ia – հայ. *ա*. հմմտ. ուրարտ. diau(e)hi – հայ. *Տայք* (հմմտ. ասուր. Daiaeni // Daiani. մ.թ.ա. XII-IX դդ.)⁸.

զ) ուրարտ. d – հայ. *դ/տ*. հմմտ. ուրարտ. za-d «անել, կատարել, ստեղծել, կառուցել», նաև d- «անել», zaduše «կատարելը. կատարում» (?) - հայ. (բրբռ.) *զադ (զատ)* (Զրմ., Վն.) «արված մի բան՝ իր և այլն» (հե. dhē-) և այլն.

է) ուրարտ. š - հայ. *տ*. ուրարտ. šiwinə «(արևի) աստված» - *տիւ* «օր, ցերեկ լույս» (< հե. * t'iu-) և այլն⁹:

2. Բառային զուգադիպումներ:

Զուգադիպում տերմինով ավանդաբար արտահայտվել է տարբեր լեզուների (նաև նույն լեզվի տարբեր վիճակների՝ ժամանակային, տարածքային և այլն) լծորդում՝ ցույց տալու նրանց առավելապես հնչյունական, քան իմաստային մերձակցությունը («մոտ լինելը»): Խնդիրը մնում է նման միավորների ծագումնային-մշակութային, տիպաբանական առնչության վերհանման, վերջինիս հավաստիության շեմի ապահովման մեջ:

Ըստ այսմ՝ ստորև անդրադառնում ենք մի քանի օրինակի¹⁰:

ա) *Խադտիք (խադ-տ-իք)* «տեղանուն. տարածք (իմաստի նեղացմամբ, կամ՝ հակառակը)» - [ուրարտ. haldi - *Խալդի (խալդ)* 1. «դիցանուն». 2. «ցեղանուն» (ուրարտացի) (Էպոնիմ). 3. «երկիր» (?)]. որքան էլ նման համեմատությունը տարակուսելի կամ նույնիսկ անընդունելի լինի, այն հնչյունական անցումների տեսանկյունից միանգամայն անառարկելի է, թեև առայժմ կարելի է ձեռնուպահ մնալ հե. ձևի վերականգնման հարցում (<հե. ?)¹¹:

բ) *Հարի* «մինչև» (բրբռ.՝ Կր., Մշ., Սս. Խտջ.) - ուրարտ. pari(e) «մինչև». հայերենում հե. *p > հայ. *հ* անցումը տեղի է ունենում ավելի վաղ, քան մինչև իրանական փոխառությունների ժամանակը՝

⁸ Հմմտ. նույն տեղում, էջ 19: *Г. Б. Джаукян*, Урартский и индоевропейские языки, էջ 16: *Գ. Բ. Ջահուկյան*, Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան, Ե., 1987, էջ 430-431: Ջահուկյանի աղյուսակում երկհնչյունների հետ կապված զուգադրում չկա:

⁹ *Մ. Լ. Խաչիկյան*, նշվ. աշխ., էջ 48: Հմմտ. *Վ. Գ. Համբարձումյան*, Հայերեն աստված բառի ծագումն ու տիպաբանությունը: Ե., 2002:

¹⁰ Նման օրինակների մեջբերումը կա՝մ նոր է, կա՝մ նախկինում եղածի, այսպես կոչված, լրացումային առաջադրում է:

¹¹ *Г. А. Меликишвили*, Урартские клинообразные надписи, М., 1960, էջ 427: *И. И. Мецанинов*, Аннотированный словарь урартского (биайнского) языка, Л., 1978: *Ս. Գ. Հմայակյան*, Վանի թագավորության պետական կրոնը, Ե., 1990, էջ 33-38:

վերջինում: Բառը չունի Աճառյանի բառարանը Ջահուկյանըիր աշխատություններում չի անդրադառնում հայ. *հարի* արմատին, և այդ ամենը, թերևս բառի ոչ գրական լինելու (գրավոր աղբյուրներում ավանդված չլինելու) պատճառով:

զ) *Հերհեր* - ուրարտ. *harhar*-ձ «քանդել, ավերել». այստեղ, թերեվս, նաև *քրքիր* «փխրուն», որից՝ *քրքրել*, *հետաքրքիր* և այլն. Ջահուկյանի բերած՝ *խարխար-եմ*, *խարխուլ* և այլն ձևերը, նաև մեր այս ավելացրածը վկայում են, որ պարզ արմատն է ուրարտ. *har*-, որից ենթադրելի է հայ. **քիր*- [**p(h)r-քիր*] արմատ:

դ) *Խուրա* (*խուր-ա*) «(անմշակ՝ հանգստանալու համար մնացած) դաշտ. տարածք» բառը ունենք նոր բարբառներից մի քանիսում (Ալշ., Մուշ, Սս. և այլն). թվում է, որ այն կարելի է համեմատել ուրարտ. *hubi* «հովիտ. դաշտ» բառի հետ՝ ի լրացումն մինչև այժմ եղած տվյալների: Հմմտ. նաև հայ. (բրբռ.) *խորուն* «հանդամաս» (Ալշ., Մշ., տե՛ս նաև Մ. Գալշոյան, «Բովտուն»):

Այդ բառն ունի Եր. Մեղրեցին՝ հետևյալ ձևով. «գուրբայ - հող» (հմմտ. *գաբուրայ* «հող») ¹²: Աճառյանը չունի *խուրա*, այլ բերում է Մեղրեցու օրինակը՝ *գուրբայ* «հող» ¹³: Մենք հակված ենք կարծելու, որ այն ծագումով առնչվում է հայ *հովիտ* (< *հով-իտ*) բառին:

Ջահուկյանը ժամանակին, ինչպես որ Ղափանցյանը, անդրադառնում է ուրարտ. *hubi* (հարցականով՝ «հովիտ», նաև «գավառ», «տարածք») բառին. բառի այդ իմաստի առանձնացմանը թերահավատ են նաև այլ ուսումնասիրողներ ¹⁴: Ջահուկյանը նախ՝ գտնում է, որ «Հայերենը չի պահպանել նաև *հովիտ* բառի համար հնդեվրոպական որևէ անվանում, եթե *գոգ* բառին չվերագրենք նախնական այդպիսի անվանում» ¹⁵: Այնուհետև՝ այս և նման մի խումբ բառերի վերաբերյալ Գ. Ջահուկյանը գրում է. «Իբրև երկրորդ բաղադրիչներ կարող են ծառայել... նաև ոչ հնդեվրոպական *ազարակ*, *աշխարհ* ... *հովիտ*, *քաղաք* բառերը...», այդպես նաև՝ «*hubi* - *հովիտ*»: «Էն արտահայտել է հիմնականում *յու*. *hubi* - *հովիտ* համապատասխանությունը կարող է ուղղակի ուրարտահայկական չլինել (հմմտ. հայ. հավելուրդային -*տ*-ն, որի բնույթը պարզ չէ)». այլն՝ «... քիչ հնարա-

¹² *Երեմիա Մեղրեցի*, Բաղվիրք հայոց, Ե., 1975, էջ 60, 70, նաև 357:

¹³ Հ. Աճառեան, Հայերեն արմատական բառարան, հ. 1, Ե., 1971, էջ 586):

¹⁴ *И. И. Мецанинов*, նշվ. աշխ., էջ 130-131: *М. Л. Хачикян*, նշվ. աշխ., էջ 117:

¹⁵ Գ. Բ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, էջ 258:

վոր է, որ հայ. *հովիտ*-ը անմիջական փոխառություն լինի ուրարտերեն *hubi* «հովիտ» («շրջան» (?)) բառից, և պետք է ենթադրել մի երրորդ աղբյուր». «Եթե հայ. *հովիտ*-ը իրոք կապ ունի ուրարտ. *hubi*-ի հետ, ապա հայերենի *հովիտ* բաղադրիչով տեղանունները (հատկապես գավառանունները) պետք է հիմնականում ուրարտ. շրջանից գան և մասամբ ուրարտ ծագում ունենան. հմմտ. Վասպուրականում՝ *Աղի-հովիտ*, *Արճիշակ-ովիտ*, *Կոզ-ովիտ*, *Կուղան-ովիտ*, Այրարատում՝ *Կոզ-ովիտ*, Մոկքում՝ *Արգաստ-ովիտ*, Ծովքում (Չորրորդ Հայք)՝ *Բալա-հովիտ*»¹⁶:

Իսկ հետագայում հեղինակի բառարանում նշվում է՝ «*հովիտ (ովիտ)*» «ձոր, հովիտ, խոռոչ»: Ծագումն անհայտ է: Թերևս ենթաշերտային բառ»¹⁷: Ոչ միայն նման երկվությունը, այլև բառի բառակազմական-իմաստաբանական լայն ընդգրկումը, մանավանդ հե. վերականգնելի արմատի հետ կապ տեսնելը հիմք են հանդիսանում ուրարտ. *hubi* ձևի առնչությունը հայերենի միջոցով հնդեվրոպական նախաձևին. (առայծմ կարելի է ձեռնպահ մնալ հե. որևէ արմատի նշանակումից)¹⁸:

Ե) Հայ. *սան* «աման. կաթսա» - ուրարտ. *šani* «աման». այս զուգադրությունը տալիս է Ղափանցյանը, այնուհետև Ջահուկյանը բերում է ոչ բնիկ, փոխառյալ [*<* ակկադ. *šannu(m)* «մետաղյա աման կամ գավաթ»] բառերի ցանկում¹⁹: Այսուհանդերձ, կարելի է կարծել, որ այն բնիկ է, ծագում է հե. **sem-no* «շերեփով» հանել՝ վերցնել, հայերենի բառապաշարից անցած ուրարտական արձանագրություններին²⁰:

¹⁶ Այս և նախորդ մեջբերումները տե՛ս նույն տեղում, էջ 413, 430-431, 434, 442-443:

¹⁷ Գ. Բ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, 2010, էջ 466: Ղափանցյանը ժամանակին անդրադառնում է ուրարտ. *hubi* (հարցականով՝ «հովիտ», նաև «գավառ» «տարածք») բառին:

¹⁸ Ջահուկյանը արմատի ծագումը հանգեցնում է հե. **ku(m)b(h)o-* [**keu-*] «թեքել, կորացնել, ճկել. փռս, խոռոչ» ձևին հայ. *խորա* // ուրարտ. *hubi* բառերի արմատի բխեցումը հնդեվրոպական այդ իմաստով նախաձևից, կարծում ենք, համոզիչ չէ: Թերևս անհնարին չէ մտածել, որ հիշյալ բառերին է առնչվում հայ. *խուպան* [*խուպ-ան* (?)] «անմշակ հող» (հմմտ. *խամու խուպան* «վար ու ցանքից դուրս՝ անմշակ վայր») բառը. որ համարվում է «անհայտ ծագման» (Հ. Աճառեան, նշվ. աշխ., հ. 2, էջ 397: Գ. Բ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 342):

¹⁹ Գ. Ա. Ղափանցյան, Հայոց լեզվի պատմություն. հին շրջան, Ե., 1961, էջ 43: Գ. Բ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, էջ 262, 466:

²⁰ Դ. Ե. Джаукян, նշվ. աշխ., էջ 35:

զ) Հայ. *տաշի* «ցնծության ձայն. ձայնարկություն» (հմմտ. *տաշի-տուշի* և այլն) - [խուռ., ուրարտ. *taše-* «նվեր»] (<հե. *dō- «տալ»): Հայ. *տաշի* (բրբռ.-խսկց.) (կրկն. *տաշի-տուշի*) «պարողներին խրախուսելու՝ ոգևորելու բացականչություն» (Ղրբ., նաև Ալշ. և այլն): Ձայնարկական այս բառը, ամենայն հավանականությամբ հին է, այլն բուն կամ նախնական իմաստով կապ ունի «նվիրաբերության» երեվոյթի հետ, և ըստ այդմ, կարելի է ասել՝ «պաշտամունքային» բառ պիտի եղած լինի (ներկայումս՝ «պարողներին ոգևորել նաև նվերներ տալով»։ հարսանիքներին պարողներին կամ նվագաժողովներին դրամ տալով և այլն): Ըստ այդմ նկատենք, որ այն կարելի է առնչել, այսպես կոչված, խուռաուրարտական բառապաշարում տեղ գտած այն բառաձևի հետ, որը գրավոր հիշատակությամբ հանդիպում է ուրարտական Սարդուրի II-ի մի արձանագրության մեջ (տե՛ս YKH, 158³¹)՝ *Կուեռա* աստծու անունից սերված *Կուեռաիտաշե* (= Kuerai-taše) քաղաքանվան մեջ, որի բուն իմաստն է «Կուեռայի նվեր»²¹: Բառի երկրորդ բաղադրիչն է -*taše* [հմմտ. ըստ Մ. Խաչիկյանի՝ ուրարտ. *tāšə* «նվեր», խուռ. *tāžə* (նույնը)]: Նշվում է նաև առանձին քաղաք՝ *Taše* (դարձյալ բուն իմաստով՝ «նվեր») (ն. տ.)²²:

Այնուհետև, թերևս, որոշ վերապահությամբ, այն կարելի է առնչել նաև հայ. *տաժել* «հոգալ. խնամել. սնուցել» բային (հիմքի է տարրով՝ «խոնարհիչ ձայնավոր»): ըստ Գ. Ջահուկյանի՝ *տաժել* բայի «ծագումն անհայտ է»²³: Միաժամանակ եթե բացառենք մեր իսկ ենթադրությունը *տաժ-* արմատի ծագումը հե. *t'ek^[h]- «թեքվել, խոնարհվել» ձևից²⁴:

է) Հայ. *տրոփել* «խփել. տրոփել»։ ըստ Ջահուկյանի՝ «անհայտ ծագման»²⁵: Այն, թերևս, հնչյունական և իմաստային առնչություն

²¹ Հմմտ. Գ. Խ. Սարգսյան, Ուրարտական տերությունը և հայերենը // Բ. Ն. Առաքելյան, Գ. Բ. Ջահուկյան, Գ. Խ. Սարգսյան, Ուրարտու-Հայաստան, Ե., 1988, էջ 86-87: Մ. Լ. Խաչիկյան, նշվ. աշխ., էջ 40, 48 և այլն:

²² Գ. Բ. Ժապկյան, Взаимоотношение индоевропейских, хурритско-урартских и кавказских языков, էջ 9-52: Մ. Լ. Խաչիկյան, նշվ. աշխ., 1985, էջ 40, 48: Ս. Գ. Հմայակյան, Վանի թագավորության պետական կրոնը, Ե., 1990:

²³ Գ. Բ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 718:

²⁴ Հմմտ. Գ. Բ. Գամկրելիձե, Вяч. Вс. Иванов, Индоевропейский язык и индоевропейцы: Реконструкция и историко-типологический анализ праязыка и протокультуры, I, Тбилиси, 1984, էջ 110, 155:

²⁵ Գ. Բ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 737:

ունի ուրարտ. *dur* «ապստամբել (?)», լինել խռովահույզ», խուռ. *durupi* «շփոթ, անկարգություն» (հմմտ. բրբռ. *դուրբ* «զայրալից խփելը, հարվածելը», *դրբբել* «խփել. հարվածել» և այլն. Մուշ. Ալշ. և այլն) (հե. *dhereu-* «հոխարտալ. ձայնը բարձրացնել». հմմտ. հուն. *θόροβος* «աղմուկ, բոբոտ, անկարգություն»)²⁶:

3. Բարբառային նյութի ընդգրկումը:

Վերը կատարված վերլուծության ընթացքում այս կամ այն չափով անդրադարձ եղավ հայերեն բարբառային նյութին: Այստեղ շարունակաբար անդրադառնում ենք հետևյալ օրինակներին՝ ընդգրկելով նաև խուռերենի նյութը:

Հայտնի է, որ հայերենի և խուռերենի ու ուրարտերենի զգալի թվով տվյալներ ուշադրության առարկա են եղել նաև այդ լեզուները կրողների (լայն իմաստով) մշակութային առնչությունների մեջ: Միանգամայն տեղին է Ս. Հմայակյանի այն տեսակետը, թե հայկական մշակույթը, իր հերթին, «նշանակալից էր հատկապես Ուրարտուի պետական կրոնի ու լեզվի, հետևաբար և մտածելակերպի վրա»²⁷:

Բերենք հետևյալ օրինակները.

ա) խուռ. *purli* «տուն» - հայ. *փուռ-ն* «փուռ, կրակարան. օջախ (?)». հմմտ. խեթ. *pir*, *par-n* (հե. **bhu-ro- < *bheu-* [?]. հայ. (բրբռ.) *փուռ-նիկ* (<*փուռ-ն-իկ*) «թոնրի տակ շիկացած կրակին եփվող խմորագնդից թխված մի տեսակ հաց» (Ալշ., Մշ.):

բ) խուռ. *daki* «օջախ» - հայ. *դագ(ա)* «օջախ. Հանդում շինված պատսպարան. տնակ, հոլիկ». (նին.) «օջախ. կրակ» հմմտ. «Աղջի ամոթ է, ներս արի *դագեն*» (Թումանյան) (< հե. **dheg^u-*)²⁸.

գ) ուրարտ. *dir* «համաձայն լինել. զիջել», *diruše* «համաձայնություն. բարեհաճություն», *dera* «ուժ (?)» - հայ. *դիր-(ին)* «հեշտ. դուրին, հավանելի. դուրեկան», (բրբռ.) *դիր (զալ)* «դուրեկան լինել. հավանել». հմմտ. լատ. *frētus* «վստահելի, սպասելի», *firmus* «ամուր, պինդ, ուժեղ» (հե. **dher* «պահել. սատարել»): Ջահուկյանը հայ.

²⁶ Г. Б. Джаукян, Взаимоотношение индоевропейских, хурритско-урартских и кавказских языков, էջ 19:

²⁷ Ս. Գ. Հմայակյան, նշվ. աշխ., էջ 85:

²⁸ Տե՛ս Г. Б. Джаукян, նշվ. աշխ., էջ 19: Հմմտ. «Հայոց լեզվի բարբառային բառարան», հ. Ա., Ե., 2001, էջ 296:

դիւր-ին բառի դիւր- հիմքը համարում է հայերենում «ենթաշերտային կամ փոխառյալ»²⁹:

դ) ուրարտ. չս-հի/ե «կարգավորում» - հայ. (բրբռ.) *սուք* (<*սու-ք*) «կառուցել. կերտել» [գրական՝ *շուք, շքեղ* «(նիսն. իմաստով) կառուցել, կառուցված» (?)], ըստ Ջահուկյանի՝ ուրարտ ձևը չ(ս)- «կարգավորել, ստեղծել, սարքել» բայից՝ -հի/ե գոյականական վերջածանցով³⁰:

ե) իսուռ. *Teššub* «ամպրոպի և անձրևի աստված», ուրարտ. *Teišeba* (?) - հայ. *դի-ք* («աստվածներ». հմմտ. *դից-ազն*). հմմտ. հուն. *Ζεύς* «երկնքի աստված», լատ. *deus* «աստված» (հե. **dhēs-*)³¹: Նախալեզվի համար ներկայումս վերականգնվում է բաղադրյալ **t'iey-* «աստված», որից և մի կողմից՝ **t'ei-* «լույս տալ. փայլել», մյուս կողմից՝ **t'iy-* «օր» (հմմտ. հայ *տիւ* «օր. ցերեկ») ձևացումները³²:

Եզրակացություններ:

1) Մեր այս դիտարկումները, որքան էլ ավանդույթի ուժով համարվեն անհամոզիչ կամ վարկածային, ունեն գուցահեռ օրինականերով եղածի լրացման կամ ճշգրտման նպատակ:

2) Հնարավորության սահմաններում համեմատվող նյութը այսպես թե այնպես առնչվում է հնդեվրոպական հիմք-լեզվի համար վերականգնվող ձևերին, որ նշանակում է ավելի մեծ հավաստիություն այդ նյութի հիմնաշերտի հնդեվրոպական բնույթի վերաբերյալ:

3) Նոր նյութը վերցված է հեղինակին լիովին հայտնի բարբառներից, որոնք այդ տեսանկյունից, կարելի է ասել, ուսումնասիրված չեն:

4) Ստուգաբանական համեմատության մեջ հայերենի և մյուս լեզուների նյութի առավել մեծ չափով ընդգրկման դեպքում սպասելի են նոր հիմնավորումներ:

²⁹ Գ. Բ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, էջ 353:

³⁰ Նույն տեղում, էջ 437:

³¹ Հմմտ. Գ. Բ. *Джаукян*, նշվ. աշխ., էջ 19:

³² Գ. Բ. *Гамкрелидзе*, *Вяч. Вс Иванов*, նշվ. աշխ., էջ 791 և հջ.: Վ. Գ. *Համբարձումյան*, նշվ. աշխ., էջ 19-25: V. G. *Hamardzumyan*, *Armenian and Indo-European: Essays on Comparative lexicology of the Armenian Language (Comparative-typological Variativity)*, Yerevan, 2014, էջ 87-88:

Գրականություն

Աճառեան Հ., Հայերէն արմատական բառարան, հ. 1-2, Ե., 1971-1973:

Երեմիա Մեղրեցի, Բառգիրք հայոց, Ե., 1975:

Համբարձումյան Վ. Գ., Հայերէն աստուած բառի ծագումն ու տիպաբանություն, Ե., 2002:

Հմայակյան Ս. Գ., Վանի թագավորության պետական կրոնը, Ե., 1990:

Ղափանցյան Գ. Ա., Հայոց լեզվի պատմություն. հին շրջան, Ե., 1961:

Ջահուկյան Գ. Բ., Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Ե., 1987:

Ջահուկյան Գ. Բ., Հայերենը և ուրարտերենը // *Բ. Ն. Առաքելյան, Գ. Բ. Ջահուկյան, Գ. Խ. Սարգսյան. Հայաստան-Ուրարտու*, Ե., 1988:

Ջահուկյան Գ. Բ., Հայկական շերտը ուրարտարական դիցարանում // *«Պատմա-բանասիրական հանդես»*, 2000, 1, էջ 124-129:

Ջահուկյան Գ. Բ., Հայերեն ստուգաբանական բառարան, 2010, էջ 466:

Սարգսյան Գ. Խ., Ուրարտական տերությունը և հայերենը // *Բ. Ն. Առաքելյան, Գ. Բ. Ջահուկյան, Գ. Խ. Սարգսյան, Ուրարտու-Հայաստան*, Ե., 1988, էջ 86-87:

Т. В. Гамкрелидзе, Вяч. Вс. Иванов, Индоевропейский язык и индоевропейцы: Реконструкция и историко-типологический анализ праязыка и протокультуры, Тбилиси, I-II, 1984:

Джаукян Г. Б., Урартский и индоевропейские языки, Ереван, 1963:

Джаукян Г. Б., Взаимоотношение индоевропейских, хурритско-урартских и кавказских языков, Ереван, 1967:

Дьяконов И. М., Материалы к фонетике урартского языка // *“Вопросы грамматик и истории восточных языков”*, М.-Л., 1985:8:

Дьяконов И. М., Сравнительно-грамматический обзор хурритского и урартского языков // *“Переднеазиатский сборник”*, М., 1961, с. 369-422:

Дьяконов И. М., Урарту, Фригия, Лидия // *“История древнего мира”*, т. 2, М., 1982:

Меликишвили Г. А., Урартские клинообразные надписи, М., 1960:

Мещанинов И. И., Аннотированный словарь урартского (биайнского) языка, Л., “Наука”, 1978:

Хачикян М. Л., Хурритский и урартский языки, Ереван, 1985:

Hambardzumyan V. G., Armenian and Indo-European: Essays on Comparative Lexicology of the Armenian Language (Comparative-typological Variativity), Yerevan, 2014:

Vrouyr N. E., Répertoire étymologique de l'arménien, dans ses relations avec les langues des pays voisins. Première partie: Accadien, Sumérien, Ourartnen, Hittite, Aramnen, Hébreu, Syriaque, Arabe, Anversm, 1948:

Ключевые слова: Лексический анализ и соотношение между языками разных язык-основ. соответствия между армянским и хурритско-урартскими языками, применение новых материалов армянских диалектов, этимология и генетическая параллель, восстановление корняи сравнение с другими и.-е. языками.

В.Г. Амбарцумян - Лексикологические и этимологические заметки. – Материал армянского и древнехуррито-урартского языков дает возможность провести лексические и этимологические заметки и дополнения. В данной статье мы представляем совпадения таких единиц, пытаюсь рассмотреть их в контексте возможных индоевропейских протоформ.

Keywords: Lexical analysis and correlations between languages of different language-bases. correspondences between Armenian and Hurrian-Urartian languages, application of new materials of Armenian dialects, etymology and genetic parallelism, root recovery, and comparison with other I.E. languages.

V. G . Hambardzumyan - Lexicological and Etymological Reviews. - The material of Armenian and Old Hurrian-Urartian languages provides an opportunity to make lexical and etymological reviews and additions. In this article we present the coincidences of such units, trying to consider them in the context of possible Indo-European protoforms.

ՀԱՅԵՐԵՆԻ «ՈՒՈՉԵԼ» ԱՆՎԱՆՈՒՄԸ ՍՅՈՒՆԻՔ-ԱՐՑԱԽԻ

ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԲԱՌԱՊԱՇԱՐՈՒՄ

Բանասիր. զիտ. թեկնածու Մ. Ս. Քումունց

Հիմնաբառեր: Սյունիք-Արցախի բարբառ. բարբառային բառապաշար, հայերենի «ուռչել» անվանումը, ստուգաբանություն, հնդեվրոպական լեզուներ և հայերենի բարբառներ, բարբառային տարբերակ:

Հայերենի տարածքային տարբերակներից Սյունիք-Արցախի բարբառային բառապաշարում «ուռչել» իմաստով բառերի մեջ առանձին ուշադրության առարկա են այնպիսիները, որոնք հնդեվրոպական մյուս լեզուների հետ ունեն աղերսներ:

Առանձին բառերի, կազմությունների համեմատական քննությամբ փորձել ենք ցույց տալ այդ աղերսները հայերենի տվյալների ընդգրկումով:

Բարբառախումբը *բղ-բ-ունջ* «ուռչել- բարձրանալ (թխվածքի մասին)» իմաստով բառը չունի, բայց կան մի շարք կազմություններ, որոնցից մեկն առնչվում է հ.-ե. **bhēl-* (**bhōl-*) > *բղ-* արմատին¹. *բըխբըխօտել* (<*բըխ-բըխ-օտ-ել*) «1. բողբոջել, 2. բողբոջները ուռչել, 3. ծիլեր արձակել, 4. ճյուղավորվել»: «Ուռչել» իմաստով է գործածվում նաև բարբառախմբի *պոփ* («խմորի գունդ», *պոփ/իլօրել* // *պոփ/իլօրվել* «1. ուռչել, 2. կլորանալ» (<հ.ե. **bhel-* «ուռչել»): Այս և մյուս ձևերը, որ առնչվում են հ.-ե. «ուռչել» իմաստին, մեր քննության նյութ են, որին էլ անդրադառնում ենք հետագա շարադրանքում:

Դեռևս ստուգաբանական քննության կարիք ունի *տըռըզ* արմատը՝ «1. ուռչել, լիքը լցվել, 2. փխր. մեկից նեղանալ, խռոված տեսք ստանալ, 3. փխր. մեծամտել, հպարտանալ» > *տըռոզ* // Արց. *տըկոզ* // *տոռոզ* «ուռած, փքված». հավանաբար այստեղից՝ *տըռոճան* // *տոռոճան* «1. լայնափոր ջրաման, 2. հաստափոր, 3. կլոր հատիկներով լոբու տեսակ, 4. ուռած, մեծ, անճոռնի», *տըռըպըտկիլ*՝ (*տըռ-պտկել* // *տըռըպտկել*) «ուռչել». օր.՝ «... *տըռըպտկել* բառը հայավարիա ... *Տըռըպտկել* բառը հայերեն է, նույնիսկ՝ գրաբար... Դույն այդ *տըռըպտկել* բառը կնշանակի որևէ սնամիջություն, որ ուռել, փքվել

¹ Գ. Բ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, Ե., 2010, էջ115:

է և ուր որ է՝ կպայթի»²: Ս. Մալխասյանը «տռայ» բառը կապում է մարմնի մի մասի հետ, որին հարվածում են իբրև պատիժ» (հմմտ.՝ Վն. *տռճաման, տռճապօզ* «կենդանու հետույքը»)³: Կարծում ենք՝ այս խմբում է ընդգրկվում նաև՝ տուռն «կույտ, շեղջ» բառը: Է. Աղայանը մատենագրական աղբյուրներում հանդիպող *տառա-տռկ* և *տռռն* բառերի քննության դեպքում հանգամանորեն անդրադառնում է հ.-ե. աղերսներ ունեցող ձևերին, որոնք համապատասխանաբար առաջացել են *der- և *ders- հիմքերից և արտացոլված են հայերենի *տեն, տառ, տռռն, տուռն* կամ *տիռն* արմատական բառերում⁴: Դրանք հնչյունական առումով համապատասխանում են քննվող *տ(ը)ռ* բառի հետ, բայց իմաստային աղերսները թույլ են կամ բացակայում են՝ *տեն* «կոշտուկ», *տենել* «կոշտուկ առաջանալ», տոռ «կաշին քերթելը, ճեղքելը»⁵:

Բարբառային տվյալները, ինչպես նաև մատենագրական տեղեկությունները, ստուգաբանական փորձերը հնարավորություն են տալիս առաջ քաշելու հետևյալ կանխավարկածը. բարբառային *տէռ* // *տէր (տըր-աքէլ)* հիմքային տարբերակները ձևով և իմաստով առնչվում են հ.-ե., *tēu-, *təu-, *teuə-, *təō-, *tū- արմատական տարբերակներին, որոնք ընդլայնվել են հ.-ե. *bh, *g, *k, *l, *m, *n, *r, *s, *t մասնիկներով⁶: Հ.-ե. լեզուներում առկա ձևերը և համապատասխան իմաստները արտացոլված են Վալդեի և Պոկորնու բառարաններում (հմմտ. գերմ. schwellen «ուռչել, ուռչել», անգլ. to swell; crowd, folk; fat; strong; boil, abscess «1. ուռչել, ցցվել, ավելանալ, մեծանալ, հպարտանալ, խոժոռել, ուռցնել, փքացնել, աստիճանաբար բարձրացնել, 2. խառնել, խճողել, խուժան, 3. ճնշել, ձանձրացնել, 4. ժողովուրդ, ամբոխ, 5. գեր, պարարտ, ճարպոտ, շահավետ, 6. ապուշ, բթամիտ, 7. զորավոր, ուժգին, տոկուն, հուժկու, ջերմ, կոշտ, 8. եռալ, եփիլ, 9. կրքոտել, թարախակույտ» և այլ իմաստներից լծորդված)⁷:

² Ս. Խանգադյան, Մատյան եղելությանց, Ե., 1966, էջ 14:

³ Ստ. Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան, հ. 4, Ե., 1945, էջ 414:

⁴ Է. Բ. Աղայան, Բառաքնական և ստուգաբանական հետազոտություններ, Ե., 1974, էջ 141-143, 149:

⁵ Նույն տեղում, էջ 141, 149: Ստուգաբանական այլ տվյալներ մեզ հայտնի չեն:

⁶ J. Pokorny, Indogermanisches etymologisches Wörterbuch, I Band, Bern-München, 1959, էջ 1080:

⁷ J. Pokorny, նշվ. աշխ., էջ 1080-1085.

Պետք է նշել, որ նշված մասնիկներով կազմությունները տեղորոշված չեն հնդեվրոպական լեզուներում. բերենք հնդեվրոպական լեզուներում առկա մի քանի բառամիավորներ՝ բարբառախմբում վկայվող օրինակների հետ զուգահեռ անցկացնելու նպատակով՝ հոլ. *dol* «գոդ», մանգլ. *tholen* «գոդանալ», *tholle* «գոդ», գոթ. *thiod-kuning* «պետ, իշխան, թագավոր» (հմմտ.՝ Վն. *տռալ* «գոդ, ավազակ», Մշ. Վն. «ծուլ», Վն. «թագավոր», Վն. *գոդտռալ* «գոդ, ավազակ մարդ»), լատ. *taurus* «ցուլ, ցուլակերպ», *portus* «նավահանգիստ», անգ. *some* «ինչ-որ, ինչ-որ մի մասը (մարմին), ոմն, մեկը», *tumorous* «ուռած, ցցված, փքված», *toreador* «ցլամարտ» (հարվածել իմաստից), ֆր. *truffle* «գետնաստունկ, գերերուկ» (հմմտ. բրբռ. *կյուլիթըէս, արչիթըէս*), հուն. *σῶρος* «կույտ, շեղջ», սանս. *tavas* «ուծգին, հուժկու, հաստատ, կորովի, դիմացկուն, ազդու, ծանր», *tavīti* «հուժկու լինել, ուծգին լինել, ուծգին (հարված, պայթյուն և այլն)»⁸:

Հայերենը, ինչպես կարելի է նկատել բարբառախմբի բառերի քննությունից, ժառանգել է հ.-ե., **təu-*, **teuə-*, **təḍ-*, **tā-* հիմքերի *-*r-* (ո-ր) հավելվածով ձևաիմաստային կազմություններ, որոնց համար կանխադրում ենք **təu-r-*, **tēu-r* հիմքային տարբերակները: Ընդ որում՝ նշենք, որ այս նույն արմատի տարբերակներից են բխեցնում հայ. *թիւ* «թիվ, թվարկել, թվանշան» բառը⁹, վերջինիս վերաբերող ընդգրկուն բառահոդվածում Հ. Աճառյանը, այնուամենայնիվ, առկախ է թողնում ծագման վերաբերյալ կարծիք հայտնելը¹⁰:

Հանդիպում են նաև այնպիսի բառամիավորներ, որոնք, հնարավոր է, միջնորդությամբ են անցել հայերենին. օր.՝ *տրաքել* «պայթել, տրրրըքըցնել» «1. հարվածել, 2. պայթեցնել» բառերը իմաստով ընդհանուր են հնդիրանական ձևերի հետ, բայց հնչյունական առումով տարբեր են, կամ «ուռչել» իմաստով զուգահեռներ նկատվում են հնդեվրոպական լեզուների մեծ մասում, սակայն հնչյունական զանազանությունը դժվարացնում են հայերենին անցած լինելու մասին կանխորոշելը: Եվ այսուհանդերձ, կարծում ենք, որ հայերենը ինքնուրույն է ժառանգել **təu-*, **teuə-*, **təḍ-*, **tā-* ընդհանուր հիմքերով խմբի ձևաիմաստները՝ մասնավորված և ընդգծված *-*r-* կազմիչի զարգացումներով, որոնց մի մասը կա մատենագրական

⁸ Սանսկրիտի ձևերը տե՛ս՝ <https://sanskritdictionary.org/tava>.

⁹ *J. Pokorny*, .նշվ. աշխ., էջ 1080, *Գ. Բ. Ջահուկյան*, նշվ. աշխ., էջ 267:

¹⁰ Հ. Աճառյան Հայերեն արմատական բառարան, հ. 2 Ե., 1973, էջ 186-187:

աղբյուրներում, իսկ մյուս մասը՝ բարբառներում, հատկապես՝ Սյունիք-Արցախի բարբառախմբում:

Սույն ենթադրությունների համար բերենք Սյունիք-Արցախի բարբառախմբի բառապաշարի հաճախական կիրառությամբ օրինակներ, որոնք և՛ հնչյունական, և՛ իմաստային համապատասխանությամբ արտացոլում են հ.-ե. աղերսները՝ *տոռոգ, տըռըզիլ* «1. Այտուցվել, ուռչել՝ փորը, թշերը, գրպանները և այլն, 2. նեղանալ, հոնքերը կիտել, 3. գոռոզանալ, հպարտանալ, 4. հարստանալ», *տըռըզ-ցընէլ* «ուռցնել, փչել, այտուցել», *տըռոզ-տըռոզ* «ուռած, փքված», տըռըզիկ «1. ուռած, 2. նոթոտ, անմարդամոտ, նեղացկոտ», *տըռըզոտէ/իլ* «1. ուռչել, այտուցվել, 2. Մարմնի վրա բշտիկներ առաջանալ, 3. փքվել, գոռոզանալ, 4. հարստանալ, 5. ինչ-որ կարևոր գործից, պաշտոնից փքվել», *տըռտըկի // տըռտընգի (տալ)* «անասունների ուրախ թռչկոտելը», *տըռմըզկվի/էլ* «1. Ջրի մեջ շատ մնալուց թառամել, կնճռոտվել, փափկվել, կակղել, 2. Ջրի մեջ մնալուց ուռչել», տըռընգոց «գոմեշի հանած ձայնը» (?), *տըռամէչ* «անարժեք բան», *տըռըհէր* «անարգական իմաստով» (հմմտ. *քըքըհէր*), *տըէռ* (*տըէռ, տըռասսս* և այլն), *տըռըհաչ // տըռըհաշ* «1. դատարկ, անարժեք, 2. անհոգ», *տըռըհաչ* տալ «1. Շան անտեղի հաչելը, 2. դատարկախոսել, վայրահաչել», տըռըճըժկան «1. վախկոտ, 2. անբան, 3. պոռոտախոս», *թէս // թըէս* «մարմնից գատվող անձայն գազ», այստեղից՝ *թիսի, թիսիվալա* «վախկոտ»¹¹, *տըռըշըրանուկ* (անել) «թափթփված» և այլն¹²:

Ի մի բերելով հ.-ե. արմատները՝ դրանք հնարավոր է բաժանել իմաստային և հնչյունական առանձնահատկություններով խմբերի՝

1. Հ.-ե. բառասկզբի շնչեղի (*t) դիմաց հայերեն շնչեղ *թ*-ով կազմություններ՝ *թըէս* «1. արտանետվող գազ, 2. գարշահոտ», *թըսանէլ* «արհամարհանքով հեռացնել, բանի տեղ չդնել, առանց հաշվի առնելու հեռացնել», *թըսավըէտ, թըսէ/ալ, թըսըմօլի, թըսըվալա // թիսիվալա* «1. վախկոտ, թուլամորթ, 2. լացկան», *թըսթըս // թըսթըս* «նվնվան», *թըսթըսան* «լալկան», *թըսթըսալ* «1. նվնվալ, 2. Դանդաղ աշխատել, 3. լավ չվառվել, 4. թստոցով այրվել, 5. դողալ՝ ցա-

¹¹ Արդյո՞ք առնչություն ունի *թէս (թէայ)* «վախկոտ» բառի հետ, որ Գ. Ջահուկյանը նշում է անհայտ ծագմամբ բառերի շարքում (Գ. Բ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 264):

¹² Դրանք մեծ թիվ են կազմում. կարելի է տեսնել Սյունիք-Արցախի բարբառախմբին վերաբերող բառարաններում, ՂԲԲ, ՀԳԲ:

վից, վախից, ցրտից» և այլն (առկա է նաև բնաձայնական հատկանիշը):

2. Հ.-ե. բառասկզբի շնչեղի (*t) դիմաց հայերեն խուլ տ-ով կազմությունները ձևով և իմաստով առնչվում են սանսկրիտի, զենդերենի, հունարենի, լատիներենի, սլավոներենի, լիտվերենի և իռլանդերենի հետ, միայն իմաստով՝ գոթերենի հետ, ընդ որում այս խումբն, իր հերթին, ներառում է տարբեր իմաստների կրող բառեր, *տոռոգ* «այտուցվել, ուռչել», *տրորզիլ* «նեղանալ», *տրորզիլ* «փքվել, գոռոզանալ», *տրռ* // *տրէռ* «օդ, զազ», *տրռտրնգի*, «թռչկոտել (կենդանիների համար ասված), *տրռմըզկվիլ/ել* «ջրի մեջ շատ մնալուց փափկվել, ուռչել» (հմմտ.՝ հուն. *τῆρος* «1. պանիր, 2. ճգմված, սմբած», *βούτῆρον* «կարագ», ավեստ. *tūiri-* «շիճուկ») և այլն:

3. Հ.-ե. բառասկզբի շնչեղի (*t) դիմաց հայերեն խուլ տ-ով և *-k- (*tə-r-(a)k-, հմմտ.՝ *թան-աք*, *հավ-ա՛ք*) ածանցով¹³ *տրր-ըք* (-աք) «պայթյուն, հարված», այստեղից՝ *տրրաքօ/ուց* «պայթյուն», *տրրըքմանե/ինկյալ* «1. նախանձել, 2. մեկի խոսքից նեղանալ», *տրրըքտրրաքկյալ* «լացել, հեկեկալ», *տրրըքտրրըքօտել* «1. պայթել, անընդմեջ պայթել, 2. հեկեկալ, հարվածներ հասնել», *տրրըքըցնել* «1. պայթեցնել, 2. հարվածել», *տրրըքոց*, *տրրաքուց* «1. պայթյուն, 2. հարված», *հինգտրաքանի* (այսպես նաև՝ *մեկ*, *երկու* և այլն) «հինգ փամփուշտ տեղավորող զենք»: Ըստ Գ. Ջահուկյանի (վերապահումով)՝ այն ծագում է հ.-ե. *der-, *derek- «քերթել, կաշին հանել, պատռել, ճեղքել, պատռել, հանել, անջատել» հիմքից (*dērək-?)¹⁴:

4. Այս խմբում ենք ընդգրկել նաև հայերենի *տառփանք* < *տռփի*¹⁵, *տարփ* «գոտու մեջտեղի ցցուն, ուռած մասը» բառերը, որոնք հնարավոր է առնչակցություն ունենան քննվող հիմնաձևի հետ:

5. Հ.-ե. բառասկզբի շնչեղի (*t) դիմաց հայերեն խուլ թ (հմմտ. *թորշ* արմատի հետ)՝ *թրշ(ը)նակել* «1. ուռչելուց գունատվել, սփրթնել, սփրթնել, ուռչել, այտուցվել», *թրռրշնել* // *թրրթրշնիլ* // *թրռրմօշկել* «1. հարբելուց դեմքը այտուցվել, հարբելուց, բարկությունից դեմքը ուռչել ու կարմրել», այլն՝ «խմորը թթվելուց ուռչել»:

¹³ Ձևով նման և իմաստով մոտ *տէց* «տիկ» բառը (*տէգ շինիլ* «ուռցնել, փքել») բխեցվում է «այծ» (հ.-ե. *dig-) իմաստից, հմմտ.՝ *տըկըզել* «ուռչել, տկոել»:

¹⁴ Գ. Բ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 286:

¹⁵ Գ. Բ. Ջահուկյանը հնարավոր է համարում իրանական ծագումը (ն. տ. , էջ 725):

Այսքանով չեն սահմանափակվում հ.-ե. աղերս ունեցող «ուռչել» անվանման տվյալները Սյունիք-Արցախի բարբառային բառապաշարում: Կան բառեր, որոնք բարբառախմբում չեն պահպանել «ուռչել» հասկացությունը կամ համըմբռնմամբ և լեզվական այլ գործոնների ազդեցությամբ փոխարինվել են այլ իմաստներով, բայց արտաքին հնչյունական կազմից ենթադրվում է նրանց ծագումը, ինչպես, օր.՝ *բամփ* (*բոմփ*) բնաձայն. «հարվածելու, պայթյունի ձայն» բառը ծագմամբ զուգահեռվում է հ.-ե. *baba- «կոհակ, ուռուցք» բառին, որից վկայվում է միայն «ձայն» հասկացությունը (այլև՝ *բոմփել*): Հայտնի է նաև այն, որ, օրինակ, *օռվել*, *օռուսկ*, *օռել* բառերը «ուռչել» հասկացությունը կրել են *or-n- (*er- «շարժել, բարձրացնել») հիմքից:

Մենք վերևում ակնարկեցինք *բըխբըխօտել*, *պնւլ* բառերի հ.-ե. հիմքից հնարավոր ծագման մասին: Սակայն ի մի բերելով բարբառախմբի տվյալները՝ ենթադրում ենք, որ *bhel- «փչել, ուռչել» արմատից բարբառախումբը ձևիմաստային փոփոխություններով ու տարբերակներով շատ հասկացություններ է պահպանել, ինչպես՝ *պըլիթիլ* // *պիլիթիլ* (*b(h)lē- (-տ աճականով)) «ուռչել, այտուցվել, կլորանալ, ուռուցիկ դառնալ» [հմմտ.՝ *բլիթ*], *պըղօճ* // *պըղօրճ* (*b(h)(e)l- (-օճածանցով)) «1. բզեզ, 2. պատիճավոր միջատ (առհասարակ)» *պուլիզ* (*b(h)ul- (-իկ ածանցով)) «կավե փոքրիկ աման, պուլիկ» (հմմտ. *պիլօրնիկ* «ձեթի՝ յուղի կավե փոքրաման»), *պուպու* (*b(h)(e)u- (բառակրկնությամբ՝ առանց l-ի)) «1. Հասնելուց հետո կանաչ կեղևից անջատված ընկույզ» և այլն:

Այս շարքում, որոշ վերապահումով, դնում ենք մի քանի բառեր, որոնց ծագումը մնում է առկախ. *պուպուզ* «ծնկները ծալած և ոտքերի վրա հենված, պպած» [> «կլորանալ» իմաստից՝ (*b(h)u-(k'- աճականով)], *փըմփըխել* // *փըմփըռնել* «ուռչել, տոգել, գիրանալ» [*bhel- (?)], այստեղից՝ *փըմփըռնօտել* - «1. ուռչել 3. փոխ. գոռոզանալ» (բարբառախումբն առանձին ունի *փըքվել* > *փուքս* (<*phu- «փչել»), *փըքփըքօտել* «մորթը այրվելուց տեղ-տեղ ուռչել, փուքեր տալ», *չըռվել* բառի բարբառախմբի իմաստներն են «չոռ հիվանդություն ստանալ, 2. ուռչել, 3. կպչել, ձուլվել, միանալ, 4. մարդու վերջույթները ծովել, փայտանալ» [թ>չ (?)]:

Այս աշխատանքից դուրս են մնացել «ուռչել» անվանում նշանակող այն բոլոր միավորները, որոնք այլ կազմությունների փոխա-

բերումից կամ հարադրումից են ձևավորվել, ինչպես՝ *յըէրքըցիլ* «ուռչել» և այլն:

Այսպիսով՝ նկատում ենք, որ Սյունիք-Արցախի բարբառախմբի բառապաշարի «ուռչել» անվանում նշանակող բառերի մեծ մասը աղերսներ ունի հնդեվրոպական ժառանգության հետ: Ժամանակի ընթացքում դրանք տարբեր փոփոխությունների են ենթարկվել արտաքին և ներքին շփումների, փոխազդեցությունների հետևանքով: Այդուհանդերձ, առանձնացված և հնդեվրոպական առնչակցություններ ընդգծող տվյալները վկայում են, որ Սյունիք-Արցախի բարբառը հազարամյակներ անընդմեջ գործառել է բնօրրանում, պահպանել հատկապես բառային այն շերտը, որ հիմք է հանդիսացել ոչ միայն հայերենի տվյալ բարբառախմբի, այլև ընդհանուր մշակութային առաջընթացի:

Գրականություն

Խանգաղյան Ս., Մատյան եղելությանց, Ե., «Հայաստան» հրատ., 1966:

Մալխասեանց Ս., Հայերեն բացատրական բառարան, հ. 4, Ե., Հայպետհրատ., 1945:

Ջահուկյան Գ. Բ., Հայերեն ստուգաբանական բառարան, Ե., «Աստղիկ» հրատ., 2010:

Pokorny J., Indogermanisches etymologisches Wörterbuch, II. Band, Bern-München, 1959.

<https://sanskritdictionary.org/tava>.

Ключевые слова: Сюникско-арцахский диалект, диалектная лексика, этимология, индоевропейские языки, армянские диалекты, диалектный вариант.

М. С. Кумунц -Индоевропейское наименование «распухать» в лексике Сюникско-арцахского диалекта армянского языка. - В лексике Сюникско-Арцахских диалектов много слов, имеющих индоевропейские отношения по форме и значению. В этом смысле особый интерес представляет группа слов, выражающая понятие «распухать».

В основном они имеют индоевропейское происхождение; *bhēl-, *ders-, * təu-: их армянские диалектные варианты *բըխբըխտել* [bəxəxotēl], *պնլօրել* [pülörēl], *տըռըզ* [təřəz], *տըրաքել* [tərakēl] и т. д.

В данном исследовании этимологический эксперимент с этими словами проводится путем выделения семантико-фонетических признаков.

Наличие индоевропейских слов в лексике доказывает, что сюникско-арцахский диалект существует на нынешней территории около пяти тысяч лет и считается одним из крупнейших диалектов в регионе.

Keywords: Syunik-Artsakh dialectal vocabulary, etymology, Indo-European languages, Armenian dialects, dialectal variants.

M. S. Kumunts - Indo-European Concept “swell” in Syunik-Artsakh Dialectal Vocabulary of Armenian Language.

In Syunik-Artsakh dialectal vocabulary contains many words have with Indo-European relations in form and meaning. In this sense, a group of words expressing the concept “swell” is of particular interest.

These words originated from Indo-European bases *bhēl-, *ders-, *təu-: their Armenian dialectal variants բռխբռխոտել [bəxbəxotēl], պլլօրել [pülörēl], տրոր [təɾəz], տրաքել [təɾakēl] etc. In this study the etymological experiment of these words is done by dividing the semantic-phonetic features.

The presence of Indo-European words in the vocabulary indicates that the Syunik-Artsakh dialect has existed in the area for about five thousand years and is considered one of the largest dialects in the region.

ԴԵՐԱՆՎԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԳՐԱԿԱՆ

ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆՈՒՄ

(Դերանունը որպես առանձին խոսքի մաս, դերանվան

ներխոսքիմասային դասակարգումը)

Բանասիր. գիտ. դոկտոր Յու. Ս. Ավետիսյան

Հիմնաբառեր: Դերանուն, առանձին խոսքի մաս, ավանդական հիմունք, ընդհանրական, անմիօրինակություն, գոյական դերանուն, ածական դերանուն, թվական դերանուն, մակբայ դերանուն:

Մուտք: Դերանուն համարվող բառերի ուսումնասիրությունը մշտապես ուղեկցվել է բանավեճերով ու տարակարծություններով¹⁶: Եվ դա իր հերթին դժվարություններ է ստեղծել այդ բառերի ուսուցման և դասավանդման գործում: Երբ բավարար չափով հստակեցված չեն նյութի ուսումնասիրության սկզբունքներն ու մոտեցումները, դժվար է լինում նաև այդ նյութի ուսուցման մեթոդներն ու ձևերը մշակելը: Բոլոր դեպքերում, տարակարծությունները առիթ են տալիս փնտրտուքների, ուսումնասիրության և ուսուցման առավել արդյունավետ ուղիներ որոնելուն:

Եթե նույնիսկ մի կողմ թողնենք հարցի պատմական արծարծումները, միևնույնն է, ակնհայտ է, որ նոր ժամանակներում էլ, սկսած նախորդ դարի կեսերից, և՛ նյութի ուսումնասիրության մեջ, և՛ հանրակրթական ու բուհական համակարգերում դրա ուսուցման մեջ գերիշխող են եղել ավանդական մոտեցումները: Խոսքը վերաբերում է ինչպես դերանվան խոսքիմասային նկարագրությանը, այնպես էլ նրա ներխոսքիմասային դասակարգումներին:

Դերանունը որպես առանձին խոսքի մաս:

¹⁶ Տե՛ս Ս. Այտընեան, Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզուի, Վիեննա, 1866: Գ. Սևակ, Խոսքի մասերի ուսմունքը, Եր., 1939: Ս. Աբրահամյան, Արդի հայերենի դերանունները, Ե., 1956: Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Եր., 1974: Ս. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, գիրք Բ, Եր., 1973: Հ. Հարությունյան, Ածական անուն: Դերանուն, Եր., 1976 և այլն:

Կարծում ենք՝ դերանունը առանձին խոսքի մաս համարելու տեսակետը համոզիչ փաստարկումներ ունի ինչպես զուտ գիտական տեսանկյունից, այնպես էլ նյութը հեշտ ուսուցանելու առումով:

Հայտնի է, որ դերանունները չունեն այնպիսի ընդհանուր հատկանիշ, որով հնարավոր լիներ դրանք տարբերակել այլ խոսքի մասերից:

Իմաստի տեսակետից դերանունները ցույց են տալիս և՛ առարկա (ես, դու, ինքը, սա, միմյանց), և՛ առարկայի հատկանիշ (այսպիսի, այս, ուրիշ, այլ), և՛ գործողության հատկանիշ (այսպես, այդչափ, որտեղ, երբ): Դրանով պայմանավորված՝ դերանուններն ունեն նաև *ձևաբանական և շարահյուսական բազմազանություն*: Դերանունների մի մասը հոլովվում է, մի մասը չի հոլովվում, մյուս մասը հոլովվում է փոխանվանաբար գործածվելիս, նախադասության մեջ կատարում են ամենատարբեր պաշտոններ, որ բնորոշ են գոյականին, ածականին կամ մակբային նա: Այս անմիօրինակությունն է պատճառը, որ դերանունը առանձին խոսքի մաս դիտարկելու հարցը եղել է վեճերի առարկա: Բայց, այս ամենով հանդերձ, ինչպես վերն ասացինք, դերանունը առանձին խոսքի մաս դիտարկելը ունի և՛ տեսական, և՛ մեթոդաբանական համոզիչ հիմնավորումներ:

Դերանունը համարվում է կամ կարելի է համարել առանձին խոսքի մաս հետևյալ հիմնական տարբերակիչ հատկանիշներով.

1) Դերանուն համարվող բառերը կատարում են այլ խոսքի մասերին փոխարինող դեր: Սա պայմանավորված է նրա իմաստային հատկանիշներով: Բայց հայերենում կան փոխարինող նաև այլ բառեր: Օր.՝ Նունեն և Աննան սովորում են երկրորդ կուրսում. *երկուսն* էլ գեղեցիկ են: Քաղեց կարմիր և սպիտակ մեխակներ. *սպիտակները* նվիրեց ընկերուհուն: Ընդգծվածները փոխարինում են համապատասխան գոյականներին՝ փոխարինող բառեր են, բայց, ի տարբերություն դերանունների, չունեն ընդհանրական իմաստ և դերանուններին բնորոշ մյուս հատկանիշները, որոնք բերվում են ստորև:

2) Ի տարբերություն հարաբերակից խոսքի մասերի՝ դերանունները ոչ թե անվանում կամ նշանակում են առարկա, առարկայի հատկանիշ կամ հատկանիշի հատկանիշ, այլ *ցույց են տալիս*: Ցուցականությունը բնորոշ է բոլոր դերանուններին: *Շու* դերանունը

ցույց է տալիս խոսակից, **այս** դերանունը՝ խոսողին մոտ առարկա կամ առարկայի հատկանիշ են:

3) Դերանունները ցույց են տալիս առարկա ևն որոշակի դիմային կամ տարածական կամ մասնական հարաբերությամբ: Առաջին դեպքում դա բնորոշ է միայն այն դերանուններին, որոնք ունեն շարքեր՝ *ես, դու, նա; սա, դա, նա; այս, այդ, այն; այստեղ, այդտեղ, այնտեղ* և այլն: Տարածական իմաստ ասելով՝ հասկանում ենք այն, որ ցույց են տալիս խոսողին, խոսակցին կամ մեկ ուրիշին մոտ կամ իբրև այդպիսին գիտակցվող առարկա, հատկանիշ են: Ժամանակային հարաբերության իմաստ են արտահայտում, եթե գործածվում են ժամանակ ցույց տվող բառերի հետ: Մասնական հարաբերության իմաստ են արտահայտում որոշյալ, անորոշ կամ ժխտական դերանունները՝ *որոշ. մի, մեկնումեկը, ինչ-որ, մեկը, յուրաքանչյուրը, ոչ ոք, մի քանի* և այլն: Բայց հարաբերության իմաստ են արտահայտում նաև այլ բառեր, օր.՝ *առաջին, երկրորդ, երրորդ; շատ, քիչ; վերև, ներքև; նախ, հետո, ապա* և այլն: Սրանք էլ չունեն ընդհանրական իմաստ և դերանուններին հատուկ մյուս հատկանիշները, որոնք նշվում են այստեղ:

4) Դերանուններն ունեն ընդհանուր, չտարբերակված իմաստ: Այդպիսի իմաստ ունեն նաև այլ բառեր՝ *բազմաթիվ, ամբողջովին, լիովին, բյուր, բազմաբյուր, բան, մարդ* և այլն: Բայց սրանք էլ չունեն դերանուններին հատուկ մյուս հատկանիշները՝ ցուցականությունը, անվան դեր կատարելը, հարաբերության իմաստը ևն:

Դերանունները բնութագրող այս կամ այն հիմնական հատկանիշը, ինչպես նկատեցինք, բնորոշ է նաև այլ խոսքի մասերի մեջ մտնող բառերին, սակայն, ինչպես տեսանք, նշված հատկանիշները, ամբողջությամբ վերցված, բնորոշ են հենց միայն դերանվանը: Ասել է թե՛ դերանուն համարվող բառերը, ինչպես և մյուս խոսքի մասերը, ունեն միայն իրենց բնորոշ խոսքիմասային ընդհանուր հատկանիշներ:

Այսպիսով՝ դերանունները ցույց են տալիս առարկա, առարկայի հատկանիշ և հատկանիշի հատկանիշ ընդհանուր, չտարբերակված ձևով, ունեն դիմային կամ տարածական հարաբերության իմաստ:

Դերանունը առանձին խոսքի մաս համարելը, ինչպես ասացինք, ունի հիմնավորումներ նաև ուսուցման տեսակետից: Դերանուն համարվող բառերը առանձնակի քննարկման առարկա դարձ-

նելով՝ մենք հնարավորություն ենք ունենում շատ ավելի հանգամանակից և համակարգված դարձնելու ուսուցումը. հնարավոր է դառնում ըստ խոսքիմասային հիմունքների նկարագրել դերանունը և ավելի ճանաչելի դարձնել դերանուն համարվող բառերը, մինչդեռ այլ խոսքի մասերի մեջ տարրալուծելիս դրանք կորցնում են իրենց խոսքիմասային տարբերակիչ գծերը, մի տեսակ ձուլվում են մյուս խոսքի մասերի մեջ և դժվարությամբ են մտապահվում աշակերտի կամ ուսանողի կողմից: Բացի այդ, հարաբերակից խոսքի մասերի (գոյական, ածական, մակբայ, թվական) համակարգերը, որոնցում տեղաբաշխվում են դերանվան նշանակություն ունեցող բառերը¹⁷, չունեն ներխոսքիմասային այդպիսի այլ մանրահամակարգեր, և հետևաբար գոյական, ածական, թվական կամ մակբայ դերանունների առանձնացումը խաթարում է համակարգայնությունը, և նյութը դժվար է տրվում յուրացման:

Դերանունների տեսակներ. ներխոսքիմասային դասակարգում: Ե՛վ բուհական, և՛ դպրոցական ներկա դասագրքերում դերանունը ավանդույթի ուժով ներկայացվում է ընդունված ներխոսքիմասային դասակարգմամբ՝ իմաստային տարատեսակ հատկանիշներով կատարված դասակարգումներով՝ անձնական, ցուցական, հարցա-հարաբերական ևն: Նախ՝ այսպիսի դասակարգումը չունի գիտական բավարար հիմնավորվածություն: Եվ հետո՝ այդ նույն պատճառով դերանվան տեսակների ուսուցումն ու նյութի յուրացումը դժվարություններ է ստեղծում՝ հաճախ ստիպելով պարզապես սերտողաբար յուրացնել մատուցվող նյութը:

Գիտական հիմնավորվածության մասին: Ցանկացած դասակարգում, որպեսզի լինի գիտական, պետք է կատարվի *մեկ միասնական սկզբունքով կամ հիմունքով*: Եվ ահա, դերանվան տեսակները քննելիս տեսնում ենք, որ պահպանված չէ այդ սկզբունքը: Օր. հարցական և հարաբերական դերանուններից առաջինները դասակարգվում են ըստ *հարցական հնչերանգի* (ի դեպ, այդ հնչերանգով կարող են արտաբերվել նաև մյուս դերանունները), իսկ հարաբերականները՝ շարահյուսական հիմունքով կամ դերով. հարաբերականները, ի տարբերություն հարցականների, կարող են իրար կապել բարդ նախադասության բաղադրիչ նախադասություններ. այս-

¹⁷ Տե՛ս Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, Ե., 1965: Ֆ. Խլղաթյան, Լ. Խաչատրյան, Հայոց լեզու-7, Ե., 2006:

պես՝ *Ե՞րբ* է գալու (հարց.): *Երբ* գա, կգնանք (հրբ.): Չգիտեմ՝ *երբ* է գալու (հարց.): Կամ՝ ժխտական դերանունները խմբակարգված են ըստ ժխտման հատկանիշի. ժխտում են առարկա, հատկանիշ կամ հատկանիշի հատկանիշ: Փոխադարձ դերանունների որոշման հիմքում դրված է փոխադարձաբար իրար կապված առարկաներ ցույց տալու հատկանիշը են:

Գիտական դասակարգման մեջ դասակարգվող կոդները պետք է բացառեն միմյանց: Դերանունների տեսակավորման մեջ պահպանված չէ նաև այս սկզբունքը: Օր.՝ անձնական դերանունների մեջ խմբավորված են անձ ցույց տվող ոչ բոլոր դերանունները. անձնանիշ են նաև՝ *ամեն ոք, ոչ ոք, ամենքը, ոմանք, յուրաքանչյուր ոք* են: Այս դերանունների վերաբերյալ գործածում են երբեմն նաև *դիմայինդերանուններ* տերմինը (որը, ի դեպ, ավելի ստույգ կարտահայտեր տեսակի նշանակությունը), բայց ավանդաբար գործածության մեջ է եղել *անձնական* անվանումը, քանի որ տերմինների փոփոխությունը գիտական գրականության մեջ չի խրախուսվում:

Եվ վերջապես, քերականագիտական ցանկացած դասակարգում պետք է ունենա լեզվական-քերականական արժեք, այսինքն՝ առանձնացվող քերականական խմբերը պետք է ունենան ընդհանուր քերականական հատկանիշներ, ուստի և բնութագրվեն ըստ այդ հատկանիշների: Մինչդեռ ավանդական դասակարգմամբ առանձնացված խմբերը՝ անձնական, ցուցական, հարաբերական են, չեն առանձնանում բնորոշ քերականական հատկանիշներով: Այսպես՝ ցուցական դերանունների մի մասը ցույց է տալիս առարկա (սա, դա, նա), մի մասը՝ առարկայի հատկանիշ (այս, այդ, այն, այսպիսի, այնպիսի), մի մասն էլ՝ գործողության հատկանիշ (այսպես, այդպես, այսքան, այդքան), մի մասը հոլովվում, հոգնակի է կազմում, մյուս մասը չի հոլովվում, հոգնակի չի կազմում, իսկ մի մասն էլ հոլովվում է դերանվանական հոլովմամբ, ցուցական դերանունները ունեն շարահյուսական անմիօրինակ կիրառություններ՝ ենթակա, խնդիրներ, որոշիչ, պարագաներ են:

Տարաբնույթ իմաստների կամ շարահյուսական դերի և կամ այլինչ հատկանիշների հիմամբ կատարված դասակարգումը, որով առանձնացվում են դերանունների անձնական, ցուցական, որոշյալ և այլ տեսակներ, հնարավորություն չեն տալիս համակարգված նկարագրելու դերանունների այդ տեսակները: Այդ նկարագրությունը իրականացվում է անհամակարգ ու խառը սկզբունքներով՝

կա՛մ ըստ կազմության («Սկզբից վերլուծենք պարզ արմատական ցուցականների արտահայտած իմաստները¹⁸»), կա՛մ ըստ ձևաբանական և շարահյուսական հատկանիշների (ինչպես, օրինակ՝ փոխադարձ դերանունները), կա՛մ, օրինակ, ըստ «առանձին-առանձին կամ խմբերով՝ վերջին դեպքում նկատի ունենալով հարցական դերանունների մեջ մտնող որոշ բառերի իմաստային ընդհանրությունն ու շարահյուսական կիրառությունների նույնությունը»¹⁹, և կա՛մ պարզապես ըստ շարահյուսական կիրառության՝ մեկ էջի հասնող օրինակներով²⁰: Ի դեպ, այս դասակարգմանը հետևող լեզվաբաններից Մ. Ասատրյանը խիստ վերապահորեն է դիտարկում հարցը և դերանունները դասակարգելիս պարզապես ապավինում է ավանդական տեսակետին: Դերանունների նույն այդ տեսակներում նա այնուամենայնիվ առանձնացնում է «իսկական դերանուններ»՝ դերանուններին հատուկ քերականական հատկանիշները վերագրելով միայն այդ բառախմբերին. «... անժխտելի է նաև այն, որ դերանվան մեջ մտցվող առանձին բառախմբեր,- գրում է նա,- իրենց յուրահատուկ քերականական հատկանիշներով տարբերվում են բառերի մյուս բոլոր խմբերից: Դրանք են հատկապես անձնական, փոխադարձ, ցուցական և հարցական-հարաբերական դերանունները: Ըստ երևույթին հենց այդ բառերն էլ կազմում են ժամանակակից հայերենի «իսկական» դերանունները»²¹: Դերանուն համարվող մյուս բառախմբերը լեզվաբանը փաստորեն հակված է դերանուն չհամարելու:

Այսպիսով՝ դերանունների ներխոսքիմասային դասակարգման գործող համակարգը խոցելի է, չունի գիտական բավարար հիմնավորվածություն: Եվ ահա այդ իսկ պատճառով դերանվան այս դասակարգմամբ ուսուցումը հաճախ դժվար է լինում հաջողությամբ իրականացնել, քանի որ հստակ չեն գծվում սահմաններն ու հիմքերը, նյութի յուրացումը անորոշ ու տարտամ որակներ է ստանում: Հետևաբար և՛ զուտ գիտականորեն, այսինքն՝ նյութի գիտական ուսումնասիրության առումով, և՛ դրա ուսուցումը հաջող կազմակերպելու տեսակետից դերանունների ներխոսքիմասային դա-

¹⁸ Տե՛ս Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու. ձևաբանություն, Ե., 1983, էջ 185:

¹⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 191-192:

²⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 196-197:

²¹ Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, գիրք Բ, Ե., 1973, էջ 124-125:

սակարգումը պետք է իրականացվի գիտական և մեթոդաբանական հստակ ու համոզիչ սկզբունքներով:

Կարծում ենք՝ դերանունները դասակարգելիս ճիշտ կլինի առաջնորդվել հետևյալ մոտեցմամբ. քանի որ բառերի ձևաբանական և շարահյուսական հատկանիշները գերազանցապես պայմանավորված են նրանց արտահայտած ընդհանուր քերականական իմաստներով, ուստի դրանք պետք է դասակարգել ըստ այդ հատկանիշի, այսինքն՝ նախ՝ ի՞նչ են ցույց տալիս դերանվան տեսակները: «Առաջին հայացքից սա նույնպես կարող է թվալ ոչ լեզվական հիմունք,-գրում է Հ. Հարությունյանը,-սակայն դերանունների քերականական յուրահատկությունների քննությունը ցույց է տալիս, որ առայժմ միակ ճիշտ մոտեցումը սա է, որովհետև բառի (նույնը և դերանվան) ձևաբանական ու շարահյուսական առանձնահատկությունները պայմանավորվում են ընդհանուր իմաստով: Քանի որ դերանուններն ունեն չտարբերակված իմաստ, այսինքն՝ ընդհանուր կերպով ակնարկում են առարկա, առարկայի և գործողության հատկանիշ՝ արտահայտելով գոյականի, ածականի, թվականի, մակբայի ընդհանուր իմաստ, ուստի և դասդասումը պետք է կատարել ըստ այդ առանձնահատկության, հարաբերակցության: Դրանով գոնե մասամբ կվերանա քերականական, մասնավորապես ներտեսակային անմիօրինակությունը, որ ունեն նույն տեսակի մեջ դասվող դերանունները»²²:

Դերանուն համարվող բառերի՝ *ինչ ցույց տալու* հատկանիշը, սակայն, խոսքիմասային դասակարգման անհրաժեշտ, բայց ոչ բավարար հիմունք է: Իրենց խոսքիմասային հատկանիշներով դերանուն համարվող բառախմբերը շատ որոշակի հարաբերության՝ կապի և առնչակցության մեջ են անուն խոսքի մասերի հետ (բացառությամբ բայ անուն խոսքի մասի), բնութագրվում են համապատասխան խոսքի մասերի ընդհանուր հատկանիշներով: Եվ հետևաբար, դասակարգելիս պետք է հաշվի առնել, թե այդ բառախմբերը հատկապես որ խոսքի մասերին են հարաբերակից: Քանի որ դրանով պայմանավորված՝ դրանք դրսևորում են որոշակի քերա-

²² Հ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 70: Այս տրամաբանությամբ՝ Հ. Հարությունյանը առանձնացնում է դերանունների երեք տեսակ՝ *առարկայանիշ* կամ *գոյական դերանուններ*, *ածականանիշ* կամ *ածական դերանուններ* (այս խմբի մեջ դասում է նաև քանակական իմաստ ունեցող *թվական դերանունները*), *մակբայանիշ* կամ *մակբայ դերանուններ* (նույն տեղը, էջ 71-72):

կանական վարքագիծ, որով հենց բնութագրվում են իբրև առանձին տեսակներ կամ խմբեր:

Այսպիսով՝ դերանունների ներխոսքիմասային դասակարգումը պետք է կատարել ըստ արտահայտած ընդհանուր իմաստների և անուն խոսքի մասերի նկատմամբ ունեցած հարաբերության:

Եվ ըստ այդմ՝ դերանունները կարելի է բաժանել հետևյալ տեսակների.

1) *Առարկայանիշ կամ գոյական դերանուններ.* ցույց են տալիս առարկա և հարաբերակից են գոյական խոսքի մասին, ինչպես՝ *ես, դու, նա, ինքը, միմյանց, իրար, մեկմեկու, ոչ ոք, ոչինչ, ամեն ինչ, ումնէ, ումնիցե, ամենքը, ոչ մեկը, մեկը, ովնէ, ոմանք* և այլն:

2) *Ածականանիշ կամ ածական դերանուններ.* ցույց են տալիս առարկայի որակային կամ հարաբերական հատկանիշ, հարաբերակից են ածական խոսքի մասին, ինչպես՝ *այս, այդ, այն, այսպիսի, այդպիսի, այնպիսի, որ, ուրիշ, այլ, ամենայն, համայն, ողջ, ամբողջ, այսինչ, ինչ-որ, ոմն, ինչ-ինչ, ոչ մի, մի քանի, մյուս* և այլն:

3) *Թվականանիշ կամ թվական դերանուններ.* ցույց են տալիս առարկայի քանակային հատկանիշ, հարաբերակից են թվական խոսքի մասին, ինչպես՝ *այսքան, նույնքան, այսչափ, այդչափ, որքան, ինչքան, ինչչափ, որերորդ, քանիերորդ, մի քանի, քանի* և այլն:

4) *Մակբայանիշ կամ մակբայ դերանուններ.* ցույց են տալիս գործողության հատկանիշ, հարաբերակից են մակբայ խոսքի մասին, ինչպես՝ *այսպես, այդպես, ե՞րբ, ո՞ւր, ինչպե՞ս, ուրնէ, ուրնիցե, ինչո՞ւ, երբնիցե, որտե՞ղ* և այլն:

Դերանունների ներխոսքիմասային մեկ այլ դասակարգմամբ՝ առանձնացվում են *առարկայանիշ* և *հատկանշանիշ* դերանուններ՝ այս անվանումների տակ հստակ տեղաբաշխելով գոյական (առարկայանիշ) և ածական, թվական, մակբայ դերանունները²³: Վերջինները ունեն իրենց տարատեսակությունները՝ գործողության հատկանիշ (մակբայ) և առարկայի հատկանիշ (ածական և թվական) մատնանշող դերանուններ: Մեր խորին համոզմամբ՝ նախորդ դասակարգումը շատ ավելի մեծ հնարավորություն է տալիս նյութի համակարգված ուսուցման, քանի որ առանձնացված տեսակները պարզ համադրության մեջ են հայտնվում իրենց հարաբերակից խոսքի մասերի հետ, և հետևաբար ենթադրվում է, որ բնութագրը-

²³ Ա. Մարգարյան, Հայոց լեզվի քերականություն. ձևաբանություն, Ե., 2004, էջ 280:

վում են հենց այդ խոսքի մասերի քերականական հատկանիշներով: Դա են հուշում նաև հենց տեսակների անվանումները՝ գոյական, ածական ևն: Երկրորդ դասակարգման մեջ նշված երկու գործոններն էլ հստակ չեն գծագրվում և մի տեսակ միջնորդավորված են բնութագրում տեսակները: Այդ իսկ պատճառով, կարծում ենք, նախապատվությունը պետք է տալ հարաբերակից խոսքի մասերի հետ ունեցած հարաբերությամբ և այդ խոսքի մասերի անվանումներով դասակարգմանը՝ գոյական դերանուն, ածական դերանուն, մակբայ դերանուն և թվական դերանուն:

Այս մոտեցումը նշանակում է նաև դերանունների առանձնացված տեսակների քերականական բնութագրությունը ներկայացնել ըստ հարաբերակից խոսքի մասերը բնութագրող հատկանիշների: Ըստ որում, ընդհանուր հատկանիշներից շեղումները նպատակահարմար է տալ ծանոթագրությունների ձևով, և դա վերաբերում է տեսակների նաև ընդհանուր դրսևորումներին, այնպես, ինչպես արվում է հիմնական խոսքի մասերը բնութագրելիս:

Ամփոփում: Դերանվան ոչ միայն ուսումնասիրության, այլև ուսուցման հարցում զգալի են տարակարծություններն ու տարակերպ մոտեցումները: Այդ խոսքի մասի ներքին դասակարգման և դերանունների ուսուցման մեջ ընդունված մեթոդաբանությունը և ավանդական մոտեցումները այսօր կարծես վերանայման կարիք ունեն: Ելնելով հայ լեզվաբանության մեջ դերանունների ուսումնասիրության և նկարագրության հարուստ փորձից՝ այս հոդվածով փորձեցինք ներկայացնել դերանուն խոսքի մասի և նրա տեսակների դասակարգման և դրանց ուսուցման հնարավոր հարմար կամ նախընտրելի տարբերակը բուհական կրթության ոլորտում, մասնավորապես՝ բանասիրական ֆակուլտետներում:

Գրականություն

Աբրահամյան Ս., Արդի հայերենի դերանունները, Ե., 1956:

Աբեղյան Ս., Հայոց լեզվի տեսություն, Ե., 1965:

Այտընեան Ա., Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, Վիեննա, 1866:

Ասատրյան Ս., Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, գիրք Բ, Ե., 1973:

Ասատրյան Ս., Ժամանակակից հայոց լեզու. ձևաբանություն, Ե., 1983:

Խլղաթյան Ֆ., *Խաչատրյան Լ.*, Հայոց լեզու-7, Ե., 2006:

Հարությունյան Հ., Ածական անուն: Դերանուն, Ե., 1976:
Մարգարյան Ա., Հայոց լեզվի քերականություն. ձևաբանություն, Ե., 2004:
Ջահուկյան Գ., Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Ե., 1974:
Մուսկ Գ., Խոսքի մասերի ուսմունքը, Ե., 1939:

Ключевые слова: местоимение, отдельная часть речи, традиционный, основной, общий, неоднородный, существительное-местоимение, прилагательное-местоимение, числительное-местоимение, наречие-местоимение.

Ю. С. Аветисян - Основные проблемы обучения местоимений в литературном армянском языке (Местоимение как отдельная часть речи. Внутренняя частиречная классификация местоимений). - Изучение местоимений всегда было предметом дискуссий и дебатов. А это, в свою очередь, создавало трудности в преподавании этих слов. Традиционные подходы к внутренней классификации частей речи, методология, принятая в преподавании местоимений, нуждаются в пересмотре. Основываясь на богатом опыте изучения и описания местоимений в западноармянском языкознании, в данной статье представлена возможная модификация местоимения и классификация его типов с учетом педагогического подхода. Общий вывод заключается в том, что грамматическое и структурное описание местоимений должно быть представлено в соответствии с признаками, характеризующими части относительного слова.

Keywords: pronoun, a separate part of speech, traditional, basic, general, non-uniformity, noun-pronoun, adjective-pronoun, numeral-pronoun, adverb-pronoun.

Yu. S. Avetisyan - Teaching Lexical Eastern Armenian. Pronouns as a Separate Part of Speech, Classification of Pronouns. - The study of pronouns has always been expressions for discussion and debate. And this, in turn, has created difficulties in teaching those words. The traditional approaches to the internal classification of parts of speech, the methodology adopted in the teaching of pronouns, need to be revised. Based on the rich experience of the study and description of pronouns in Western Armenian linguistics, this article presents a possible modification of pronouns and classification of its types with a pedagogical approach. The general conclusion is that the grammatical and structural description of pronouns should be presented according to the features that characterize the parts of the relative word.

ՏԵՔՍՏԻ ԿԱՊԱԿՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ

ՀՈՒՇԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Բանասիր. գիտ. թեկնածու Ա. Գ. Բարսեղյան

Հիմնաբառեր: Տեքստ. տեքստի բաղադրիչներ. հենք, միջուկ, կապակցման միջոցներ, հուշագրությունը որպես տեքստ. հուշագրական երկի տեքստային առանձնահատկությունները:

Տեքստի լեզվաբանությունը գիտական համեմատաբար նոր ուղղություն է, որն ունի իր ուսումնասիրության առարկան և սկզբունքներն ու մոտեցումները: Մասնագիտական գրականության մեջ հայտնի է հետևյալ ընդհանուր սահմանումը. «Տեքստը համակարգված կառուցվածքային բարձրագույն ձև է, որ բովանդակում է հաղորդում աշխարհի մի հատվածի վերաբերյալ, կազմված է հեղինակի մտահղացումով, ունի կառուցվածքային (կոմպոզիցիոն), իմաստաբանական և գործաբանական (պրագմատիկ) միասնություն, վերամշակված է ըստ լեզվի գործառական և ոճական նորմերի»¹:

Հայտնի է նաև, որ տարբեր են կարծիքները տեքստի նվազագույն միավորի առանձնացման և անվանման մեջ: Այսպես՝ Գ. Ջահուկյանը տեքստին նվազագույն միավորը համարում է պարբերությունը (հինույթ): Հինույթի կամ հինույթների մեկ միասնական ամբողջությունը, որը հանդես է գալիս որպես ավարտուն տեքստ (հենք), կոչվում է լիահինույթ»²:

Տեքստերը մեծ մասամբ ունեն վերնագիր, որ փոխադարձ կապի մեջ է բուն տեքստի հետ՝ արտահայտելու հեղինակի հիմնական մտահղացումը, գաղափարը³: Բուն տեքստը հեղինակի գեղարվեստական և այլ կարգի մտահղացումների իրականացումն է, հուշեր, վավերագրություն, վիպական պատումների շարադրանք և այլն: Այդ շարադրանքն ունի երկու պլան. մի պլանում խոսվում է տվյալ նյութի մասին, երկրորդ պլանում հանդես են գալիս տարբեր

¹ B. A. Маслова, Современные направления в лингвистике, М., 2008, էջ 27:

² Գ. Ջահուկյան, Շարահյուսական ուսումնասիրություններ, Ե., 2003, էջ 63:

³ Հոդվածում օրինակները քաղում ենք Վ. Բահակյանի «Հայրս» հուշագրական վեպից:

հանգամանքներով իրար հետ կապված հերոսներ, որոնք զանազան պատմություններ են անում:

Վ. Իսահակյանի «Հայրս» վեպը, օրինակ, ներկայացնում է հեղինակի և ընթերցողի, տեքստի ու բովանդակության բոլոր կապերի մի ամբողջություն: Այստեղ պարբերությունների քանակը, ի տարբերություն նախադասությունների, ավելի սահմանափակ չէ: Տեքստի հատվածները տրոհված են բացատներով, նշվում են աստղանիշերով և այլն: Պարբերության բաղադրիչների իմաստային կապը մոտավորապես այնպիսին է, ինչպիսին որ է բարդ նախադասության մեջ մտնող պարզ նախադասությունների կապը:

Ամեն մի տեքստ ենթադրում է նախադասությունների, այնպես էլ առանձին պարբերությունների միջև կապերի ստեղծում: Բառերը, բառակապակցությունները, նախադասությունները, այնպես նաև ցուցաբառերը՝ որպես ներհամահենքային (ներկոնտեքստային) հանդես են գալիս իրենց նշանակման գործառությամբ, այդպես և կրկնությունը, որի ժամանակ փոխարինում չի կատարվում: Կրկնություն է նաև քերականական ժամանակաձևերի կրկնությունը:

Տեքստում պարբերությունները նույնպես կապվում են հատուկ միջոցներով, այսպես կոչված, նախաբերիչներով և հետաբերիչներով. առաջինով հղում է կատարվում նախապես ասվածին, օրինակ՝ *վերոհիշյալ, վերևում նշվածը* և այլն, իսկ երկրորդի դեպքում հղում է կատարվում ասելիքին՝ *հետևյալը, ստորև բերվող* և այլն: Վերջիններս ներտեքստային կապակցության եղանակ են:

Այսպես, Գ. Ջահուկյանը գրում է, որ «բուն տեքստային շաղկապների թիվը մեծ չէ՝ *այնուհետև, այնուամենայնիվ, ընդհակառակը, այսպիսով, արդ, այսուհանդերձ, վերջապես, վերջիվերջո, ընդամին* և այլն»:

«Կապակցական գործառույթ ունեն նաև ավանդական քերականական կապի միջոցները, որոնք առանձին նախադասությունների կապի միջոցներ են: Սրանք կապում են գերնախադասական (գերֆրազային) միասնությունների ավելի մեծ հատվածներ, պարբերություններ և այս պլանով ձեռք են բերում ներտեքստային կապի (կոհեզիայի) կարգավիճակ»⁴:

⁴И. Р. Гальперин, Текст как объект лингвистического исследования, М., 1981, էջ 78:

Ելնելով տեսական հիշյալ դրույթներից՝ կարելի է քննել յուրաքանչյուր տեքստ ըստ կապակցման միջոցների և եղանակների:

ա. Շաղկապներ և շաղկապական բառեր: Ներտեքստային շաղկապների դեր կարող են կատարել նաև բուն ներնախադասական շաղկապները: Շաղկապների ներնախադասական և ներտեքստային գործառության միջև տարբերություն կա: Ի տարբերություն ներնախադասական շաղկապների՝ ներտեքստային շաղկապական կապակցությունները նախադասությունների ոչ թե ներքին, այլ արտաքին կապեր են:

Պարբերության ներսում ևս տեղի է ունենում շաղկապով կապակցում: Օր.՝ «Էյզենշտեյնը ցանկանում էր տեսնել կինեմատոգրաֆիայի պատմության ամենանշանակալից վայրը Փարիզում (1): *Այսինքն* այն սրճարանի ներքնահարկը, ուր 1895 թվին, առաջին անգամ աշխարհում Լյումմեր եղբայրները ցուցադրեցին իրենց մի քանի րոպե տևող կինոժապավենները՝ «Գնացքի ժամանումը Լիոնի կայարան», «Բանվորների ելքը «Լյումմեր» գործարանից» և մի կատակերգություն, առաջինը աշխարհում՝ «Ջրված ջրողը» (2) (էջ 389):

Այստեղ 2-րդ նախադասությունը *այսինքն* շաղկապով է կապակցվում 1-ին նախադասության հետ՝ արտահայտելով բացահայտման հարաբերություն:

Նախադասությունները հաճախ կապակցվում են թվարկում արտահայտող այնպիսի գուգադրական կապակցություններով, որոնք հարում են շաղկապներին: Օր.՝ «Ընդմիջումից հետո բեմ բարձրացան *հռետորները* (1): *Նախ* խոսք առան*շվեյցարացիք* (2): Խոսում էին շատ հանգիստ, խաղաղ ձայնով, բայց և շեշտելով իրենց ավանդական չեզոքությունը (3): *Ապա ֆրանսիացիք* բեմ բարձրացան (4): *Նրանց* վերամբարձ, ճոռոմ ճառերը նման էին հետք չթողնող բառերի մի հրավառության (5):

Շաղկապները, բացի պարբերության ներսում առանձին նախադասություններ կապակցելուց, պարբերություններ են կապակցում՝ դառնալով արտաքին կապեր: Օր.՝ «Հայրս ինձ մխիթարելու համար տարավ կենդանաբանական այգի: ... Մի հատուկ կառուցված տնակի առջև տիրոջ նման հանդարտ զբոսնում էր մի դարչնագույն արջ: Բեռլինի սիմվոլն էր, բոլորի սիրելին, չորս կողմից կոնֆետներ էին նետում, նա էլ կուլ էր տալիս անմիջապես և խոնջելով, թաթով փորը շոյելով, յուրովի շնորհակալություն հայտնում (1): *Բայց* ինձ վրա ամենամեծ տպավորություն թողեց մինչև օրս հի-

շողության մեջ մնացած սպիտակ մկների քաղաքը: Մի մեծ ապակյա վանդակում, որ կառուցված էր միջնադարյան փոքրիկ գերմանական քաղաքի նմանողությամբ, եկեղեցիով և զանգակատնով, հրապարակի մեջտեղը դրված էր սրինգ նվագող տղայի շարժական արձանիկը: Ժամանակ առ ժամանակ նվագողը գլուխը շարժում էր և սրինգը նվագում, իսկ մկները վախեցած վագում էին դեսուդեն (2): *Սակայն* քաղաքի տերերը խոստումնազանց էին եղել ու չէին վարձատրել սրնգահարին, վերջինս էլ վրեժ լուծելու համար նորից էր եկել քաղաք, կանգնել հրապարակի մեջտեղը, հանել սրինգը և սկսել նվագել իր գիտցած ամենագեղեցիկ եղանակները» (3): (էջ 44):

Բերված տեքստային հատվածում 2-րդ պարբերությունը 1-ին պարբերության հետ կապակցված է *քայքայ* ներհակական շաղկապով՝ արտահայտելով հակասման հարաբերություն. նույնպիսի հարաբերությամբ է կապակցված 3-րդ պարբերությունը 2-րդ պարբերության հետ՝ *սակայն* ներհակական շաղկապով:

Այնուհետև, 1-ին պարբերության 1-ին նախադասությունը ունի քերականորեն իրեն չկապված միջանկյալ նախադասություն՝ *այսպես էին կոչում նրան սիրով ու հարգանքով*, սակայն վերջինս իմաստային հավելում է արտահայտում հիմնական նախադասության մտքի նկատմամբ: 2-րդ պարբերությունը *այսպիսով* շաղկապական բառով կապակցվում է առաջին պարբերության հետ՝ արտահայտելով ընդհանրացման հարաբերություն: 4-րդ նախադասությունը 3-րդ նախադասության հետ կապակցվում է առանց շաղկապի՝ շարահարությամբ:

Ներտեքստային կապակցության եղանակ են, այսպես կոչված, *նախաբերությունը* և *հետաբերությունը*, որոնք կապում են տեքստի տարբեր մասերը: Նախաբերության դեպքում հղում է կատարվում նախապես ասվածին, այն ինչ հետաբերության դեպքում համապատասխանաբար հղում է տրվում ասելիքին: Օրինակ՝ «Ոտքերը տանում էին նրան դեպի հրապարակում գտնվող Ազոլոյի միակ սրճարանը՝ «Կաֆեն», ուր նստում էր տերասում, նայում էր փողոցի եռուզեռին, իտալական թերթեր կարդում» (1): «*Ինչպես ասացի*, հայրս այս սրճարանում ծանոթացավ Վենետիկի երեք արվեստագետների հետ... Վենետիկցիներից մեկը բավականին հոչակ վայելող նկարիչ Տոգին էր, մյուսը բանաստեղծ էր, երրորդը, որը եռյակի ամենահամեստն էր, երգահան էր» (2) (էջ 180):

2-րդ պարբերության *ինչպես ասացի* միջանկյալ նախադասությունը, որը նաև նախաբերիչ է, ուժեղ կապ է ստեղծում նախապես ասվածի (էջ 175) հետ՝ որպես հեռացած կրկնություն:

Նա հենց այդ օրերին գրել է հետևյալ ցատումնալից բանաստեղծությունը.

Հետևյալ հետաբերիչով՝ որպես կապակցության եղանակ, հրդում է կատարվում ասելիքին՝ բանաստեղծությանը. «Ասա մեզ, Եվրոպա, ո՞ւր ես շտապում... (էջ 93):

բ. Միջանկյալ բառեր, բառակապակցություններ, նախադասություններ: Տեքստի այս միավորները վերաբերականների նման արտահայտում են խոսողի տրամադրությունը (հաստատում, ժխտում, երկբայում, բացատրություն, իմաստային հավելում և այլն) նախորդ նախադասության կամ նախադասությունների ասվածի նկատմամբ: Դրանք նման համատեքստում կատարում են կապակցական դեր: Օր.՝ «Ծովն ալեկոծված էր, անձրևը վերածվում է փոթորկի (1): Նավապետը, *առանց կանգ առնելու միջանկյալ կայարանում*, սլանում է դեպի Գրան Կանալ, որպեսզի ապաստան գտնի, իսկ այնտեղ դրությունն ավելի վատ էր (2): Սկսվել էր, *այսպես կոչված՝* ակվա ալտան՝ բնության տարերային երևույթը, երբ ծովի ջրերը բարձրանում և հեղեղում են քաղաքը» (3):

2-րդ նախադասության *առանց կանգ առնելու միջանկյալ կայարանում* և 3-րդ նախադասության *այսպես կոչված* միջանկյալ բառակապակցությունները հաստատում են ծովի ալեկոծված լինելը՝ որպես կապակցության միջոցներ:

Բերենք մեկ այլ օրինակ՝ «Երիտասարդը սիրալիր բացատրեց, որ ինքը՝ Պիերը (*այդպես էր նրա անունը*) ծնվել է Պետերբուրգում (1): Պատմեց, որ իր հայրը Պետերբուրգում զբաղեցրել է դիվանագիտական մեծ պաշտոն, իտալացի է եղել (գուցե ընդամենը խոհարար է եղել մի ազնվականի տանը, բայց հավատանք Պիերին), իսկ մայրը բանաստեղծուհի է եղել և բավականին հոչակ է վայելել պետերբուրգյան գրական շրջաններում» (2):

2-րդ նախադասությունը *գուցե ընդամենը խոհարար է եղել մի ազնվականի տանը, բայց հավատանք Պիերին* միջանկյալ նախադասությամբ կապակցվում է 1-ին նախադասության հետ՝ արտահայտելով երկբայական վերաբերմունք:

բ. Ուրիշի ուղղակի մեջբերվող խոսք: Ուրիշի ուղղակի մեջբերվող խոսքի ներմուծելով՝ փոխվում են հաղորդման կողմերը, կարող

են փոխվել տվյալ պարբերության համար բնորոշ կապակցության միջոցներն ու եղանակները և պարբերության մեջ ներդրվել ուրիշ հաղորդմանը հատուկ միջոցներն ու եղանակները: Ինչպես հեղինակային ընդմիջարկումները, ուրիշ հեղինակներից կատարված մեջբերումները, օրինակները, հերոսների մտքերը, ուրիշների հաղորդումների վերարտադրությունը:

Գրավոր տեքստում, հատկապես հուշագրական վեպում, հեղինակը իր խոսքից կարող է անցում կատարել հերոսի ուղղակի մեջբերվող խոսքին, մի հերոսի ուղղակի խոսքից մյուսին: Սրանք սովորաբար առանձնացվում են որպես պարբերություններ, սկսվում նոր տողից և հերոսների ուղղակի խոսքից առաջ անջատման գիծ է դրվում: Բերենք հետևյալ օրինակը. «Ախորժակով ուտում էինք մեր հացիկները և խմում սուրճը: Չարենցը հարցրեց ինձ. / - Վիգեն, դու հայերեն կարդո՞ւմ ես: / - Այո, - պատասխանեցի ես: / - Իսկ իմ գրվածքներից կարդացե՞լ ես: / - Իհարկե: / - Եվ ո՞րն ես ավելի շատ հավանել: / - «Ամենապոեմը»: / - Իսկ իմ մյուս պոեմները կարդացե՞լ ես: / - Այո, մյուսներն էլ: / - Պոեմներիցս ո՞րը ամենաշատը քեզ դուր եկավ: / - Դարձյալ «Ամենապոեմը», - պատասխանեցի առանց վարանմունքի: / Նա զարմացած ժպտաց և մտածկոտ ասաց. - Գուցե դու իրավացի ես, ես այդ պոեմը գրելեմ 1920 թվին, տակավին շատ երիտասարդ: (էջ 222):

Հարցուպատասխանական այս ամբողջ հատվածը երկխոսություն-մեջբերվող խոսքի տեքստային միավորների փոխհաջորդման լավագույն օրինակ է վեպում:

գ. Կրկնությունը որպես տեքստի կապակցման եղանակ: Տեքստի կապակցումն իրականացնելու կարևոր եղանակ է կրկնությունը: «Հայրս» վեպում, օրինակ, կրկնվում են ոչ միայն բառերը, բառակապակցությունները, նախադասությունները, պարբերությունները, այլև բայի քերականական ժամանակաձևերը: Դրանցից բացի՝ տեքստի նյութի հետ կապված շատ է նաև անունների, հատկապես հատուկ անունների կրկնությունը:

Դրանք լինում են տարբեր բնույթի: Դրանցից է հեռահար կրկնությունը, որը ուղեկցվում է հիշեցնող արտահայտություններով (*ինչպես ասացի, վերևում նշվեց* և այլն), այլև տողերի միջև բացատներ թողնելով՝ աստղանիշերով և այլն: Կրկնվող կապեր են ստեղծվում ոչ միայն պարբերության մեջ մտնող նախադասությունների, այլև առանձին պարբերությունների միջև: Օրինակ.՝ այսպես՝

«Բեռլինում կյանքը գնում էր իր ընթացքով: Հայրս և իր բարեկամները ապրում էին հույսերով, թե ապագան մեր հայրենիքի համար բարի կլինի (1): Ամեն առավոտ *հայրս* գնում էր իր ծառայությանը, իսկ ես, որ դպրոց չէի գնում, մնում էի *տանը*, ձանձրանում էի, նայում էի լուսամուտից դուրս: Մեր *տան* դիմաց մի մանկատուն կար, մեծ բակ ուներ, որտեղ գերմանացի երեխաները. բոլորն էլ շեկ, ակնոցավոր, փայտե հրացաններով և թրերով պատերազմ էին խաղում (2): Հայրս ինձ մխիթարելու համար տարավ կենդանաբանական այգի: Վայրը, ուր գտնվում էր այգին, այդ տարիների Բեռլինի ամենաշխույժ կենտրոնն էր» (3): 1-ին, 2-րդ, 3-րդ պարբերությունները կապակցվում են *հայրս* բառի կրկնության եղանակով: 2-րդ պարբերությանն ենթում 1-ին և 2-րդ նախադասությունները կապակցվում են *տուն* բառի կրկնությամբ:

Տեքստում քերականական տարբեր իրողություններ առանձին-առանձին կարող են հանդես գալ կրկնությամբ՝ ստեղծելով կառուցվածքի յուրօրինակություն: Այսպես, բայի անցյալ կատարյալի հիմքից կազմվող քերականական ժամանակաձևերի կրկնությունը հետևյալ օրինակում առաջ է բերել խոսքի ուրույն տպավորություն. «ՀՕԿ-ում *էր*, հայրս առաջին անգամ *տեսավ* մի հայրենանվեր երիտասարդ բանվոր բանաստեղծի՝ Միսակ Մանուշյանին: Նա որք *էր* և *գաղթել էր* Մերձավոր Արևելքից: Ուշադրություն *նվիրեց* նրա առաջին գրվածքներին, *քաջալերեց, տպեց* «Զանգուում»: (Էջ 360):

դ. Կապակցական դեր են կատարում գոյականը, ածականը, թվականը, մակբայը, բայը, վերջինիս հատկապես դերբայական ձևերը:

Կապակցական դեր կատարող գոյականով հաճախ մասնավորվում է նախապես ասվածը՝ ընդհանուր հասկացությունը կամ կատարվում է հակառակ երևույթը: Օրինակ՝ «Հայրս Մուրադ-Ռաֆայելյան վարժարան իր առաջին այցելությունների ընթացքում անակնկալ մտնում է մի *դասարան* և տեսնում, որ *Խոջան* թուրքերեն է դասը վարում, շատ գայրացած է, ուղիղ միաբանության գլխավորի մոտ՝ բողոքելու (1): Բանաստեղծի բոցավառ և համոզիչ ելույթից հետո աբբահայրը գրկում է *Խոջային* դասերից (2): *Այսպիսով* խեղճը մնում է առանց աշխատանքի, բայց քանի որ բավական լավ էր տիրապետում ֆրանսերենին, նրան են հանձնում ցածր *դասարաններում* ֆրանսերենի *ուսուցումը* (3): Բարձր դասարանների *ուսուցումը* հանձնված էր Փարիզից եկած աբբա *Շյուստին* (4): Այս *միջա-*

դեպքը ավարտվեց նրանով, որ *հայրս* և *Խոջան* լավ բարեկամներ դարձան» (5):

Այստեղ *միջադեպը* ընդհանուր բնորոշումով արտահայտվում է այն, ինչ որ առավել մասնավոր ձևերով նկարագրված է նախորդ նախադասությունների մեջ: Բացի *միջադեպը* գոյականով կապակցումից՝ կապակցում է կատարվում (դասարան, Խոջա, հայրս, ուսուցում) գոյականների կրկնությամբ և *այսպիսով* շաղկապական բառով 3-րդ նախադասությունն է կապակցվում նախորդ նախադասությունների հետ՝ արտահայտելով ընդհանրացման հարաբերություն:

Այդպես նաև այն դեպքում, երբ ածականը կապակցական դեր կատարելիս հաճախ հանդես է գալիս գոյականի հետ միասին՝ բնութագրելով նախորդ նախադասության կամ նախադասությունների մեջ նկարագրված առարկան, երևույթը և այլն: Օրինակ. «Հայրս *քարտուղարին* հայտնեց այցելության նպատակը, իր ազգանունը (1): *Քարտուղարը* գնաց, քիչ անց դուռը բացվեց, և Հովհաննես-Խանն անձամբ երևաց (2): *Խոշորակազմ մարդ* էր, *երկայն սև բեղերով* (3): *Նա* շատ սիրավիր ընդունեց մեզ և հրավիրեց իր շքեղ առանձնասենյակը» (4): (Էջ 40): Այստեղ 1-ին և 2-րդ նախադասությունները կապակցվում են կրկնությամբ (*քարտուղար*): 3-րդ նախադասությունը կապակցվում է երկրորդ նախադասության հետ ածականի և գոյականի կապակցությամբ՝ բնութագրելով Հովհաննես-Խան անձին: 4-րդ նախադասությունը 2-րդ, 3-րդ նախադասությունների հետ կապակցվում է *նա* դերանունով՝ փոխարինման գործառույթով:

Երբեմն ածականը բնութագրում է նախորդ նախադասություններում նկարագրված անձին՝ կատարելով կապակցական դեր: Օրինակ՝ «Խորհրդային պատվիրակությունը երևաց. Նրանք մշտապես միասին ու կազմակերպված շարքով էին գալիս (1): *Նրանց* միջից ինձ շատ էր գրավել և հետաքրքրել Բորիս Պաստերնակը (2): *Նա* ուրիշներին էլ էր շատ հետաքրքրել (3): *Կարծես թե* նրա անձից մի լույս էր ճառագում (4): *Բարձրահասակ էր, թուխ*» (5): 2-րդ նախադասությունը 1-ին նախադասության հետ կապակցվում է *նրանց* դերանունով՝ փոխարինման գործառույթով: 3-րդ նախադասությունը 2-րդ նախադասության հետ կապակցվում է *նա* դերանվան միջոցով՝ դարձյալ փոխարինման գործառույթով: 4-րդ նախադասությունը 2-րդ, 3-րդ նախադասությունների հետ կապակցվում է

կարծես թե համեմատության շաղկապով՝ արտահայտելով համապատասխանության ու նմանության հարաբերություն: 5-րդ միակազմ նախադասության *բարձրահասակ, թուխ* ածականներով բնութագրվում է նախորդ նախադասությունների անձը (Պաստերնակ)՝ կատարելով կապակցական դեր:

Մակբայները ևս հանդես են գալիս կապակցական դերով: Իրենց տարբեր իմաստներով (Ժամանակ, տեղ, չափ, ձև և այլն) կապ են ստեղծում տվյալ և նախորդ նախադասությունների միջև:

Տեքստում բայի դիմավոր ձևերը կապակցող դերով քիչ են գործածական: Հանդիպում ենք գործողության ընդհանուրի հակադրությանը մասնավոր երևույթով արտահայտելուն, և հակառակը, որով կապ է ստեղծվում համապատասխան նախադասությունների միջև:

Կապակցական դեր են կատարում դերբայական ձևերը, հատկապես հարակատար, ենթակայական, անորոշ դերբայները: Օր. «Արվեստի սիրահարները շատ երկրներից հատուկ գալիս էին Մոսկվա՝ այդ թանգարանը տեսնելու (1): Մոսկվա գտնված օրերիս երկու անգամ *այցելեցի* (2): Այնտեղ *այցելելը* նման էր մի հրաշագեղ երազ տեսնելուն» (3): (Էջ 512): Այստեղ 3-րդ նախադասությունը *այցելել* անորոշ դերբայը՝ գոյականաբար գործածությամբ, կապակցում է 2-րդ նախադասության հետ:

Գ. Զահուկյանը նկատում է, որ «դերանունը որպես կապակցող բառ երկու գործառույթ ունի: Առաջինը ըստ էության իրադրական, երկրորդը՝ կոնտեքստային-իրադրական: Առաջին դեպքում նրանց նշանակությունը համապատասխանում է անմիջական ակտին, երկրորդ դեպքում հանդիսանում է նշանների նշան՝ ցույց տալով հարևան միավորի նշանակությունը, նույնպես կապված իրականության հետ միջնորդավորված ուրիշ լեզվական միավորի միջոցով»⁵: Օր.՝ Այսպես՝ «Այս իրարանցումից հետո մենք մտերմացանք *Լի Կաուզիի ընտանիքի* հետ (1): *Կինը* մնաց Վենետիկում, իսկ *Ջի-րոլամոն* ընդհատակյա գործում էր Բտալիայի հարավում (2):

Հիսուն տարի հետո նորից կապ հաստատեցի *նրա* հետ (3): 1974 թիվն էր, հորս 100-ամյակի հոբելյանի նախօրյակին նամակ էի գրել *նրան* և հրավիրել, որ գա Երևան, մասնակցի հոբելյանական հանդեսներին (4): ...*Լի Կաուզին* մահացավ 1977 թվին (5): Նա

⁵Դ. Բ. Джаукян, *Универсальная теория языка*, М., 1999, էջ 203:

Իտալիայի սենատոր էր, ղեկավարում էր պայքարը սիցիլիական մաֆիայի դեմ» (6): (էջ 108): Առաջին պարբերության 2-րդ նախադասությունը՝ *կին* և *Ջիրոլամոն* գոյականներով կապակցվում է 1-ի նախադասության *ընտանիք* գոյականի հետ՝ արտահայտելով մասնավորման հարաբերություն: Երկրորդ պարբերության *նրա* և *նրան* դերանունները կապակցվում են առաջին պարբերության *Լի Կաուզի* հետ՝ փոխարինման գործառնությով: 6-րդ նախադասության *նա* դերանունը կապակցվում է 5-րդ նախադասության *Լի Կաուզի* հետ փոխարինման գործառնությով: Երկրորդ պարբերության *Իտալիա* և *Լի Կաուզի* հատուկանունները կապակցվում են առաջին պարբերության նույնանուն գոյականների հետ կրկնության եղանակով:

Եզրակացություններ: 1. Տեքստը կապակցված ամբողջություն է, որը իրականանում է որոշակի միջոցներով և եղանակներով՝ պայմանավորված նյութի և մտահղացման ամբողջությամբ:

2. Տեքստի կառուցվածքի լեզվական առանձնահատկությունները քննությունը ցույց է տալիս, որ պարբերություն կազմող նախադասությունների կապերն ավելի սերտ են, քան առանձին պարբերությունների կապերը, սրանց կապերն էլ ավելի սերտ են, քան առանձին հատվածների կապերը:

3. Տեքստի նման կապակցումների տարբերությունները պայմանավորված են նախադասությունների առավել ինքնուրույնությամբ:

Գրականություն

Маслова В. А., Современные направления в лингвистике, М., 2008:

Ջահուկյան Գ. Բ., Շարահյուսական ուսումնասիրություններ, Ե., 2003:

Гальперин И.Р., Текст как объект лингвистического исследования, М., 1981:

Джаукян Г.Б., Универсальная теория языка, М., 1999:

Ключевые слова: текст. компоненты текста, база, ядро, грамматические средства сочетания, языковые особенности мемуарного текста.

А. Г. Барсегян - Применение средств связей текста в мемуаристике. -Текст представляет собой связное целое, реализуемое определенными средствами и способами, полностью обусловленное материальной идеей. Исследуя лингвистические особенности строения последнего, мы заметили, что

связи предложений, составляющих абзац, ближе, чем связи отдельных абзацев, их связи даже ближе, чем соединения отдельных частей. Это обусловлено большей независимостью предложений.

Keywords: text, components of text, base, kernel of text, grammatical means of connection, linguistic peculiarity of text.

A. G. Barseghyan - Use of Means of Text Connection in Memoirs. - The text is a coherent whole, realized by certain means and methods, conditioned entirely by the material and idea. Introducing, examining the linguistic features of the structure of the latter, we noticed that the connections of the sentences that make up the paragraph are closer than the connections of individual paragraphs, their connections are even closer than the connections of individual parts. It is conditioned by the more independence of the sentences.

ՆՈՐԱԿԱԶՄ ԲԱՌԵՐԸ ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ

ԲԱՌԱՊԱՇԱՐՈՒՄ

Բանասիր. գիտ. թեկնածու Ա. Ս. Գալստյան

Հիմնաբառեր: Նորակազմ բառ, բառակազմական կաղապար, ներդասակ բառ:

Հասարակական կյանքի բոլոր փոփոխությունները, նոր հասկացություններն ու իրողությունները իրենց արտացոլումն են գրտնում լեզվի բառապաշարում: Անհրաժեշտաբար առաջանում են նոր բառեր ու արտահայտություններ, ստեղծվում են նոր իրերի, գաղափարների հետ լեզու մուտք գործած օտարալեզու բառերի և տերմինների հայերեն տարբերակները, օտար բառերը ժամանակի ընթացքում փոխարինվում են համարժեք հայերեն տարբերակներով, որոշ բառեր հնանում և գործածությունից դուրս են գալիս, և այս գործընթացը անընդհատ է, շարունակական:

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը ձեռնամուխ է եղել նոր բառերի հավաքման, բացատրման աշխատանքներին: Մամուլից, գիտական և գեղարվեստական գրականությունից (ինքնուրույն և թարգմանական), համացանցից, հեռուստատեսությունից, տարբեր գովազդային հոլովակներից և ցուցանակներից, բանկերի, նախարարությունների հրատարակած բուկլետներից, ձևաթղթերից հավաքվել են բացատրական բառարաններում և նորաբանությունների բառարաններում չվկայված, չբառարանագրված բառերը:

Արդեն լույս են տեսել «Նոր բառեր» վերտառությամբ գրքի մի քանի պրակներ¹: Դրանցում արձանագրված լեզվական նյութը հետազայում անհրաժեշտ չափով կընդգրկվի հայոց լեզվի բացատրական բառարաններում: Հավաքված նյութի լեզվաբանական հետազոտությունը կարտացոլի ժամանակակից հայոց լեզվի բառակազմության օրինաչափությունները, ի հայտ կբերի բառաստեղծման յուրահատկությունները, դրանց տարբեր դրսևորումները:

¹ «Նոր բառեր», Ա պրակ, Ե., «Գիտություն» հրատ., 2015: «Նոր բառեր», Բ պրակ, Ե., «Աստղիկ» հրատ., 2016: «Նոր բառեր», Գ պրակ, Ե., «Աստղիկ» հրատ., 2017: «Նոր բառեր», Դ պրակ, Ե., «Աստղիկ» հրատ., 2018: «Նոր բառեր», Ե պրակ, Ե., «Գիտություն», 2020:

Մինչև «Նոր բառերում» ընդգրկված նյութի վերլուծությանն անցնելը անդրադառնանք հայերենագիտության մեջ նորաբանությունների և նորակազմությունների մասին եղած կարծիքներին, այդ ոլորտում գործածվող մի շարք տերմինների:

Նորաբանությանը տեսական ուսումնասիրություններում, դասագրքերում, ձեռնարկներում անդրադարձել են Էդ. Աղայանը, Թ. Ղարազյուլյանը, Ա. Սուքիասյանը, Պ. Պողոսյանը, Ս. Մելքոնյանը, Ս. Էլոյանը, Լ. Եզեկյանը, Ա. Մարտիրոսյանը և ուրիշներ²: Նորաբանության թեմայով պաշտպանվել են մի շարք ատենախոսություններ³: Նորաբանություն և նորակազմություն հասկացությունների իմաստային ոչ հստակ սահմանազատումը ակնհայտ է նաև այդ թեմայով գրված հոդվածներում⁴ և նորաբանությունների համառոտ ու ծավալուն բառարաններում⁵:

² Էդ. Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Ե., ԵՊՀ հրատ., 1984: Թ. Ղարազյուլյան, Դիպլոմային և պոստենցիալ բառերը ժամանակակից հայերենի բառաստեղծման համակարգում // *Լեզվի և ոճի հարցեր*, հ. VII, Ե., 1983, էջ 197-226: Ա. Սուքիասյան, Ժամանակակից հայոց լեզու: Հնչյունաբանություն, բառագիտություն, բառակազմություն, Ե., ԵՊՀ հրատ., 1999, էջ 158-162: Պ. Պողոսյան, Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքները (խոսքի տեսություն), գիրք 1, ԵՊՀ հրատ., 1990, էջ 160-163: Ս. Մելքոնյան, Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության, Ե., «Լույս», 1984, էջ 157-179: Ս. Էլոյան, Ժամանակակից հայերենի բառային ոճաբանություն, Ե., ԳԱ հրատ., 1989, էջ 180-232: Լ. Եզեկյան, Հայոց լեզվի ոճագիտություն, Ե., ԵՊՀ հրատ., 2003, էջ 132-149: Ա. Մարտիրոսյան, Արդի հայերենի նորաբանությունների բառակազմական կաղապարները, Ե., 2004:

³ Վ. Ս. Մելքոնյան, Բառային անհատական նորաբանություններ 20-րդ դարի արևելահայ չափածոյում, Ե., 2002, Ա. Ռ. Մարտիրոսյան, նշվ. աշխ., Ս. Ռ. Սողոմոնյան, Նորաբանությունները 90-ական թթ. հայ մամուլում, 2005, Լ. Ֆ. Սարգսյան, Արդի արևելահայերենի նորաբանությունների իմաստային և կառուցվածքային առանձնահատկությունները, 2011:

⁴ Ա. Մարտիրոսյան, Նոր բառեր և նորաբանություններ // «Բանբեր Երևանի համալսարանի», 1998, 3, էջ 77-85, Լ. Պետրոսյան, «Նորաբանությունները հայերենում» դասընթացի մեթոդաբանությունը // «Գիտական հոդվածներ, բանասիրություն», Բ պրակ Վանաձոր, 2011, էջ 35-48, Ա. Ս. Գալստյան, Բառագիտական տերմինների գործածության հարցեր // «Հայերենագիտական միջազգային 10-րդ գիտաժողով, 7-9 հոկտ., 2015, Ջեկուցումների ժողովածու», Ե.. «Գիտություն», 2015, էջ 388-395:

⁵ Ֆ. Հ. Խլղաթյան, Բառարան – տեղեկատու: Նոր բառեր և իմաստներ, Ե., «Հայաստան», 1982, Փ. Գ. Մելքիսանյան, Նոր բառերի բացատրական բառարան, Ե., «Փյունիկ», 1996, Հ. Հ. Մեսրոպեան, Գարեգին Ա ամենայն հայոց կաթողիկոսի երկերի բառարան (Նոր բառեր և իմաստներ), Մոնրեալ, 2000, Ս. Ա. Էլոյան, Արդի հայերենի նորաբանությունների բառարան, Ե., «Նաիրի», 2002, Ռ. Կ. Սաքապետոյան, Բառգրքույկ, նոր և նորակազմ բառեր

Այս ոլորտում գործածվող տերմիններից են՝ *նորաբանություն* (լայն և նեղ առումով), *ընդհանրացող և մեկուսացած նորաբանություններ*, *բուն* կամ *լեզվական նորաբանություններ*, *հեղինակային* կամ *անհատական նորաբանություններ*, *խոսքային նորաբանություններ*, *նորամուծություն*, *նորակազմություն*, *նորակազմ բառ*, *նորամուտ բառ*, *պոտենցիալ (ներունակ) բառեր*, *իմաստային նորաբանություններ* և այլն: Առանձնակի են մնացել, տարածում չեն ստացել մի շարք տերմիններ՝ *հեղինակային նորաբառեր* (Պ. Պոդոյան), *նորաբանագիտություն*, *հանրական նորաբանություն* և այլն: Որոշ տերմիններ գործածվում են մի շարք տարբերակներով (*դիպվածային բառ-դիպվածական բառ – դիպվածաբանություն*, *պոտենցիալ բառ – ներունակ բառ* և այլն):

Ուսումնասիրության ընթացքում հեղինակները հաճախ իրենք տերմինային փոփոխություններ են կատարում: Այսպես՝ Է. Աղայանը գործածում էր *գործուն* և *չգործուն բառապաշար*, այնուհետև սկսում է գործածել *գործուն* և *ոչ գործուն բառապաշար* տերմինները: «Ամեն մի նոր բառ, սեփական թե փոխառյալ, նախապես հանդես է գալիս որպես նորաբանություն: Լայն առումով նորաբանություն է կոչվում լեզվական ամեն մի նոր իրակություն, կամ իրողություն նեղ առումով, բառագիտական տեսակետից, նորաբանություն է ամեն մի նոր բառ, կայուն բառակապակցություն, դարձված, առանձնահատուկ արտահայտություն (իդիոմ), բառի նոր իմաստ, բառագործածության նոր իրողություն», - գրում է Է. Աղայանը⁶: Ս. Մելքոնյանը նորակազմությունները բաժանում է երկու խմբի՝ անհատական և հանրական: «Տարածման իմաստով ավելի ակտիվ երևույթ են հանրական նորակազմությունները, քան անհատականները: Առաջինները ստեղծելուն պես ձգտում են ընդհանրանալ համապատասխան գործածության ոլորտում կամ ողջ գրական լեզվում»⁷:

Առայժմ հստակ չեն տարբերակվում բառարաններում չգրանցված, չվկայված, չարտացոլված բառաշերտը և նորաբանու-

հայերենում, Ե, ԵՊՀ հրատ., 2014, *Ս. Վ. Համբարձումյան*, Հովհաննես Շիրազի «Հայոց դանթեականը» պոեմի նորակազմ բառերի բառարան, Ե., «Ասողիկ», 2016:

⁶ Գ. Բ. Ջահուկյան, Է.Բ. Աղայան, Վ. Դ. Առաքելյան, Վ. Ս. Քոսյան, Հայոց լեզու, 1-ին մաս, Ա պրակ, Ե., «Լույս», 1980, էջ 331:

⁷ Ս. Մելքոնյան, Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության, Ե., «Լույս», 1984, էջ 159:

յունները: Հատկապես անցյալի հեղինակների ստեղծած նորակազմությունները ներկայացնելիս, կարծում ենք, կարելի է միայն ենթադրություններ անել բառի առաջին գործածության վերաբերյալ, քանի որ դա կարող է նաև եղած բառարաններում չարտացոլված բառ լինել:

Հետաքրքիր և ուսումնասիրության կարոտ բնագավառ է նաև բառապաշարի ոչ գործուն շերտի միավորների՝ գործուն բառապաշարին անցման խնդիրը, գործածության համեմատաբար նեղ ոլորտ ներկայացնող բառերի, տերմինների և նորաբանությունների շփության հնարավոր դեպքերը, բառի տերմինացման և տերմինի բառացման ժամանակ ի հայտ եկող իմաստափոխության օրինաչափությունները և այլն:

Առանձնահատուկ քննության կարիք ունի արևմտահայերենի և արևելահայերենի տերմինապաշարի միավորների փոխներթափանցման երևույթը: Է. Աղայանը դա դիտում է ներքին փոխառությունների շարքում: Թերևսավելի հստակ կլինե՞ր ներկայացնել այն արևմտահայերեն – արևելահայերեն փոխանցում կամ տեղաշարժ անվանումով: Այն բառերը, որոնք արևելահայերենում սկսել են գործածվել (*սմբուկ*, *աշխարհաքաղաքական*, *խափանարար*, *բարեշրջություն* և այլն), նորաբանություն համարելը ճիշտ չէ, որովհետև դրանք առկա են եղել հայերենի գոյաձևերից մեկում՝ արևմտահայերենում, և լեզվում արդեն եղած միավորները ուղղակի հայերեն բառապաշարի մի շերտից անցում են կատարել մեկ այլ շերտի՝ ընդգրկվելով գործածության անհամեմատ ավելի լայն ոլորտում:

Կարևոր է նաև ճշգրտել, թե քանի «տարեկան» բառն է անվանվում *նորակազմություն* տերմինով: Նորակազմ բառ համարել վերջին 50, 60 տարվա գործածություն ունեցող բառը և արտահայտություն՝ նր, թե՞ միայն մեկ-երկու տասնամյակ առաջ ստեղծված բառերն ու արտահայտությունները: Ի՞նչ ժամանակագրական կտրվածքով տարբերակել նոր և նորագույն բառերը:

Ա. Սուքիասյանը գրում է. «Նորաբանությունը պատմական հասկացություն է: Այն, ինչ լեզվի զարգացման տվյալ փուլում նորաբանություն է համարվում, պատմական այլ շրջանում որպես այդպիսին այլևս չի գիտակցվում և չի ընդունվում: Այդ տեսակետից

հատկանշական է, որ որոշ նորաբանություններ լեզվի զարգացման ընթացքում հնանում և լեզվից դուրս են մնում»⁸:

Ե՛րբ է նորաբանություն համարվող բառը կամ արտահայտությունը դադարում այդպիսին ընկալվելուց և համարվում համագործածական բառ:

Արդյոք հանձնարարելի՞ տերմին է *իմաստային նորաբանությունը*: Այս և մի շարք այլ հարցեր (իսկական կամ բուն նորաբանության, փոխառության և հայերեն համանշանակի գործածության առանձնահատկությունների դրսևորման հարցերը, բառիմաստի, բառի նշանակության և առարկայական վերաբերության փոփոխության խնդիրները և այլն) ճշգրտման, հստակ սահմանման կարիք ունեն:

Ստորև կներկայացնենք «Նոր բառեր» գրքում տեղ գտած հազարավոր բառերի որոշ առավել տարածված կաղապարներ՝ ուշադրության առնելով տվյալ կաղապարում ավելի հաճախ հանդիպող բաղադրիչները իրենց տարբեր համակցություններով:

Նկատելի է մի շարք ածանցների, ածանցակերպների և բառակազմական որոշ կաղապարների գործունացում: Այսպես, *-ե* ածանցով կազմված նոր բառային միավորներ են՝ *արծնապակե, նրբաթիթեղե, նրբատախտակե, մետաքսաթելե, վուշե, մոխրե, հախճաղուսե, հախճասալիկե, կոկոսե, կավաքարե, ճիմե, վարդայուղե, մամոռե, թերթաքարե*: Ընդ որում՝ երբեմն բառարանում *-յա* վերջածանցով բառի առկայության պարագայում էլ նախընտրում են ստեղծել *-ե* ածանցով տարբերակը (հմմտ. *նրբաթիթեղյա – նրբաթիթեղե*):

Հատկանշական իրողություն է նաև նորակազմ բաղադրություններում որպես հիմք հատկանունների գործածության հաճախակի դառնալը: Առկա են *-գետ, -ական, -յան* ածանցներով կազմություններ. *շանթագիտություն, մաթևոսյանագիտություն* (հանդիպել է նաև՝ *հրանտագիտություն*), *եվրոպագիտություն, շահնուրագիտություն, ջահուկյանական, աղայանական, աթայանական, մերձարաքսյան* և այլն:

Նորակազմությունների շարքում հաճախ են հանդիպում հատվածական բարդ բառերը՝ *գեղարվեստաարդյունաբերական, գեղարվեստափաստագրական, պատմափաստագրական, մշակու-*

⁸ Ա. Սուքիասյան, Ժամանակակից հայոց լեզու, Ե., ԵՊՀ հրատ., 1999, էջ 162:

թագործարարական, փրկաորոնողական, բնագիտամաթեմատիկական, բժշկատնտեսագիտական, գիտանախագծային, պատմաբանահյուսական և այլն:

Այնուհետև, -հայ վերջնաբաղադրիչով բառերը ևս բազմապատկվել են՝ ելնելով մեր ժամանակի ժողովրդագրական ուրույն գործընթացներից. *գլենդելահայ, կիպրահայ, դրդահայ, սասնահայ, քեսաբահայ, լիտվահայ, լոնդոնահայ, բրազիլահայ, բրիտանահայ, եթովպահայ, հոլանդահայ, հորդանանահայ*: Այս կազմություններում որպես սերող հիմք հանդես է գալիս երկրի կամ քաղաքի անվանումը: Կան նաև հետևյալ կարգի օրինակներ՝ *ֆեյսբուքահայ (-ուհի), վադնջահայ*:

Մեծ թիվ են կազմում նաև *հայ-* սկզբնաբաղադրիչով նորակերտ բառերը՝ *հայապատկեր, հայաջարդ, հայավեր, հայավտանգ, հայագիտակցություն, հայադարան, հայագերծել, հայահեռացում, հայաճանաչություն, հայատարազ, հայազարկ, հայահիմնադիր, հայակենտրոն, հայակերտիչ, հայահարազատ, հայաներկա, հայանկար, հայազրկել, հայօջախ*: Ավելորդ չէ նկատել, որ *հայ* բաղադրիչով նորակազմությունները կարող են քննության նյութ դառնալ նաև միջգիտակարգային՝ ազգագրական, ազգահոգեբանական, ժողովրդագրական, մշակութաբանական հետազոտությունների համար:

Նորակազմություններում առկա են *-շատ (խութաշատ, կորովաշատ, արժեքաշատ, ցնցումնաշատ, հրդեհաշատ, ժխորաշատ), -առատ (արցունքառատ, բժառատ, լուսնառատ, ճեղքառատ, պեղումնառատ, փայտառատ), -շար (էսսեաշար, դրվագաշար, խրմբերգաշար, անեկդոտաշար, պաստառաշար, ոլորանաշար, էլույթաշար, ժանեկաշար, խրամատաշար, նյութաշար, նոտաշար, կառուցաշար), -ուհի (երգեհոնահարուհի, եզդուհի, բարմենուհի, ավազանկարչուհի, կիթառահարուհի, մանկագրուհի, գնորդուհի, գաղթականուհի, անցորդուհի)* բաղադրիչներով բազմաթիվ բառեր:

Իմաստային մեկ այլ ոլորտ են ներկայացնում *-պատում «պատմել» (երևանապատում, երգապատում, ոգեպատում, վրացապատում, քրդապատում, սփյուռքապատում, մաշտոցապատում, րաֆֆիապատում, վավերապատում, ցեղասպանապատում), -աշխարհ (թախճաշխարհ, տեխնոաշխարհ, մեդիաաշխարհ, նյութաշխարհ, ֆիլմաշխարհ, ձկնաշխարհ, երազաշխարհ, գոյաշխարհ), -*

արվեստ (*հողարվեստ, ֆոտոգեղարվեստ, լռարվեստ, քանդակարվեստ*) վերջնաբաղադրիչներով նորակերտ բառերը: Նկատելի է, որ բերված կադապարները հետագա գործուն դառնալու ակնհայտ միտում են դրսևորում:

Նորակազմությունները որպես կանոն բաղադրյալ բառեր են, և դրանց դիտարկումը գիտական հետաքրքրություն է ներկայացնում նաև քերականական ձևավորման, մասնավորապես բաղադրիչների միջև առկա հարաբերությունների տեսակետից: Նորակազմ բառերը հիմնականում նյութական իմաստ արտահայտող (լիիմաստ) բառեր են: Դրանց գերակշիռ մասը գոյականներ են, ստվար թիվ են կազմում նաև ածականները, բայերը:

Ընդհանուր գծերով ներկայացնենք գոյականներից և ածականներից կազմված բայերը՝ դրանց ստեղծման մասնակադապարների և տարատեսակ դրսևորումների մանրամասն դիտարկումը թողնելով առանձին քննարկման:

Նկատելի բառաշերտ են կազմում գոյական կազմող բայերը (*խաշամել, համերգավարել, վայրէջքել, փշալարել, համահեղինակել*), բազմաթիվ են նաև ածականկազմող բայերը (*հնասպառվել, պճնապաճուճվել, խծուծապատել, փութաքայլել, շուտափութել*): Առկա են նաև նոր բայերի ստեղծման օրինակներ՝ հարադիր կազմություններից (*ծաղկաքաղ անել – ծաղկաքաղել, ծխախեղդ անել/լինել – ծխախեղդվել, ջերմաչափում անել – ջերմաչափել*):

Համագործածական բառապաշարի մաս կազմող բայերից նորակազմ բայեր ստեղծվում են մի քանի կադապարներով՝ տարբեր ածանցների և արմատների մասնակցությամբ: Այսպես, *ներպատվաստել, գերշահագործել, ապադոլարացվել, ապաարգելափակել, ջրալցվել, չարահյուսել, կիսախեղդվել, կիսաշրջափակվել, ինքնահայտարարագրել, ինքնահաճոյախոսել, ինքնագոյանալ, եվրանորոգել* և այլն: Ավելացնենք նաև, որ նորակազմ բառերի, մասնավորապես տերմինների քննությունը հայ լեզվաբանության մեջ նաև այլ հայեցակետերով է կատարվում. ուշադրության առարկա են դառնում նորակազմ բառերի և տերմինների բաղադրիչների՝ բնիկ կամ փոխառյալ լինելը, նրանց հայերենի վերածման հեռանկարը:

Ключевые слова. Лексические неологизмы, новые слова и модели их образования, неологизм, потенциальные слова.

А. С. Галстян - Новые слова в лексике современного армянского языка.- В статье рассматриваются разные аспекты образования новых слов – неологизмов в современном армянском языке, выделяются основные модели их образования, исходя из материалов книги “Новые слова” (вып. I-V, Ереван, 2015-2020).

Keywords: Lexical neologisms, new words and models of their formation, neologisms, potential words.

A. S. Galstyan - New Words in Vocabulary of the Modern Armenian Language.- The article discusses different aspects of the formation of new words - neologisms in the modern Armenian language and highlights the main models of their formation, based on the materials of the book "New Words" (issues I-V, Yerevan, 2015-2020).

ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ՆՈՐՄԸ ԵՎ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ

ԼԵԶՈՒՆ

Բանասիր. գիտ. թեկնածու Լ. Գ. Թեյյան

Հիմնաբառեր: Լեզվական նորմ, շեղումներ, սխալներ, բառի կիրառություն, խոսքի կառուցում, հեռուստալրագրություն:

Լեզվական նորմը, ինչպես հայտնի է մասնագիտական գրականությունից, տվյալ լեզվի համակարգը ներկայացնող միավորների իրացումն է հանրային հաղորդակցման գործընթացում՝ ըստ այդ լեզվի մեջ գործող կանոնների ու օրինաչափությունների, որոնք հանրորեն ընդունված են և մասնագիտորեն ամրագրված: Լեզվի յուրացման առաջին քայլերից սկսած՝ մարդն արդեն իսկ գիտակցում է մայրենի լեզվի նորմը. դրա վրա էլ խարսխվում է հաղորդակցումը: Հանրահայտ է նաև, որ լեզվական նորմը մեկընդմիջ տրված ու անփոփոխելի իրողություն չէ. լեզուն անընդհատ զարգացող մարմին է, և նրանում կատարվող փոփոխությունները, մրջտապես կրկնվելով, կարող են հանրության կողմից ընդունվել և ամրագրվել նորմի մեջ: Ժամանակի տվյալ հատվածում լեզվի մեջ գործող կանոնների գիտակցումն ու ճիշտ գործադրումն էլ դառնում են տվյալ լեզվով հաղորդակցվողների լեզվական որակի ու խոսքի մշակույթի գնահատման չափանիշը:

Բնական է, որ ճիշտ և ճշգրիտ (ինչու չէ, նաև գեղեցիկ) խոսելու, ասելիքը տրամաբանորեն ստույգ ձևակերպելու համար որոշակի լեզվական գիտելիք, ասել է թե լեզվական նորմի որոշակի իմացություն է անհրաժեշտ: Դա, անշուշտ, ձեռք է բերվում նախ և առաջ մայրենի լեզվի դասերին, բայց նաև բազմազան այլ աղբյուրներից՝ ընթերցանությամբ, թատերական ներկայացումներ ու շարժանկարներ դիտելով, հանրային հեղինակություն վայելող մտավորականների ու գործիչների խոսքին հետևելով և այլն:

Այս հարցում ամենից ավելի վճռական ու ներգործուն դերը թերևս պատկանում է զանգվածային լրատվության միջոցներին, որոնք մեծ չափով ձևավորում են հանրային գիտակցությունը, երկրորդաբար նաև՝ հանրության լեզվական մշակույթը:

Մեր օրերում շարունակաբար կատարելագործվող այդ միջոցների շարքում, համացանցի ազդեցության ոլորտի ընդարձակման պայմաններում նույնիսկ, հեռուստատեսությունն անվիճելիորեն առաջին դիրքերում է: Որքանո՞վ են գիտակցում հեռուստատեսային գործիչներն ու այդ գործի կազմակերպիչներն իրենց պատասխանատվությունն այս առումով (մի կողմ թողնենք խնդրին առնչվող օրենսդրական կարգավորումների անհրաժեշտության հարցը): Հնարավո՞ր է արդյոք լեզվական յուրատեսակ «գրաքննության» ենթարկել գոնե տեսագրվող (ոչ ուղիղ) հաղորդումները: Այս հարցերը երևի քննարկման այլ հարթակ են ենթադրում:

Հեռուստատեսության հնչող հայերեն խոսքի որակն ընդհանուր գծերով գնահատելու համար պետք է հաշվի առնել մի շարք հանգամանքներ: Նախ այն, որ հեռուստահաղորդումները բովանդակային տեսակետից շատ մեծ տարածք են ընդգրկում՝ տարբեր բնույթի շարժանկարներ, ներկայացումներ, հումորային, մարզական և այլ կարգի հաղորդումներ, քաղաքական միջոցառումների, նիստերի հեռարձակումներ (ի դեպ, սրանց լեզվական որակի խնդիրը առանձին քննության առարկա կարող է լինել) և այլն: Բովանդակային և ժանրային այսպիսի տարատեսակության պարագայում հեռուստատեսության լեզուն փաստորեն պատկերացում է տալիս հանրային հաղորդակցման տվյալ փուլում հանրության լեզվական մշակույթի որակի մասին ընդհանրապես, և ստորև բերվող նկատառումները հենց այդ որակը գնահատելու նպատակ նույնպես ունեն:

Խոսքը մտքի նյութական թաղանթն է, այն բնութագրում է մարդուն, ուստի այն անձանց, ովքեր առիթ են ունենում հեռուստաէկրանից բազմահազարանոց լսարանին խոսք ուղղելու, տեղին կլինի հիշեցնել Սոկրատեսին վերագրվող ասույթը՝ «Խոսի՛ր, որ ճանաչեմ քեզ»: Հանրային հեղինակություն վայելող ճշմարիտ մտավորականներից շատերի խոսքն, իրոք, ուսուցողական է և՛ բովանդակության, և՛ խոսքի մշակույթի կատարելության (որոնք, ինչ խոսք, փոխապայմանավորված իրողություններ են) առումներով: Չի կարելի ասել, որ մեր հեռուստատեսության հայերեն կատարյալ խոսք ընդհանրապես չի հնչում. այլ բան է, որ այն հաճախ աննկատ է մնում լեզվական ընդհանուր ոչ շատ մխիթարական համապատկերի վրա: Մտահոգիչն այն է, որ հաճախ, մեղմ ասած, օրինակելի չէ հենց հեռուստալրագրողների, հաղորդավարների, մեկնաբանների խոսքը: Այս փաստն այլ կերպ որակել չի կարելի, քան լրագրողներ «թո-

դարկող» ուսումնական հաստատությունների ոչ բարձր որակի, ապա և հեռուստատեսային գործը, հատկապես մասնավոր հեռուստաալիքները տնօրինողների մասնագիտական ապիկարության և անպատասխանատվության դրսևորում:

Ստորև ներկայացնելու ենք հիմնականում հեռուստատեսության լեզվի դիտարկման արդյունքում մեր արձանագրած կոնկրետ սխալներ, լեզվական նորմի խաթարումներ՝ որոշակի խմբավորմամբ և ըստ հարկի մասնագիտական մեկնաբանություններով: (Երևի ավելորդ է ասել, որ այս հրապարակումը հեռուստատեսության հնչող խոսքի որակն ըստ հնարավորին բարելավված տեսնելու մտահոգությամբ է թելադրված):

1. *Բառագործածության սխալներ*. - Սխալների ու շեղումների զգալի մասը բառապաշարի, բառագործածության ոլորտին է վերաբերում: Դրանք զարմանալիորեն հանդիպում են նույնիսկ հանրայնորեն ճանաչված և իրենց կոչումով խոսքի մշակույթ ուսուցանելու հավակնություն ունեցող հեռուստագործիչների խոսքում: Ահա թե ինչ բառապաշարով է տիտղոսակիր հեռուստառադիոգործիչը հանրային հեռուստատեսությամբ դաս վարում լրագրության ասպարեզ մուտք գործել պատրաստվող երիտասարդների համար. «*Թիվի* դաշտում մնալու համար պետք է *բազաժ* ունենաս, *ռուչնոյ կլաձուլ* չես կարող մնալ այդ դաշտում, պետք է *բազաժ* ունենաս՝ 28կգ»: Իսկ քիչ անց՝ «Հիմա *հազվադեպ են հանդիպում ճիշտ խոսացող* հաղորդավարներ» (այս նախադասության մեջ երկու անճշտություն կա. *հազվադեպ* և *հանդիպել* կրկնաբանություն է, իսկ *խոսացող*՝ սխալկազմություն. ճիշտ ձևը՝ խոսող) կամ՝ «Հաղորդավարը երբեմն արտասանում է *ֆրազեր*» (փխ. *ֆրազներ*) և այլն: Իսկ սա էլ հայտնի երգչուհու խոսքից է. «Իմ այս կապույտ *սապոժկիները համահունջ* են սարոչեչկայիս հետ»: Դերասանուհու հարցազրույցից. «Ես ունեմ մի եղբայր, որը ինձ համար շատ *ավտորիտարնի* (ուզում է ասել՝ авторитетный) անձնավորություն է», «Դա իմը չէր, դա իմ *ամպուլան* չէր (ուզում է ասել՝ ампула)»:

Այս կարգի օրինակները, ցավոք, այնքան էլ հազվադեպ չեն:

Բառագործածության սխալների պատճառները տարբեր են՝ բառիմաստի ոչ ճիշտ ընկալում, համանուն կամ հնչյունական կազմի նմանություն ունեցող բառերի շփոթում, բառի սխալ կազմություն, ավելորդաբանություն, ոճական անհամապատասխանություն համատեքստին և այլն: Այս ամենը դժվար չէ գտնել ստորև թվարկ-

վող օրինակներում, որոնք ընտրել ենք հիմնականում հաղորդավարների և հանրությանը ոչ անհայտ որոշ գործիչների խոսքից: Այսպես. «Բյուջեն ուղղված է *ընչաքաղց* խավի կարիքների բավարարմանը» (Երևի նկատի ունի ընչագուրկ կամ չունևոր խավը), «Այս ճաշատեսակը պատրաստում ենք ոչ թե գազի վրա, այլ *ջեռուցման սիստեմով*» (նկարչի խոսքից. պետք է ասվեր՝ *ջեռոցում*), «Մաքսային միությունն մտնելով՝ չեմ կարծում, թե Եվրոպայի հետ մեր հույսերը *ի թերևս կլինեն*» (հայերեն խոսելու դեպքում ասում են *ի դերև կելեն*), «Պլաստիկ վիրահատվածները հիմա *ամոթանքի* զգացում չեն ապրում» (հաղորդավարուհի. պետք է ասեր՝ *ամոթի*), «Դա կամքի և արիության *հավատաքննություն* էր» («Երկիր մեդիա». հավատաքննությունը ինկվիզիցիան է, որն այստեղ գործ չունի. երևի *քրննություն* կամ *փորձություն* պիտի ասվեր), «Մեր օդաչուները լավ ծանոթ էին տեղանքին. նրանք խփվել են թշնամու *դավանանքի* արդյունքում» (Հ 1. պաշտպանության նախարարության պաշտոնյան երևի չի կողմնորոշվել *դավանանք, խարդավանք, դավադրություն* բառերի իմաստների մեջ), «Իսկ ինչպե՞ս չընկնել էքստրասենսերի (Ճիշտ ձևը՝ էքստրասենսների – Լ. Թ.) թիրախը» («Երկիր մեդիայի» հաղորդավարի սխալն արդյունք է *ծուղակն ընկնել* և *թիրախ դառնալ* դարձվածների բաղարկության), «Երգչուհի Ադելը բռնաբռնվել է չի կոմպլեքսավորվում իր *ոչ բարեկեցիկ* կազմվածքից» («Շանթ». երևի՝ *ոչ բարեկազմ տեսքից*), «Կիլիմանջարոյի գագաթին Նուրը *սասանում* է մեր եռագույնը» (փխ.՝ *ծածանում* է), «Տեղի կունենա ոգեշնչման հոգեհանգստի կարգ» (փխ. ոգեկոչման), «Կամուրջի բետոնյա ծածկասայլերը արդեն մաշվել են, հեռացել իրարից» (ճիշտը՝ ծածկասայլերը), «Մեր քաղաքական դաշտը հիմա *վակման* մեջ է» (այստեղ էլ մեկնաբանը *վակումում* օտար բառն է ընկալել որպես հայերեն *-ում* ածանցով կազմություն), «AREAL-ը անգլերեն տառերից կազմված *ապահովություն* է» (ուզում է ասել *հապավում*), «Թող պոպովներն ու լավրովները խոսեն, ժամանակ առ ժամանակ թող *հորջորջա* Ալիևը» (այս հաղորդավարուհին էլ շփոթել է *հոխորտալը* և *հորջորջելը*), «Մենք գնացել էինք հանգուցյալի ընտանիքին մեր ցավակցությունը *ավետելու*» (քաղաքական այս գործչին էլ պետք է հիշեցնել, որ *ավետել* բառը նշանակում է *բարի լուր հաղորդել*), «Հանրապետականը միշտ էլ ծանրակշիռ ու *մտածածին* որոշումներ է ընդունել» (նախ՝ *մտացածին* («սուտ, հնարովի») բառի ձևն է աղավաղվել, ապա և գործածվել է հակադիր

նշանակությամբ), «Աղցանը պատրաստում ենք հազարաթերթիկով» (երևի նկատի ունի հազարը), «Մենք անցյալ տարի անցանք համապետական ընտրությունների բռնով» (ճիշտ է՝ բռնով), «Այդ օրը նա որոշել էր վառարանը դնել, որի համար իջել էր *ձեղնահարկ*» (իջնել կարելի է *նկուղ* կամ *ներքնահարկ*, ձեղնահարկ բարձրանում են), «Այսօրվա երիտասարդները չեն գնահատում ժամանակը և ամեն ինչ թողնում են ճակատագրի *հեզնանքին*» (գուցե *քրմահաճույքի՞ն*), «Բռնության հետևանքով *մահացվածության* դեպք կա» (բառակազմական այս «գլուտի» հեղինակը Հ 1-ի հաղորդավարն է), «Որքանով է Ձեր կազմակերպությունը նպաստում, որ մարդիկ զգուշանան և իրենց *զեղչ* պահեն» (՝), «Դահլիճից մի ուրիշ կարգի ջերմություն է գալիս, գալիս ու *պարունակում է քեզ*» (ժողովրդական դերասանը մոռացել է *պարուրել* բառը), «Էստեղ փողոցն անցնելը սեփական կյանքը *մահապատժի* ենթարկելու նման մի բան է»: «Ես հոգվածներ եմ գրում *տոչորելու* մարդկանց հայրենասիրության ոգով» (փխ.՝ *տոգորելու*), «Կոչ ենք անում դադարեցնել մարտական գործողությունները և *զղջում ենք* մարդկային կորուստների համար» (փխ. ցավում ենք), «Սարդարապատում *հաղթանակելով* թուրքական բանակին՝ դրեցին Հայաստանի Հանրապետության հիմքը» (պետք է լիներ՝ *հաղթելով*. *հաղթանակելը* չեզոք սեռի բայ է և ուղիղ խնդիր չի առնում): «Պատահու մ է, որ բռնելուց հետո նորից *խայտը* կուլ տա» (փխ. *խայծը*) և այլն:

Հաղորդավարներից ոմանց էլ պետք է հիշեցնել (կամ տեղեկացնել), որ *ոմն* դերանունը և նրա հոգնակին՝ *ոմանք*, գործածվում են անձ ցույց տվող գոյականների փոխարեն, ուստի հետևյալ կիրառությունները շեղվում են հայերենի նորմից. «Ահազանգերից ոմանք կանխվել են, ոմանք ընթացքի մեջ են» (Արմնյուգ), «Ուզում ենք տուգանքներից ոմանց փոխարինել նախազգուշացմամբ» (Հ 1), կամ՝ «Հարությունը վնասվածքների *հովանու ներքո* է հանդես եկել ամբողջ այս տարվա ընթացքում» (կարելի էր ավելի հաջող ձևակերպել, ասենք՝ «վնասվածքներն ուղեկցել են Հարությունին»), «Տատիկս դերասան Շամիրխանյանի մասին այսպիսի մի *պատրվակ* է հիշում» (երևի՝ *դրվագ*), «Տոնը նշել են՝ ցուցադրելով զինվորների *կամայական* և պրոֆեսիոնալ հմտությունները» (Հ 1. պետք է լիներ՝ *կամային*), «Ռուսաստանի հավաքականը ճարահատյալ տեսք ունի» (փխ. *հուսահատ*, *հուսալքված*) և այլն:

Բառագործածության ոչ կանոնական դրսևորումներից հետաքրքիր են իմաստային կրկնաբանություններն ու բառերի հավելյալ-դային գործածությունը. սրանք նույնպես հետևանք են բառային իմաստների ոչ ստույգ ընկալման կամ խոսքի ճշգրտության պահանջի անտեսման: Ահա բազմաթիվ օրինակներից մի քանիսը. «Մենք հետևում ենք դեպքերին և կհաղորդենք բոլոր *նոր նորությունները*» (Շանթ, հաղորդավարուհի), «Կոնֆերանսին մասնակցում էին *հայտնի հեղինակությունները*» (Հ 2, հաղորդավար), «Ես առաջին անգամ և *լիիրավ իրավունքով* կարող եմ մեր Ամերիկայի հայրենակիցներին ասել «Երևանն է խոսում»» (Արմնյուզ), «Լուրի *խսկությունը ճիշտ էր*» (TV -5. պետք էր ասել «Լուրը ճիշտ էր» կամ «Լուրի խսկությունը հաստատվել էր»), *Մեկնարկը կսկսվի* 11-ին, քաղաքապետարանի մոտից (Հ 1. ճիշտ կլիներ՝ «մեկնարկը կտրվի» կամ «երթը կսկսվի», «երթը կմեկնարկի»), «Մենք ունենք հստակ առաջատար՝ Հովսեփ Հովսեփյանի գլխավորությամբ» (հաշվի առնենք, որ առաջատարը և գլխավորողը նույն Հովսեփ Հովսեփյանն է) և այլն:

Լեզվական ոչ բարձր մշակույթի առավել ակներև արտահայտություններ են բառերի հնչյունական կազմի աղավաղումները, ինչպես՝ «Խոսենք Ձեր ծրագրերից՝ *շրջակայություններ*, համերգներ» (փխ. *շրջագայություններ*), «Ինձ համար *հանելուքային* մրնաց...» (փխ. *հանելուկային*), «Տարիների ընթացքում կինը *իմաստանում* է», (փխ. *իմաստանում*), «Ադրբեջանական գործը կբերվի բարձր մարտական *պատրաստակամության*» (փխ. պատրաստության), «Գումարներ *մխսելու* համար դատվել է նախարար» (փխ. *մքսխելու*), «Չի կարելի նվաստացնել մարդուն՝ օգտվելով նրա *ոչ օգնական* վիճակից» (փխ. *անօգնական*) և այլն (բերված բոլոր նախադասությունները հաղորդավարների խոսքի նմուշներ են), «Մենք անցնում էինք *նկուղիով*» (Հ 1. երևի՝ *նկուղով*. սա մարզահամերգայինի տնօրենի խոսքից է), «Կարևորը պատճառները չեն, կարևորը *եղելիությունն* է» (Երևանի ավագանու անդամի խոսքից), «Ես առաջիններից մեկն էի, որ ստիպեցի հարգեն բեմի մարդկանց *ըստ արժանիքի*» (փխ. *ըստ արժանվույն*. երգչի խոսքից է), «Նկարեցինք մի *գույնավոր* տեսահոլովակ» (երգչուհու խոսքից) և այլն:

Երբեմն էլ աղավաղված են ներկայացվում հին հայերենով ավանդված խոսքային կաղապարներ, որոնք սովորաբար գործածվում են ոճավորման նպատակով: Ահա մեկ-երկու օրինակ. «Մենք պարտավոր ենք սիրել *միմյանցս*», «Բայց ասված է, որ սիրել *ըզ*

միմյանց» (Հ 1) (երկու դեպքում էլ աղավաղվել է սուրբգրային *սիրեցէ՛ք զմիմեանս* պատգամը), կամ՝ «*Ձայն բարբառո, ձայն անապատի*» (փխ. *ձայն բարբառոյ յանապատի*) և այլն:

Բառագործածական անճշտությունների մի զգալի մասն էլ հետևանք է հարանուն կամ էլ հոմանիշ բառերի իմաստային նրբերանգների չիմացության, այլև շփոթության: Ահա մի քանի բնորոշ օրինակներ. *հասկացություն - հասկացողություն*. «Մեր օրերում պարտաճանաչություն հասկացողությունը կորցրել է իր ակտուալությունը» (Արմնյուզ), *ուսանել - ուսուցանել*. «Բայց Ձեր հայրը ուսուցանել է Մարտիրոս Սարյանի մոտ» (Կենտրոն), «Կա՞յ այդպիսի ուսումնական հաստատություն, որտեղ երիտասարդը կարող է գնալ և ուսուցանել ատաղձագործություն» (ATV), *տեղի տալ - տեղիք տալ*. «Նյարդերը տեղիք են տվել և ինքնասպանության փորձ է արել» (Արմնյուզ), *որակ(վ)ել - որակավոր(վ)ել*. ««Դժբախտ պատահար». այսպես է որակավորվել դեպքը» (Արմնյուզ), *սանձագերծել - սանձահարել*. Ապրիլին ադրբեջանական կողմը սանձահարեց ռազմական գործողություններ (Հ 1), *հաճախել - այցելել*. «Ուրախ եմ, որ հաճախել եք մեզ մոտ՝ Ամերիկա» (Արմենիա), «Մենք հաղթեցինք շնորհիվ մեր զինվորի և Արցախի *այցելած* ազատամարտիկների» (Հ 1) և այլն:

Բառագործածության որոշ դեպքեր էլ, այս փուլում տակավին հակասելով լեզվական նորմին, այնքան տարածված են (և ոչ միայն լրատվամիջոցներում), որ թերևս հիմք են տալիս այդ բառերի մեջ իմաստային որոշակի տեղաշարժ նկատելու: Այսպես, *հավաքագրել* բառը, որն իր բառարանային իմաստով նշանակում է «շատերին վարձով հավաքել մի բանի համար, ներգրավել» (անձերի մասին), այսօր ավելի շատ կիրառվում է «մի բան գրանցելով, գրավոր ձևով հավաքել, ժողովել» իմաստով. օրինակ՝ «Ինֆորմացիան հավաքագրվում է մեր կողմից» (Արմնյուզ) և այլն:¹ Կամ *հավուր պատշաճի* դարձվածը, որ Է. Աղայանի բառարանում բացատրվում է որպես «օրվա պահանջներին, տվյալ հանգամանքներին համապատասխան» և հիմնականում բացասական կամ չեզոք կոննոտացիա ունի, այսօր կարծես թե ձեռք է բերում դրական գնահատողական նշանակություն՝ «պատշաճ կերպով, արժանի, վայելուչ ձևով», օր. «Մենք

¹ Այս կիրառությամբ բառը հայտնվել է նույնիսկ պետական հիմնարկների ցուցանակներին. «Հարկերի հավաքագրման բաժին» (Աջափնյակի թաղապետարանում) և այլն:

ստիպված ենք հրապարակել նախագահի և Բաֆֆի Հովհաննիսյանի հանդիպման մանրամասները, թեև համոզված ենք, որ դա հավուր պատշաճի կանի Բաֆֆի Հովհաննիսյանը» (Հ 1) և այլն: Վերջերս նույն ձևով *օրհասական* բառը (կազմված է *օրհաս*՝ «կյանքի վերջին օր, պահ, վախճան» հիմքից և նշանակում է «մահաբեր, սպանիչ, ճակատագրական, կյանքի ու մահու խնդիր հանդիսացող») ավելի ու ավելի հաճախ է հանդիպում *օրախնդիր* («արդիական, հրատապ, օրվա համար կարևորություն ներկայացնող») նշանակությամբ: Օրինակներ. «Այս մաքսակետի արդիականացումը արդեն օրհասական է դարձել» (Արմենիա), «Ջրային ռեսուրսների ղեկավարումը օրհասական խնդիր է» (Հ 1), «Արժևորել պարը՝ սա առավել քան օրհասական խնդիր է» (Հ 2) և այլն:

Հարկ ենք համարում կրկին արձանագրել, որ այս և նման կարգի այլ օրինակները, որքան էլ տարածված կամ տարածվելու միտված, այնուամենայնիվ շեղվում են արդի հայերենի նորմից և չեն ներդաշնակում խոսքի ճշգրտության պահանջին:

2. Խոսքի կառուցման սխալներ. - Խոսքի մշակույթի որակական բնութագիրը, բառընտրության ու բառագործածության հմտությունից բացի, ենթադրում է նաև բառերի կապակցման եղանակների ու միջոցների կիրարկման կանոնների, այսինքն՝ քերականական նորմի իմացություն: Այս վերջինը լեզվական նորմի կարևոր բաղադրատարրն է և առանձին քննություն է պահանջում:

Այստեղ առանց մասնավոր մեկնաբանությունների կներկայացնենք մեր արձանագրած այնպիսի խոսքային «վթարներ», որոնք արդյունք են մտքի ձևավորման տրամաբանական անհստակության: Ավելորդ է ասել, որ բառագործածության, քերականական, տրամաբանական սխալները փոխալսմանավորված են, հաճախ միաձուլվ են հանդես գալիս (պատճառներից մեկն էլ օտար լեզվամտածողության չհաղթահարված ազդեցությունն է):

Բերենք մի քանի բնորոշ օրինակ:

«Շանթ» հեռուստաալիքով հեռարձակվող երգի մրցույթի ժյուրիի անդամի գնահատականից. «Ձեր ձայնի տեմբրը մեր «X ֆակտորի» ամենահարուստ տեմբրն է, մանավանդ ներքևի չիստոտաներում շատ փափուկ է, պարզապես որպես լսողին շոյող ականջներ»: Ռեժիսորի հարցազրույցից. «Կյանքը կապված է սիմպատիաների վրա... Ես հիմա աշխատում եմ Տոլստոյի «Խոլստոմերի» հետ կապված մոտիվով» (Արմենիա):

Մրցանակ ստանալու առիթով երգչուհու շնորհակալական խոսքից. «Աշխատանքի, չարչարանքների արդյունքը քաղելու մի հաճելի պտուղ էր» (Հ 1):

Անկապակցության մի նմուշ էլ բերենք բարձրաստիճան սպայի խոսքից. «Բանակի ուտելիքը պետք է համապատասխանեցվի այնպես, որ մարդ երբ ուտի, իրեն զգա ինչպես տան ճաշ» (Հ 1):

ՀՀ վաստակավոր դերասանի հարցազրույցից. «Կան դերեր, որը ես կուզենայի, որ իմ պարագայով, ինձնով դուրս գա» (Հ 1):

Լեզվական կատարելությամբ չի փայլում նաև վաստակավոր արտիստուհու «խոստովանությունը». «Կինը իր զավակի համար կքերթի ունակ, եթե դա կսպառնի նրան» (Հ 1):

«Եթե ունեք նման ինֆորմացիա, տրամադրվեք, և ձեր նշված մարդիկ նույնպես կկալանավորվեն» (Հ 1, ՊԵԿ նախագահի խոսքից):

Իհարկե, սրանք օրինակներ են հիմնականում հրավիրյալ անձանց խոսքից, որը թերևս դժվար վերահսկելի է, սակայն պետք է նշել, որ հաղորդավարների խոսքի մեջ ևս երբեմն խաթարվում են հայերենի տրամաբանությունն ու քերականությունը: Բերենք օրինակներ. «Կիսաբաց լուսամուտների» հաղորդավարի խոսքից. «-Տիկի՛ն Սիլվա, եկեք Ձեր խոսքի մեջ համոզվենք կամ հակառակում ապացուցվենք դադարից հետո»: «Տնից հեռու» հաղորդման վարողն էլ անտեսում է շարահյուսական կանոնը. «Ես շտապում եմ տեսնել իմ կողմից շատ կարոտած Սյուզիին»:

Խոսքի տրամաբանության այլ խախտումների օրինակ. «Սկեսուրի նկատմամբ բացակայող հարզանքն ակնհայտ էր», «Մա՛մ ջան, ինձ քո օգնության կարիքն ա պետք» («Կյանքի կարուսել»), «Այդ երեխաներին պետք է անուշադրության կենտրոնում չթողնել» (Հ 1) և այլն:

Իհարկե, դիտարկումների այս շարքը կարելի է շարունակել, անդրադառնալ նաև զանգվածային լրատվության այլ միջոցների, լեզվակիրառության այլ ոլորտների խնդիրներին, նաև ձեռքբերումներին, որոնք, կարծում ենք, մասնագիտական առավել սնեռուն ուշադրության պետք է արժանանան:

Ամփոփելով կրկին ընդգծենք, որ հեռուստատեսությամբ և լրատվության այլ միջոցներով հնչող հրապարակային խոսքի որակը հասարակության մշակութային զարգացման ընդհանուր մակարդակի գնահատության կարևոր չափանիշներից է:

Ключевые слова - Языковая норма, отклонения, ошибки, употребление слов, построение речи, тележурналистика

Л. Г. Телян - Языковая норма современного армянского языка и язык телевидения. - В статье приводится ряд отклонений от языковой нормы и ошибок, зафиксированных автором в результате наблюдений языка телевидения. Эти отклонения классифицируются и оцениваются с позиций языковой нормы современного армянского языка.

Keywords: Linguistic usage, deviations, errors, use of words, building of speech, TV journalism.

L. G. Telyan - Linguistic Usage of the Modern Armenian Language and Language of TV - The article presents a number of deviations from the linguistic norm and errors, recorded by the author as a result of observing the language of television. These deviations are classified and evaluated from the standpoint of the linguistic norms of the modern Armenian language.

ԼԱՏԻՆԵՐԵՆԻ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ

ՆՄՈՒՇՆԵՐ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԾՈՐԾՈՐԵՑՈՒ «ՀԱՄԱՌՈՏ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՔԵՐԱԿԱՆԻ» ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՄԵԶ

Բանասիր. գիտ թեկնածու Տ. Ղ. Սիրունյան

Հիմնաբառեր: Հովհաննես Ծործորեցի, Հովհաննես Քոնեցի, ունիթորական կենտրոնի գործունեություն, Պրիսցիանուս, լատիներենի քերականություն, քերականական սեռ նշանակող ձևեր, անուն խոսքի մասի սահմանում, տերմինաբանություն:

14-րդ դ. քերական Հովհաննես Քոնեցու հայտնի աշխատության բազմաթիվ հատվածներ, ինչպես նախկինում ցույց ենք տվել մեր աշխատանքներից մեկում, թարգմանված են կամ որոշ տարբերություններով փոխադրված են լատին քերականներից, գլխավորապես Պրիսցիանուսից (6-րդ դ.), մասամբ նաև՝ Սպոնկիուսից (13-րդ դ.) և Պետրուս Հելիասից (13-րդ դ.)¹:

Հայտնի է, որ Հովհաննես Քոնեցին եղել է Քոնայի ունիթորական կենտրոնի հիմնադիրներից, աշակերտելով, ապա նաև գրչակցելով լատին քարոզիչ Բարդուղիմեոս Մարչադացուն՝ տեղեկացել է ժամանակի եվրոպական գիտությանը՝ աստվածաբանական, տրամաբանական և քերականական ուսմունքներին, ձեռք է բերել լատիներենի իրազեկություն և հմտություն: Քերականական նոր գիտելիքներն արտացոլվեցին նրա «Յաղագս քերականին» աշխատության մեջ, որը բացառիկ է իր և՛ ձևաբանական իրողությունների նորովի մեկնաբանություններով, և՛ շարահյուսական ընդարձակ նյութի ընդգրկումով:

¹ Տե՛ս Տ. Սիրունյան, Հովհաննես Քոնեցու քերականական երկի սահմանումների լատիներեն նախօրինակները // «Բանբեր Մատենադարանի», հմ. 24, Ե., 2017, էջ 122-140:

Գրեթե նույն ժամանակահատվածում՝ փոքր-ինչ վաղ, և նույն-
պիսի միջավայրում՝ Ծործորի ունիթորական կենտրոնում, գրվել է
նաև միարարական շարժման մեկ այլ երևելի վարդապետի՝ Հով-
հաննես Երզնկացու կամ Ծործորեցու քերականությունը՝ հայտնի
որպես «Համառատ տեսութիւն քերականի»: Նա, հիմնականում
հենվելով իր նախորդների, հատկապես՝ Հովհաննես Պլուզ Երզն-
կացու քերականության վրա և հաճախ կրկնելով նրան, այնուամե-
նայնիվ, բավականին ինքնուրույնություն է ցուցաբերել՝ կարողա-
նալով հայերենի քերականությունը մեծապես թոթափել հունաբան
խորթ ձևերից: Հունաբանությունները նշանակալի չափով հաղթա-
հարելով, այնուամենայնիվ, Ծործորեցին որոշակի ազդեցություն է
կրել լատին քերականներից:

Հովհաննես Ծործորեցին բնորոշվել է իբրև «քաջ լեզվագետ».
Լ. Խաչիկյանը նկատում է, որ քերականական որևէ իրողություն
քննելիս նա դիմել է նաև այլ լեզուների՝ հունարենի, լատիներենի,
պարսկերենի տվյալներին²: Ծործորեցու քերականության մեկ այլ
ուսումնասիրող՝ Լ. Խաչերյանը, սակայն, ցույց է տալիս, որ հունա-
րեն և պարսկերեն հիշատակումները իրականում բանաբաղադ-
րումներ են Ստեփանոս Սյունեցու, Գրիգոր Մագիստրոսի և Հով-
հաննես Պլուզ Երզնկացու քերականություններից, և որ ուշագրավ
է, Ծործորեցու ինքնուրույն օրինակները միայն լատիներենից են³:

Մինչ այս վեճը՝ Գ. Զահուկյանը արդեն իսկ մատնանշել էր
Ծործորեցու այդ ինքնուրույն հավելումը՝ գրելով. «Հունարենի հա-
մար բերելով Մագիստրոսի օրինակները՝ Երզնկացին համառոտ
մեկնության մեջ լատիներենը ներկայացնում է իր սեփական ծանո-
թությամբ. «Իսկ ի հռոմայեցոյն ևս յատուկ, քանզի յանուն պատա-
հական, որ ունիցի յանգի իւրում զուս՝ արական է, և որ ունի զա՝
իգական է, իսկ զում՝ չեզոք, այսպէս ալպուս, ալպա, ալպում, և որք
ոչ են պատահական անուն, այլ էական. ունին և այլ նշանակու-
թեան, զի արականն ունի առաջի իւր իք և իգականն էք և չեզոքն
ոք»⁴:

² Տե՛ս Լ. Խաչիկյան, Արտագի հայկական իշխանությունը և Ծործորի դպրոցը // «Բանբեր
Մատենադարանի», հմ. 11, Ե., 1973, էջ 179:

³ Տե՛ս Զովհաննէս Ծործորեցի, Համառատ տեսութիւն քերականի, աշխատասիրութեամբ՝
Լ. Խաչերեանի, Լոս Անճելըս, 1984, էջ 20-21:

⁴ Տե՛ս Գ. Զահուկյան, Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնա-
դարյան Հայաստանում, Ե., 1954, էջ 272:

Նկատենք, որ հենց միայն օրինակների ընտրությունը հուշում է լատիներենի քերականություններին ծանոթ լինելու հանգամանքը. *alba, albus, album* («սպիտակ») սեռանիշ ձևերը ամենատարածված օրինակներից են լատիներենի քերականական ձեռագրերում⁵: Իսկ արդեն որոշ ձևակերպումներ վկայում են, որ Հովհաննես Ծործորեցին նաև օգտվել է լատիներենի քերականական ուսմունքներից կամ առնվազն ծանոթ է եղել դրանց: Այսպես, քերականը դերանվան երկու սահմանում է տալիս՝ այն, ինչ հունատիպ քերականությունից է ավանդված. «Դերանունություն է բառ փոխանակ անուան առեալ՝ որոշեալ դիմաց յատկական», իսկ մեկնության մեջ մեկ այլ տարբերակ է նշում՝ «Սահմանի և այսպէս՝ դերանուն է մասն բանի յոլովական, եղեալ ի տեղի յատուկ անուանն, ստոյգ զդէմս նշանակէ»⁶: Այս սահմանման մեջ դերանունը մասնավորեցված է իբրև հատուկ անվանը փոխարինող բառ, որ տարբերվում է հունատիպ ձևակերպումներից: Հովհաննես Քոնեցին ևս դերանվան սահմանումը կառուցում է նույն անձնանշության հատկանիշի վրա՝ «Դերանուն է մասն բանի հոլովական, որ եղեալ լինի փոխանակ յատուկ անուան և նշանակէ զյատուկ իմն անձն»⁷:

Այս սահմանումներն ակնհայտորեն քաղված են լատին քերական Պրիսցիանուսի երկից, որտեղ նույն կերպ դերանունը դիտված է իբրև հատուկ անվանը փոխարինող բառ. “*Pronomen est pars orationis, quae pro nomine proprio uniuscuiusque accipitur personasque finitas recipit*” (= «Դերանունը խոսքի մաս է, որը կիրառվում է յուրաքանչյուր հատուկ անվան փոխարեն և ստանում է ճշգրիտ դեմքեր»)⁸:

⁵ Sté u *Ch. Thurot*, *Extraits de divers manuscrits Latins*, Paris, 1869, էջ 164, 215, 218, 241 և այլն:

⁶ *Յովհաննէս Ծործորեցի*, նշվ. աշխ., էջ 267:

⁷ *Յովհաննէս Քոնեցի*, Յաղագս քերականին, Ե., 1977, էջ 172:

⁸ *Prisciani Institutionum Grammaticarum Libri I-XII, ex recensione Martini Hertzii*, Lipsiae, 1859, p. 577:

Եթե նկատի առնենք ունիթորական այս երկու գործիչների երկերի ստեղծման հավանական ժամանակը⁹, ապա պետք է կարծել, որ հիշված սահմանումը առաջինը ձևակերպել է Ծործորեցին: Բացի այս՝ ակնհայտ է, որ Ծործորեցու սահմանումն ավելի մոտ է լատիններեն նախօրինակին, և հակառակը՝ Քոնեցու սահմանումը շեղվում է բառացի համապատասխանությունից, այսպես՝ “*personas finitas*”-ը Ծործորեցին փոխադրել է՝ պահպանելով բառային և քերականական համարժեքությունը՝ «ստոյգ զոհմս», իսկ Քոնեցու ձևակերպումը համեմատաբար ազատ է. “*finitas*”-ը՝ «զյատուկ», հավելադիր «իմն», հոգնակի “*personas*”-ը՝ «անձն»:

Անվան առաջին սահմանումը Ծործորեցին տալիս է ըստ Թրակագու թարգմանչի՝ «Անուն է մասն բանի հոլովական, մարմին կամ իր նշանակելով. մարմին, որզան *քար*. եւ իր, որպէս *խրատ*. հասարակաբար եւ յատկապէս, որզունակ՝ մարդ և յատկապէս, որզոն՝ Պաւղոս», և դարձյալ երկրորդաբար այն սահմանում է մեկնության հատվածում. «Իսկ այլք այսպէս սահմանեն, թէ անուն է մասն բանի, որ նշանակէ զգոյացութիւն որակութեամբ»¹⁰: Այսպես նաև Հովհաննէս Քոնեցին անվան հունատիպ սահմանումից բացի երկրորդ սահմանումն է տալիս՝ հավելելով «գոյացութիւն և որակութիւն» հատկանիշները. «Անուն է մասն բանի հոլովական, որ նշանակէ զգոյացութիւն կամ զենթակայ բանին, հանդերձ որակութեամբ յատուկ կամ հասարակ»¹¹: Նույն հատկանիշներով է բնորոշվում անունը Պրիսցիանուսի քերականության մեջ՝ “*Proprium est nominis substantiam et qualitatem significare.*” (= «Անվանը հատուկ է ցույց տալ գոյություն և որակ») ¹²:

Մեկ այլ հատվածում՝ բայի սահմանման մեկնության մեջ, Ծործորեցին, վերլուծելով «բայ է բառ անհոլով» ձևակերպումը, հետևյալ հարցադրումն է արել. «Բայց խնդրի, թե զիարդ բառ ասե

⁹ Ենթադրվում է, որ Հովհաննէս Ծործորեցու աշխատությունը ստեղծվել է 1314-22 թթ. (տե՛ս *Յովհաննէս Ծործորեցի*, նշվ. աշխ., էջ 58-62), Հովհաննէս Քոնեցին 1328 թ. սկսել է աշակերտել լատին եպիսկոպոս Բարդուղիմեոսին, և հավանական է, որ իր քերականությունը գրած լինի այդ թվականից հետո, երբ ուներ լատինական կրթություն, հակառակ կարծիք, որը նրաքերականության ստեղծման ժամանակը կոխտարկեր մինչև 1328 թ., հայագիտության մեջ չի քննարկվել (տե՛ս *Յովհաննէս Քոնեցի*, նշվ. աշխ., էջ 41-42):

¹⁰ *Յովհաննէս Ծործորեցի*, նշվ. աշխ., էջ 195-97:

¹¹ *Յովհաննէս Քոնեցի*, նշվ. աշխ., էջ 164:

¹² *Priscianus*, op. cit., p.155:

գրայ, և ոչ թե բայ է մասն բանի խոնարհական»¹³, և փաստացի բայի հնարավոր հատկանիշ է դիտել նրա հոլովական կամ խոնարհական լինելը՝ ի հակադրություն թարգմանչից փոխանցված «անհոլով» հատկանիշի: Բայի այս ըմբռնումը ամբողջացրել է Հովհաննես Քոնեցին՝ այն ձևակերպելով արդեն սահմանման մեջ. «Բայ է մասն բանի հոլովական, թարց անգման, հանդերձ ամանակաւ և դիմօք, որ նշանակէ ներգործութիւն և կիր կամ զերկոսեանն»¹⁴: Այս նոր «հոլովական» հատկանիշը վկայված է Քոնեցու քերականության միակ ձեռագրում, որ պահվում է Վենետիկի Մխիթարյանների գրադարանում, բայց քանի որ հատկանիշը անսովոր էր, շեղվում էր ավանդական ըմբռնումից, քննական բնագիրը կազմող Լ. Խաչիկյանը «հոլովական»-ը փոխել է «անհոլով»-ի և ծանոթագրել, թե ձեռագրային տվյալը սխալ է՝ որպես ապացույց՝ հիշատակելով Թրակացու սահմանման սկիզբը. «Բայ է բառ անհոլով...»¹⁵:

Բայի այս թեքական հատկանիշը և ընդգծումը, որ այն ունի եղանակ, բայց ոչ հոլով, այսինքն՝ թեքվում է յուրովի և ոչ անվան պես, ձևակերպել է դարձյալ Պրիսցիանուսը. “Verbum est pars orationis cum temporibus et modis, sine casu, agendi vel patiendi significativum” (= «Բայը խոսքի մաս է՝ ժամանակներով և եղանակներով հանդերձ՝ առանց հոլովի, ներգործելու կամ կրելու նշանակությամբ») ¹⁶, կամ՝ “Proprium est verbi actionem sive passionem sive utrumque cum modis et formis et temporibus sine casu significare” (= «Բային բնորոշ է ցույց տալ ներգործություն կամ կրավորականություն կամ երկուսն էլ՝ եղանակ, դեմք և ժամանակ հանդերձ՝ առանց հոլովի») ¹⁷:

Լատիներենի քերականության որոշ նշաններ կան նաև Օործորեցու գործածած տերմինաբանության մեջ, այսպես, օրինակ, հետաքրքրական է, որ մակբայը նկարագրելիս նա թվարկում է թարգմանչից ավանդված տեսակները, բայց «ըղձից նշանականք»-ի մեկնության մեջ նշում է «ըղձական մակբայ» տերմինը¹⁸, որի

¹³ *Յովհաննես Օործորեցի*, նշվ. աշխ., էջ 234:

¹⁴ *Յովհաննես Քոնեցի*, նշվ. աշխ., էջ 176:

¹⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 176: Հայտնի է, որ Քոնեցու քերականությունը մեզ է հասել եզակի ձեռագրով՝ Վի. 293. Լ. Խաչիկյանն այդ ձեռագրի հիման վրա է կազմել «Յաղագս քերականին» երկի բնագիրը:

¹⁶ *Priscianus*, op. cit., 369:

¹⁷ Նույն տեղում, էջ 55:

¹⁸ Տե՛ս *Յովհաննես Օործորեցի*, նշվ. աշխ., էջ 284:

համարժեքը լատիներեն քերականության մեջ “optativa”-ն է¹⁹, և որը բացակայում է հայերենի հունատիպ քերականություններում: Այս տեսակը այնուհետև հիշատակել է Հովհաննես Քոնեցին²⁰, իսկ լատինատիպ քերականության արդեն ուշ շրջանում՝ 17-րդ դ., նաև Կղեմես Գալանոսը²¹: Ծործորեցու նույն մեկնության մեջ տրված է նաև «յորդորական» տերմինը²², լատիներեն համարժեքը՝ “hortativa”²³, այն ևս իբրև ինքնուրույն տեսակ գործածել է Քոնեցին²⁴, ապա կայունացել է հետագա նույնպիսի քերականություններում²⁵:

Սակայն նկատենք, որ Հովհաննես Ծործորեցին չի փորձում լատինականությունն քարոզել և հաստատել հայերենի մեջ՝ ընդօրինակելի դարձնելով օտար կաղապարները, նա լատիներենի քերականությանը հիմնականում դիմում է իր մեկնությունները լրացուցիչ նյութով օժտելու, քերականական որևէ ըմբռնում հանգամանակից ներկայացնելու նպատակով, այսինքն՝ կուրորեն չի փոխառել, այլ ցուցաբերել է գիտական լայնախոհություն և բարեխղճություն: Հետևաբար, կարելի է արձանագրել, որ ժամանակի ունիթորական հոսանքի այս երկու քերականները օտար աղբյուրներից օգտվել են բոլորովին տարբեր նպատակադրումներով. եթե Ծործորեցին լատիներենից արված լրացումներով ջանում էր ապահովել ավելի լայն հայացք դեպի քննարկվող նյութը, ապա Քոնեցին եղավ լատինական ավանդույթի անքննադատ հետևորդը՝ գրեթե թարգմանաբար (փոխադրությամբ) վերարտադրելով լեզվի կարևորագույն բաժինը՝ շարահյուսությունը:

Ключевые слова: Ованес Цорцореци. Ованес Крнеци, деятельность униторской школы, Присцианус, грамматика латинского языка, формы, означающие грамматический род, определение именной части речи, терминология.Цорцореци.

¹⁹ Տե՛ս *Priscianus*, նշվ. աշխ., էջ 86:

²⁰ Տե՛ս *Յովհաննէս Քոնեցի*, նշվ. աշխ., էջ 182:

²¹ Տե՛ս *Կղ. Գալանոս*, Քերական և տրամաբանական ներածութիւն առ յիմաստասիրութիւնն շահելոյ, Հռոմ, 1645, էջ 109 և այլն:

²² Տե՛ս *Յովհաննէս Ծործորեցի*, նշվ. աշխ.,:

²³ Տե՛ս *Priscianus*, նշվ. աշխ.,:

²⁴ Տե՛ս *Յովհաննէս Քոնեցի*, նշվ. աշխ.,:

²⁵ Տե՛ս *Յովհաննէս Կոստանդնուպոլսեցի*, Զտութիւն հայկաբանութեան կամ երականութիւն հայկական, Հռոմ, 1674, էջ 118 և այլն:

Т. Г. Сирунян - Образцы влияния латинской грамматики в труде «Краткое описание грамматики» Ованеса Цорцореци. - В статье показано, что в грамматике автора 14-го века Ованеса Цорцореци, в частности, в описании морфологии наличествуют некоторые формулировки и термины заимствованные из латинской грамматики. Автор их использовал в основном для наделения своих комментариев дополнительным материалом, для детальной презентации какой-либо грамматического восприятия, то есть здесь нет слепого подражания, а налицо широта научного кругозора и добросовестность средневекового армянского учёного.

Keywords: Hovhannes Tsortsoretsi, Hovhannes Khernetsi, work of unitor's center, Priscianus, Grammar of Latin language, forms of grammatical voice, difination of parts of speech, terminology.

T. G. Sirunyan - Examples of the Influence of Latin Grammar in the Work of Hovhannes Tsortsoretsi "A Brief description of Grammar". - The article shows that in the grammar of the 14-th century author Hovhannes Tsortsoretsi, in particular, in the description of morphology, there are some formulations and terms borrowed from Latin grammar. The author used them mainly to endow his comments with additional material, for a detailed presentation of any grammatical conception, that is, he did not blindly borrow, but showed scientific open-mindedness and conscientiousness.

«ԿՈՐՈՆԱ» ԲԱՂԱԴՐԻՉՈՎ ՆՈՐԱԿԱԶՄ ԲԱՌԵՐԻ

ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Բանասիր. գիտ. թեկնածու Մ. Ա. Սարգսյան

meri.sargsyan@isec.am

ԼԻ ավագ լաբորանտ Ն. Պ. Խաչիբաբյան

khachibabyan.naira@gmail.com

Հիմնաբառեր: Նորակազմ բառեր, կորոնավիրուսային բառապաշար, բառապաշարի հարստացում, խոսակցական լեզու, հայերենի բառապաշար, դիպվածային բառեր

Հայերենը, ինչպես մյուս բոլոր կենդանի լեզուները, շարունակ փոփոխվող համակարգ է, որն անընդհատ զարգանում է և կատարելագործվում: Հասարակական զարգացումներին զուգընթաց շարունակական զարգացման մեջ է գտնվում նաև լեզվի բառապաշարը: Բառապաշարը լեզվի բաղադրիչ տարրերից ամենաարագ փոփոխվողն է: Ի հայտ են գալիս նոր իրողություններ, որոնք իրենց արտացոլումն են գտնում բառապաշարում: Լեզվի բառապաշարը ընդլայնվում է մի շարք եղանակներով՝ տվյալ լեզվի բառակազմական հնարավորությունների, ինչպես նաև օտար կառույցների ներմուծման միջոցով: Մեր լեզվի բառապաշարի հարստացման գործում վերջին շրջանում մեծ է ոչ միայն օտարաբանությունների, փոխառությունների դերը, այլև բառակազմական նոր հնարավորությունների: Վերջին երկու տարիների ընթացքում աշխարհում տիրող COVID-19 համավարակը ոչ միայն հայերենի, այլև բոլոր լեզուների բառապաշար նոր բառերի ներմուծման պատճառ կամ խթան դարձավ: Կորոնավիրուսային համավարակին բնորոշ բազմաթիվ նոր բառեր և արտահայտություններ ներմուծվեցին հայերենի խոսակցական բառաշերտ, բացի այդ՝ ի հայտ եկան դիպվածային մեծաթիվ բառապատճենումներ և նորակազմություններ: Կորոնավիրուսային բառապաշարի որոշ նորակազմություններ արդեն իսկ տեղ են գտել աշխարհի հեղինակավոր բառարաններում և ամրագրել իրենց կայուն տեղը տվյալ լեզվի հիմնական բառաֆոնդում: Հայերենի դեպքում իրավիճակը մի փոքր այլ է. նորակազմությունները դեռևս

առօրյա-խոսակցական լեզվի բառաֆոնդում են, դրանց մի մասը հիմնական բառաֆոնդ ներմուծվելու հեռանկար ունի:

Սույն հոդվածում մեր ուսումնասիրության նյութը կորոնավիրուսային համավարակով պայմանավորված նորակազմ այն բառերի քննությունն է, որոնք բաղադրված են *կորոնա* բաղադրիչով: Ուսումնասիրության նյութ են դարձել համացանցում կիրառվող նորակազմությունները:

Յուրաքանչյուր լեզու իր պատմական զարգացման ընթացքում ստեղծում է բառակազմության իր միջոցներն ու եղանակները: Ժամանակի ընթացքում լեզվից իսպառ վերանում են բառակազմական որոշ երևույթներ, առաջ են գալիս նոր իրողություններ, որոնք հնարավորություն են տալիս ավելի կենսունակ եղանակներով բառեր կազմելու: Հայերենն ունի բառակազմության բավական ճկուն հնարավորություններ: Ինչպես բոլոր լեզուները, այնպես էլ հայերենն ունի բառակազմության իրեն բնորոշ եղանակները: Ժամանակակից հայերենում բառակազմության եղանակները երեքն են՝ *բառաբարդում*, *ածանցում* և *հապավում*:

Ս. Էլոյանը նշում է. «Բառաբարդությունները ստեղծվում են ոչ միայն նոր հասկացություններ արտահայտելու պահանջով, այլև երկու կամ ավելի իմաստներ մեկ բառով արտահայտելու անհրաժեշտությամբ, որ հաղորդակցման առավել տնտեսված և արտահայտիչ միջոց է¹»: Ժամանակակից արևելահայերենում ընդունված է բառաբարդման երեք ճանապարհ՝ ա) լեզվում եղած բառակազմական կաղապարներից կամ բառակազմական համաբանությամբ, բ) շարահյուսական կապակցություններից, գ) պատճենումներից: Ըստ Ս. Էլոյանի՝ բառաբարդությունները ժամանակակից հայերենում առաջացել են հիմնականում երեք ճանապարհով՝ շարահյուսական կապակցություններից, լեզվում եղած բառակազմական կաղապարներից և բառափոխառություններից²:

Լեզվի յուրահատկություններից մեկն էլ նոր միավորներով բառային կազմի համալրումն է, որը տեղի է ունենում *նորաբանությունների* հաշվին: Նորաբանությունները ստեղծվում են հայերենի բառակազմական օրինաչափություններին համապատասխան: Նըշենք նաև, որ նորակազմ բարդությունները առավելապես համա-

¹ Ս. Էլոյան, Բառագիտություն. Ժամանակակից հայոց լեզու, հ. 1, Ե., 1979, էջ 251:

² Տե՛ս, Վ. Առաքելյան, Ա. Խաչատրյան, Ս. Էլոյան, Ժամանակակից հայոց լեզու, հատոր 1, Ե., 1979, էջ 250:

դրական տիպի կազմություններ են: Այդ առումով նորակազմ բարդությունների մեջ առանձնացվում են հետևյալ տեսակները՝ ա) բուն կամ իսկական, բ) կցական կամ կապակցական, գ) կրկնական և դ) հատվածական³: Եվ պետք է նկատել, որ քանակական առումով գերակշռում են իսկական բարդությունները, որոնք կարելի է դասակարգել մի քանի եղանակով. ա) ըստ բաղադրիչների միացման ձևի (հոդակապով և առանց հոդակապի), բ) ըստ բաղադրիչների խոսքիմասային պատկանելության, գ) ըստ բաղադրիչների թվի (երկանդամ, եռանդամ, քառանդամ):

Ներկայումս նորաբանությունները, հատկապես դիպվածային նորաբանությունները, ամենից շատ տարածված են համացանցում: Եթե տասնամյակներ առաջ լեզվի զարգացման և կանոնարկման համար ուղենշային էր գեղարվեստական գրականության լեզուն (գերակա ոճ էր և էապես ազդում էր հրապարակախոսական, խոսակցական ոճերի վրա), ապա այսօր հակառակ պատկերն է: Մեդիադաշտի բազմազանության և գերհասանելիության հետևանքով էապես ընդլայնվել են դրա լեզվի ազդեցության սահմանները: Ավելին՝ գեղարվեստական լեզուն է ինչ-որ չափով սկսել օգտվել ՁԼՄ-ների արտահայտչաձևերից⁴: Մեզ հանդիպած օրինակների մեծ մասը դիպվածային նորաբանություններ են, որոնց միջոցով հեղինակները ցանկացել են արտահայտել նոր երևույթներ, կամ մի քանի երևույթի իմաստն ամփոփ ներկայացնել մեկ բառով, օրինակ՝ **կորանահումոր, կորոնա-տուրիզմ, կորոնա-վիճակ, կորոնա-գերություն** և այլն: Այս նորաբանությունների միջոցով խոսքն ավելի արտահայտիչ է դառնում, և ոճական նոր բնույթ է հաղորդվում տեքստին:

Ինչպես գիտենք, դիպվածային կազմությունների դեպքում կարևորվում է ներազդելու գործառույթը: Տեղեկությին զուգահեռ՝ դրանք շատ դեպքերում փոխանցում են լրագրողի վերաբերմունքը: Այս առումով դիպվածային բառերով արտահայտվելու միտումը չափազանց արդիական է⁵: Դիպվածային բառերը, ի տարբերություն նորաբանությունների, ավելի սակավ են անցում կատարում հիմնական բառաֆոնդ և մեծ տարածում չեն գտնում, քանի որ կիրառ-

³ Տե՛ս, *Էդ Աղայան*, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Ե., 1984, էջ 221:

⁴ *Յու. Ավետիսյան, Լ. Թեյլան, Լ. Սարգսյան*, Արդի հայերենի բառապաշարը, ԵՊՀ հրատ., 2020, էջ 18:

⁵ Նույն տեղում, էջ 31:

վում են տվյալ համատեքստում: Դրանց հատուկ են բաղադրիչների արտառոց համադրումները, ինչպես՝ **կորոնա-զում, կորոնա HIT, կորոնաֆուտբոլ, կորոնաֆաշիստ** և այլն: Հաճախ այս բառերը հանդիպում են վերնագրերում կամ հեշթեգերի տեսքով՝ **կորանապար, կորոնաթայմ, կորոնա-պատկեր, կորոնա-ամառ, կորոնագարուն, կորոնա-դիահերձարան** և այլն:

Մեր ուսումնասիրության ընթացքում առավել հաճախ հանդիպել են գծիկով գրվող բարդություններ, ինչպես՝ **կորոնա-առօրյա, կորոնա-հասցե, կորոնա-տուրիզմ, կորոնա-գերություն, կորոնա-մեկուսացում, կորոնա-ցուցակ, կորոնա-դար, կորոնա-համավարակ, կորոնա-մահճակալ, կորոնա-մոդա, կորոնա-նորաձևություն, կորոնա-ճգնաժամ** և այլն: Մեզ հանդիպած բոլոր օրինակներում *կորոնա* բաղադրիչը հանդես է գալիս նախադաս դիրքում: Այս միջոցով փորձ է արվում մի բառի միջոցով արտահայտել մի քանի բառի իմաստ, բացի այդ՝ օրինակները հիմնականում հանդիպել են վերնագրերի տեսքով: Այս մեթոդով հեղինակները ցանկանում են խոսքին ոճական յուրահատուկ բնույթ և արտահայտչականություն հաղորդել:

Կորոնա բաղադրիչով բարդված հոդակապավոր կառույցներ չեն հանդիպում, քանի որ կորոնա բաղադրիչը գերազանցապես առաջադաս դիրք ունի, ինչպես՝ **կորոնաժամանակներ, կորոնաֆաշիստ, կորոնագրույց, կորոնապար, կորոնագարուն, կորոնագատիկ, կորոնահումոր** և այլն:

Հարադիր բարդություններ նույնպես հանդիպում են, ինչպես՝ **կորոնա վիրուս, կորոնա մեդիավիրուս, կորոնա HIT, կորոնա-վիրուսի շենք, կորոնա հիվանդություն, կորոնա սթայլ, կորոնա հիվանդ, կորոնա ֆուտբոլ, կորոնա վիճակագրություն** և այլն: Ինչպես տեսնում ենք, հարադիր բարդությունների մեծ մասը կարող էր լինել նաև համադրական, ինչպես՝ **կորոնա վիրուս – կորոնավիրուս, կորոնա-վիրուս, կորոնա հիվանդ – կորոնահիվանդ, կորոնա-հիվանդ** և այլն: Քանի որ այդ բարդությունները հիմնականում դիպվածային են, այդ իսկ պատճառով կոնկրետ կանոնի չեն ենթարկվում, և գրության ձևն էլ կախված է հեղինակի հայեցողությունից: Հաճախ հանդիպում են միևնույն բառի երկու տարբերակ, ինչպես, օրինակ՝ **և՛ կորոնա թայմ, և՛ կորոնաթայմ**: *Կորոնավիրուս* բարդությունն առհասարակ գրության տարբեր եղանակներով է հանդես

գալիս, օրինակ՝ **կորոնա վիրուս, կորոնա-վիրուս, կորոնավիրուս, (կորոնա)վիրուս**:

Ըստ խոսքիմասային պատկանելության դասակարգելիս դրժվար չէ նկատել, որ հիմնականում գոյականական կազմություններ են հանդիպում: Մեր հետազոտության ընթացքում հանդիպել են նաև սակավաթիվ ածականներ, ինչպես, օրինակ՝ **կորոնա-սպորտային** և **կորոնա-քաղաքական**: Խոսքիմասային պատկանելությունը կախված է նրանից, թե որ խոսքի մասին է բաղադրվում *կորոնա* բաղադրիչը:

Ամփոփելով նշենք, որ թեև *կորոնա* բաղադրիչով նորակազմությունները հիմնականում դիպվածային բնույթ ունեն, սակայն, կարծում ենք, որ դրանց մի մասը միտում ունի ներմուծվելու հիմնական բառաֆոնդ, ինչպես՝ **կորոնաժամանակներ, կորոնահիվանդ (կորոնա հիվանդ), կորոնա-պատկեր** և այլն: Դրանք արդեն իսկ հաջողությամբ իրենց տեղն ամրապնդել են հայերենի առօրյա-խոսակցական բառապաշարում: Անշուշտ, լեզվում ամրագրվելու և բառարաններում արձանագրվելու համար որոշակի ժամանակ է պետք: Քանի դեռ չի ավարտվել համավարակը, դժվար է ասել, թե այդ բառերից քանիսը կամ որոնք կհամալրեն մեր լեզվի հիմնական բառաֆոնդը:

Ключевые слова: новообразованные слова, коронавирусная лексика, обогащение словарного запаса, разговорный язык, армянская лексика, окказиональные слова.

М. А. Саргсян, Н. Хачибабян - Исследование новообразованных слов с компонентом «корона». - Языки весьма чувствительны к изменениям внешнего мира. Не случайно лексика языка является наиболее быстро меняющимся компонентом языка. Как и все языки, армянский язык не остался в стороне от изменений в словарном запасе, вызванных распространением в мире коронавируса COVID-19. Словарный запас обогащается разными способами. В последние годы варваризмы, заимствования, а также новообразованные слова стали источником обогащения словарного состава армянского языка. В армянский разговорный лексикон вошло много новых слов и выражений, характерных для коронавируса, кроме того, появилось большое количество окказиональных кальк и новообразованных слов. Некоторые новообразованные слова коронавирусных словарей уже нашли место в ведущих словарях мира и заняли постоянное место в основном словарном составе языка. В случае с армянским языком ситуация несколько иная. Новообразо-

вания все еще находятся в словаре разговорного языка, некоторые из них имеют перспективу быть включенными в основной словарь. В данной статье предметом нашего исследования является изучение новообразованных слов, связанных с коронавирусом, в состав которых входит компонент "корона". Исследование основано на новообразованных словах, используемых в Интернете.

Keywords: newly-formed words, coronavirus vocabulary, vocabulary enrichment, colloquial language, Armenian vocabulary, occasional words.

M. A. Sargsyan, N. P. Khachibabyan – Examination of Newly-formed Words with Component “Corona”. Languages are quite sensitive to changes of the outside world. It is no coincidence that language vocabulary is the fastest-changing component of language. Like all languages, the Armenian language was not left out of the vocabulary changes due to the COVID-19 coronavirus in the world. Vocabulary is enriched in many different ways. In recent years, barbarisms, borrowings, as well as newly -formed words have become a source of enrichment of the Armenian language vocabulary. Many new words and phrases typical to the coronavirus were included in the Armenian colloquial vocabulary, in addition, a large number of occasional calques and newly-formed words appeared. Some newly-formed words of coronavirus vocabularies have already found a place in the world's leading dictionaries and established their permanent place in the main vocabulary of the language. In the case of Armenian, the situation is a little different. The new formations are still in the vocabulary of colloquial language, some of them have the prospect of being included in the main vocabulary. In this article, the subject of our study is the examination of newly-formed words due to coronavirus, which are composed of the component “corona”. The research is based on newly-formed words used on the Internet.

ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՐԲԱՌՆԵՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՈՒՇԱԳՐԱՎ

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Լույս է տեսել ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի տնօրեն, ք. գ. դ. Վ. Լ. Կատվայանի նոր գիրքը՝ նվիրված ՀՀ Կոտայքի մարզի բարբառային վիճակին¹: Մինչ այդ տպագրվել էր հեղինակի նույն բնույթի 1-ին գիրքը՝ նվիրված ՀՀ Գեղարքունիքի մարզի բարբառների ուսումնասիրությանը²:

Այս երկու աշխատությունները արդյունք են «Հայաստանի Հանրապետության բարբառային համապատկեր» ծրագրի շրջանակում Վ. Կատվայանի գլխավորությամբ ինստիտուտի բարբառագիտության բաժնի աշխատակիցների կատարած դաշտային աշխատանքների և հետազոտությունների:

Բավականին աշխատատար ուսումնասիրություններ են, որոնք հարստացնում են հայ բարբառագիտությունը արդի խոսվածքների թե՛ նկարագրություններով, թե՛ տեսական դիտարկումներով:

Եթե մի կողմ թողնենք մինչև 19-րդ դարը բարբառների վերաբերյալ եղած կցկտուր տեղեկատվությունը և դիտարկումները, ապա կարելի է փաստել, որ հայ բարբառագիտությունը՝ իբրև առանձին գիտաճյուղ, ձևավորվում է 19-րդ դարում և նկատելի զարգացում և առաջընթաց է ապրում 20-րդ դարում՝ դառնալով հայերենագիտության հիմնական ուղղություններից մեկը: Ք. Պատկանյանի, Լ. Մսերյանցի, Հ. Աճառյանի աշխատություններով սկիզբ է առնում հայոց բարբառների նկարագրության, դասակարգման գործը, որում հետագայում կարևոր ներդրում են ունենում Ա. Ղարիբյանը, Էդ. Աղայանը, Գ. Ջահուկյանը, Հ. Մուրադյանը և ուրիշներ:

Ձևավորվում են բարբառների գիտական ուսումնասիրության առանձին ուղղություններ՝ նկարագրական, պատմական, համեմատական և այլն, մշակվում են համապատասխան մեթոդներ: Չնա-

¹ Վ. Լ. Կատվայան, Հայաստանի Հանրապետության բարբառային համապատկեր, Գիրք 2, Կոտայքի մարզ, Ե., 2020:

² Վ. Լ. Կատվայան, Հայաստանի Հանրապետության բարբառային համապատկեր, Գիրք 1, Գեղարքունիքի մարզ, Ե., 2018:

յաճ կատարված հսկայական աշխատանքին, այնուամենայնիվ բարբառների ուսումնասիրության հիմնական եղանակը մնում էր նկարագրականությունը: Ինչպես վերջին ժամանակներս Վ. Համբարձումյանն է նկատում, «Հայ բարբառագիտությունն առայսօր հեռու է տեսական (ոչ նկարագրական) բարբառագիտություն լինելուց», մինչդեռ «այս խնդիրը բարբառագիտական նորագույն ուսումնասիրությունների «միջուկը» պետք է լինի...»³:

Ահա հենց այս տեսակետից պետք է գնահատել այսօր լեզվի ինստիտուտում կատարվող հետազոտությունները: Դեռևս 20-րդ դարի 70-ական թվականներից սկսած՝ իրագործվեց հայերենի բարբառագիտական ատլասի համար անհրաժեշտ նյութերի հավաքման ծրագիրը, որի մշակումը թույլ կտար գաղափար կազմել ՀՀ-ում գործածվող բարբառների և խոսվածքների աշխարհագրական տարածվածության, փոխհարաբերությունների, քանակի, լեզվական առանձնահատկությունների մասին: Այնուհետև, «Հայաստանի Հանրապետության բարբառային համապատկեր» համալիր ծրագիրը մշակվում է 2010-ական թթ.՝ «նպատակ ունենալով հետազոտել երկրի բոլոր բնակավայրերի լեզվական յուրահատկությունները, ձևավորել դրանց բարբառային բնութագրերը և առանձին հատորներով ներկայացնել ըստ ՀՀ մարզերի»⁴:

Ծրագրի շրջանակում ինստիտուտի բարբառագիտության բաժնի աշխատակիցների կողմից հետազոտվել են Գեղարքունիքի, Կոտայքի և Արագածոտնի մարզերի բնակավայրերի ներկայիս խոսվածքները: Այս ծրագրի իրականացման գործընթացում մեծ է Վ. Կատվալյանի ներդրումը: Չնայած կատարված հետազոտությունների արդյունքների վերաբերյալ զեկուցումներ են կարդացվել, հոդվածներ են գրվել, բայց դրանք ի մի են բերվել, ամբողջացվել և խոսվածքների լեզվական բնութագրերով ներկայացվել են Կատվալյանի կողմից վերը նշված երկու ծավալուն գրքերում: Ընդհանրապես բարբառներին վերաբերող զեկուցումներում, հոդվածներում, մենագրություններում նա քննում է արդիական հնչեղություն

³ Վ. Գ. Համբարձումյան, Բարբառագիտական նոր տիպի ուսումնասիրություն՝ նույն հիմքով գրական լեզվի և նույն ճյուղի բարբառների առնչությամբ (գրախոսություն) // «Լեզու և լեզվաբանություն», թիվ 1, 2016, էջ 85:

⁴ Տե՛ս Հայաստանի Հանրապետության բարբառային համապատկեր, Գիրք 1, Գեղարքունիքի մարզ, Ե., 2018, էջ 8:

ունեցող խնդիրներ, կատարում է առանձին բարբառների կամ բարբառախմբերի վերաբերող դիտարկումներ, որոնք, միաժամանակ, կարևոր նշանակություն ունեն հայերենի ուսումնասիրության համար:

Ինչպես նախորդ, այնպես էլ այս՝ Կոտայքի մարզին վերաբերող գրքում Վ. Կատվալյանը կարևորում է խոսքի մշտական գրանցումները և նրանց հետազոտությունը. «Լեզվում տեղի ունեցած և տեղի ունեցող գործընթացները դիտարկելու, զարգացման միտումները և ընթացքը վերլուծելու համար կարևոր է խոսքի պարբերական հետազոտությունը»⁵:

Ճիշտ դիտարկում է հատկապես տարածքային հաղորդակցում իրականացնող խոսվածքների դեպքում, եթե նկատի ունենանք, որ բարբառի (խոսվածքի) բանավոր և «անվերահսկելի» բնույթը պայմանավորում է նրա կենդանի, բնական ու անկաշկանդ ընթացքը պետական հոգածության տակ գտնվող գրական լեզվի համեմատությամբ: Բացի դրանից՝ խոսվածքները «զգայուն են» արտալեզվական այնպիսի երևույթների նկատմամբ, ինչպիսիք են գրկանքները, տեղահանությունները, որոնց ընթացքում կարող են առանց գրառվելու կորստյան մատնվել՝ պայմանավորված իրենց բանավոր բնույթով: Բարբառախոսների տեղաշարժերը ստեղծում են լեզվական նոր իրավիճակ: Եվ վերջապես, եթե նաև նկատի ունենանք գրական լեզվի բարբառային «ծագումը», ապա պարզ կլինի, թե որքան կարևոր է բարբառների (խոսվածքների) հետազոտությունը:

Նախաբանում Վ. Կատվալյանը, ընդհանրացնելով հետազոտության արդյունքները, նշում է, որ Կոտայքի մարզի լեզվական պատկերը հետևյալն է. 1) մոտ մեկուկես տասնյակ բնակավայրերում հաղորդակցվում են հայերենի խոսակցական տարբերակով. դրանք այն բնակավայրերն են, որոնք բնակչության անհամասեռ կազմ ունեն և ձևավորվել են տարբեր նպատակներով խորհրդային տարիներին, 2) մոտ երկու տասնյակ բնակավայրերում հաղորդակցվում են խառը խոսվածքներով, 3) մոտ երեք տասնյակ բնակավայրերում հաղորդակցումն իրականացվում է Մուշի, Բայազետի, Խոյ-Մարադայի, Վանի, Մակուի, Արծափի, Արարատյան բարբառների տարբեր խոսվածքներով:

⁵ Նույն տեղում:

Եվ բարբառային հայերենի այս համապատկերով պայմանավորված կառուցվածք ունի գիրքը: Այն բաղկացած է երեք մասից:

Առաջին մասում առանձին գլուխներով ներկայացված են վերը նշված բարբառները և նրանց դրսևորումները: Նախապես ընդհանուր տեղեկություններ են տրվում բարբառի մասին, այնուհետև ներկայացվում են այդ բարբառների և խառը տիպի խոսվածքների լեզվական առանձնահատկությունները: Երկրորդում ներկայացված են մարզի բնակավայրերը՝ իրենց բարբառային բնութագրերով, ընդ որում լեզվական հիմնական հատկանիշների շրջանակում: Երրորդում ընդգրկված են բարբառային խոսքի նմուշներ՝ գիտական տառադարձությամբ: Գրքի վերջում զետեղված է խոսվածքների եղած բարբառային բառերի ցանկը: Նկատենք, որ խոսվածքների լեզվական առանձնահատկությունները ներկայացնելիս հեղինակը նկատի է ունեցել այնպիսի հատկանիշներ, որոնք կարող են օգտագործվել նաև հետագա բարբառագիտական քննություններում:

Վ. Կատվալյանի աշխատությունը սոսկ լեզվաբանական ուսումնասիրություն չէ: Աշխատության համակողմանիությունն ապահովված է նաև պատմական, ժողովրդագրական տեղեկություններով, այսպես կոչված դաշտային աշխատանքների ընթացքում գրառվել են բազմաթիվ ժողովրդագրական, սովորության, կենցաղային բնույթի բանահյուսական նյութեր՝ հայ ժողովրդի այս կամ այն հատվածին բնորոշ: Այսպիսով, Վ. Կատվալյանի «Հայաստանի Հանրապետության բարբառային համապատկեր. Գիրք 2, Կոտայքի մարզ» աշխատությունը լուրջ ներդրում է հայ բարբառագիտության մեջ թեկուզև այն առումով, որ գրառվել, մշակվել և գիտական հետազոտության են ենթարկվել մարզի տարածքում գործածվող արդի խոսվածքները, ձեռք բերված տվյալների համադրմամբ տրվել են դրանց լեզվական բնութագրերը, ներկայացվել է մարզում գործածվող բարբառների և բարբառային հատկանիշների տարածման պատկերը, կատարվել են բարբառագիտական կարևոր դիտարկումներ:

Ըստ «Հայաստանի Հանրապետության բարբառային համապատկեր» համալիր ծրագրի՝ ՀՀ-ում գործածվող խոսվածքների և ուսումնասիրությունը շարունակական բնույթ է կրելու, ուստի սպասենք հաջորդ գրքերին:

Բանասիր. գիտ. թեկնածու Թ. Ա. Ասոյան

ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտը լույս է ընծայել «Հայոց լեզվի պատմության հարցեր» ժողովածուի IV պրակը (Ե., 2020, 293 էջ): Գիրքն ընդգրկում է լեզվի զարգացման տարբեր փուլերում հայերենի բառային կազմի և քերականական կառուցվածքի փոփոխություններին ու նրանց օրինաչափություններին, հայերենի և մյուս լեզուների բառապաշարային աղերսներին, գրաբարի բառապաշարին, օտար և բնիկ շերտերի հարաբերակցությանը, փոխառյալ բառերի գործառական յուրահատկություններին նվիրված հետազոտություններ:

*

* *

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ լույս է տեսել Բ. Գ. Թ., դոց. Ա. Վ. Գալստյանի «Արևելահայ գեղարվեստական վավերագրության լեզուն (19-րդ դ. 60-ական - 21-րդ դ. 10-ական թթ.)» աշխատության երկրորդ գիրքը (Ե, «Էդիթ Պրինտ» հրատ., 2021, 192 էջ):

Հայ վավերագրության լեզվի բնագավառում իր լուսման ներդրած լեզվաբան Ա. Վ. Գալստյանը վճարեց իր պարտքը հայ նոր գրականության գեղարվեստական այդ ժանրի հանդեպ՝ լեզվաբանական աշխատանքի իր օրինակը տալով արդի հայերենագիտությանը լեզվի և գրականության առնչության ուսումնասիրության մեջ:

Այդ գրքի հատորների առանցքային նշանակությունն այն է, որ բաց է անում հեռանկարներ հայերեն գեղարվեստական խոսքի մյուս ժանրերի (նամակագրություն, հրապարակագրություն և այլն) լեզվաբանական քննության համար:

Գիրքն ունի, կարելի է ասել, ավանդական գլխակարգություն՝ տվյալ ժանրի երկերի քերականական առանձնահատկությունների քննություն (էջ 3-106), անդրադարձ դրանց բնագրերի պատկերավորման-արտահայտչական համակարգին (էջ 107-176): Աշխատությունն ունի գիտական կոռ և ստույգ ծանուցման ապարատ (օգտա-

գործված գրականության ցանկ՝ լույս տեսած հայերեն և ռուսերեն, այլ աղբյուրներ՝ բառարաններ, քարտեզներ և պարբերական մամուլ, նաև բնագրային օրինակների սկզբնաղբյուրներ՝ համառոտագրություններով): Նման ապարատի անբասիր ներկայացումը ամեն մի գիտական հետազոտության հավաստիության մեծ շեմ է ապահովում. մենք դա տեսնում ենք նաև այս աշխատության մեջ:

Ա. Գալստյանը այս աշխատության մեջ ևս հանդես է բերել մանրամասն և փաստերով ապացուցող համոզող ուսումնասիրողի կարողություն: Նրանում քննության առարկա լեզվական յուրաքանչյուր իրողություն, որ դիտարկվում է գեղարվեստական վավերագրության ժանրային հայեցակետից, ավելի է ամբողջացնում պատկերացումը հայերենի իմաստային-գործառական հնարավորությունների վերաբերյալ:

Հեղինակը գրում է, որ «գիրքը նախատեսված է բանասերների, ոճաբանների և ընթերցող լայն շրջանակների համար», և դա միանգամայն տեղին է ասված:

*
* *

Երևանի պետական համալսարանի հայ բանասիրության ֆակուլտետի գիտական խորհրդի երաշխավորությամբ լույս է տեսել նույն համալսարանի հայոց լեզվի ամբիոնի վարիչ, պրոֆ. Յու. Ս. Ավետիսյանի ծավալուն աշխատությունը՝ «Հայագիտության գուգահեռականներում» վերտառությամբ (Ե., 2021, 340 էջ). դա պոլիգրաֆիական պատշաճ մակարդակով տպագրություն է, որ պատիվ կբերեր ցանկացած նման գործով զբաղվող այլ հիմնարկության:

Գրքում, ինչպես նշվում է անոտացիայում, «գետեղված են հեղինակի՝ տարբեր տարիների հրատարակած հոդվածները»: Այն բաժանված է երեք մասի՝ արդի արևելահայ գրական լեզվի («Ժամանակակից գրական արևելահայերենը. շրջանաբաժանում, կանոն և զարգացում». էջ 7-184), գրական արևմտահայերենի («Արևմտահայերենի արդի վիճակը և զարգացման հիմնախնդիրները». էջ 185-278) և լեզու ու գրականություն առնչության («Լեզու և գրականություն. արժեք և արժևորում. էջ 279-337») տարաբնույթ հարցերի, ընդամին՝ որում առաջինում ընդգրկված է յոթ, երկրորդում և երրորդում՝ հինգական, միմյանցից տարբեր աշխատանք: Դրանք գիտական առանձին հոդվածներ են, լեզվաբանական այս կամ այն աշ-

խատության վերաբերյալ քննական վերլուծություն, մշակութային գործչի, լույս տեսնող գիտական հանդեսի, նաև լեզվաբանի մասին կամ նրա աշխատության վերաբերյալ գրախոսություն, խմբագրական գիտարկում և այլն:

Յու. Ավետիսյանի հոդվածների մի յուրահատկություն են հարցի քննարկման հրատապությունը. տվյալ խնդրի լուծման վերաբերյալ իր կայացրած առաջարկները և կոնկրետ ուղիների մատնանշումը. Այս հատկանիշները բարձրացնում են հեղինակի գիտական քննության արժեքը, հնարավորություն ստեղծում շոշափվող հարցերի վերաբերյալ լրացուցիչ կամ ավելի հավաստի լուծումներ տալու: Հեղինակը ամեն մի հոդվածում դրած է եղել ուշադրության առարկա կարևոր, այժմեական խնդիր, քննել է այն իր ամբողջության մեջ և տվել, կարելի է ասել, ըստ իր պատկերացման, հավանական լուծումներ:

Այդ գիրքը հեղինակի լեզվագիտական գործունեության ներկայացումն է՝ նախկինում լույս տեսած հրապարակումների մեջ: Թերևս այդ է պատճառը, որ դրանք մեկ գրքում ի մի բերելիս անդրադարձ չի եղել գիտական ապարատի զետեղմանը. հոդվածների վերլուծություններում, բնականաբար, կան տողատակի մեծ թվով ծանուցումներ (շուրջ երեք հարյուր), սակայն դրանք ընթացիկ են, իսկ գրքին անհրաժեշտ էր օգտագործված և հարակից գրականության, կամ համառոտագրությունների ցանկ, անվանացանկեր և այլն:

Գիրք-ժողովածուն, իրոք, հաջողված է և հաջողություն է բերում հեղինակին:

*
* *

Գրիգոր Տաթևացին միջնադարի մեծ մտածող է, ժամանակի հանրագիտակ իմացության տեր հոգևորական, որի հարուստ ժառանգության մի կարևոր մասը հասել է մեր օրերը, հիմք հանդիսացել թե՛ անցյալում և թե՛ նոր ժամանակներում գիտության և կյանքի այլ բնագավառի վերաբերյալ տարբեր ուսումնասիրությունների:

Նա հայտնի է իբրև նշանավոր փիլիսոփա, մանկավարժ, «գրչության արվեստի» տեսաբան, միջնադարյան տնտեսագետ, եկեղեցական գործիչ և բաբունապետ, նրա գրական ժառանգության մեջ

մեծ տեղ ունեն «Գիրք հարցմանց» աշխատության տպագիր հատորները և այլ աշխատություններ, որոնք էլ վերջին տարիներին դարձել են բանասիրական-լեզվագիտական նոր քննության առարկա:

2002 թ. սկսյալ հրատարակվել են հեղինակի մի շարք աշխատություններ, և այժմ նրա նշանավոր «Գիրք հարցմանց»-ի աշխարհաբար թարգմանությունը ամբողջացնում է այդ շրջագիծը՝ դառնալով հասանելի լայն ընթերցողին: Այդ աշխատություններից յուրաքանչյուրը Գրիգոր Տաթևացու գրական ժառանգության այս կամ այն ոլորտի համապարփակ ուսումնասիրություն է, որոնց համադրումով ամբողջական պատկերացում է ստեղծվում հեղինակի ընդգրկուն հայացքների վերաբերյալ:

Վերջերս ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի հայոց լեզվի պատմության բաժնի ավագ գիտաշխատակից բ. գ. թ. Ս. Գրիգորյանի մանրակրկիտ աշխատասիրությամբ ներկայացվեց grigortatevatsi.am կայքը, որտեղ զետեղված են Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց»-ի բնագիրը, նրա աշխարհաբար թարգմանությունը, ինչպես նաև հեղինակի վերջին տարիներին լույս տեսած մի շարք աշխատություններ: Ս. Գրիգորյանի նախորդ տարիներին կատարած բանասիրական-բնագրագիտական, այժմ էլ թարգմանական աշխատանքը մեծ աստվածաբան Գրիգոր Տաթևացու ժառանգության տարածման առումով միանգամայն արժանի է դրվատանքի և շնորհակալության:

Տարիների վեր մեր ամսագրի էջերում լայն լուսաբանության են արժանանում ինստիտուտի գիտական կյանքին վերաբերող կարևոր միջոցառումներ, որոնք մի տեսակ ամփոփումն են այդ հաստատության տարեկան գիտահրատարակչական լայն գործունեության: Այս համարում ևս ներկայացնում ենք նման միջոցառումներից մի քանիս:

03. 02. 2021

ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում կազմակերպված միջոցառումը նվիրված էր 1980-ական թթ. կեսերին նրանում ծնունդ առած, հետագայում ՀՀ հեռուստատեսության և ռադիոյի պետական կոմիտեի ծրագրերում գործող «Ակունք» ազգագրական համույթին:

Հայտնի է, որ պատմաբան հայ երգի երախտավոր, ծնունդով շատախցի Հայրիկ Մուրադյանի դուստր, ինստիտուտի գիտաշխատակից Մարո Մուրադյանի անմիջական ջանքերով և ղեկավարությամբ էստեղծվել այդ խումբը, որ հետագայում բարձրացավ համույթի (անսամբլի) մակարդակի և լայնճանաչում գտավ մեր

հանրապետությունում:

Անուրանալի է ինստիտուտի՝ այդ տարիների ղեկավարության ընդառաջումը նրման ազգանվեր նախաձեռնության գործում: «Ակունք»-ի ծնունդը ժամանակին երևույթ էր, մշակութային յուրօրինակ զարթոնք, նոր մոտեցում համագային խնդիրներին և վերջին հաշվով՝ ազգագրական-երգային արժեքների վերադարձին:

Հայ ավանդական երգը ժողովրդին մատուցելու գաղափարի շուրջ համախմբվեցին ինստիտուտի տարբեր բաժինների գիտաշխատողներ, նաև այլ հաստատությունների մրտավորական ներկայացուցիչներ. կարելի է ասել, թե այդ տարիներին երգում էր գրեթե ողջ ինստիտուտը:

Ռադիո և հեռուստատեսային տարբեր ելույթներ եղան, անվանակոչվեց խումբը՝ «Ակունք», աննախադեպ հաջողություններ ունեցավ և լայն ճանաչում ձեռք բերեց հանրապետությունում:

Բացի Վան-Վասպուրականի ավանդական պարերգերից, ազգային ազատագրական պայքարի երգերից, օրորոցայիններից, սիրերգերից, որոնք այնպիսի գուրգուրանքով, ջեր-

մությամբ ընտրում էր համույթի ղեկավարը, «Ակունք»-ի երգացանկ ներմուծվեցին ազգագրական այլ գոտիներ ներկայացնող երգ-մարգարիտներ՝ շնորհիվ հավաքչական այն աշխատանքների, որ ծավալեցին ինստիտուտի երիտասարդ գիտաշխատողները հանրապետության գրեթե ողջ տարածքում:

Նկատենք նաև, որ Մ. Մուրադյանը նվիրյալ հայագետ էր, միջին հայերենի և հայ բարբառների ինքնատիպ ուսումնասիրող: Հայերենի գիտական ուսումնասիրության բնագավառում իրենց տեղ ունեն նրա բարբառագիտական և միջին հայերենին վերաբերող բառագիտական ուսումնասիրությունները: Իսկ երաժշտական արվեստի մեջ նա ուներ նուրբ և յուրօրինակ ճաշակ, որ նկատելի է ազգագրական երգերի համերգային պատրաստության ընթացքում:

Մ. Մուրադյանը նախանձախնդիր էր ազգային երգին, առաջացած տարիքում անգամ նա ստացավ մասնագիտական կրթություն՝ ուսանելով Կոմիտասի անվան կոնսերվատորիայում, անմնացորդ նվիրվեց հայ ժողովրդական-ազգագրական երգի ճանաչմանը և տարածմանը:

Նա իր նվիրյալ ու բարի անունն է թողել ինստիտուտում սկիզբ առած «Ակունք»-ի ըստեղծման պատմության մեջ: Հիշենք, որ հայ երգի մունետիկներից մեկի՝ «Ակունք»-ի ակունքը եղել է ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտը, և որի համար պարտական ենք Մ. Մուրադյանին, նաև ինստիտուտին՝ առհասարակ:

Բ. Գ. Թ. Զ. Բառնասյան

15. 02. 2021

Հայերենի պատմահամեմատական ուսումնասիրության բնագավառում ականավոր դեմք է դանիացի լեզվաբան-հայերենագետ Հոլգեր Պեդերսենը (1867-1953 թթ.): Նրա ամենամեծ ծառայությունը հնդեվրոպական լեզվաբանությանը, թերևս, այն է, որ գտնում է, թե ցեղակից լեզուների հրնչյունական առնչության մեջ հայերենի պայթական բաղաձայնական համակարգը (*բ, պ, փ* և այլն) ամենից հնավանդ (արխաիկ) է, ուստի ըստ այդմ առաջարկվում է վերանայել լեզուների գործող, ավանդական (Գրիմի անունով հայտնի՝ տեղաշարժի ենթարկված) համակարգը, որը և կատարվեց (վերանայվեց) հետագայում՝ նախկին խորհրդային անվանի լեզվաբանների կողմից:

Դա, ինչ խոսք, համեմատական լեզվաբանական գիտության մեջ մեծ խիզախում էր, իսկ հայերենի առումով՝ միանգամայն իրական ներդրում վերջինիս ավելիստույգ և ավելի օբյեկտիվ չափանիշներով քննության համար: Այդ առաջարկը, ինչպես նշվեց, միայն շատ ուշ, մի քանի տասնամյակ անց իրականացվեց՝ պատշաճող հեղինակների առաջ քաշած («ձայնածերպային») տեսությանը. այս վերջինը այսօր հայերենի համեմատական ուսումնասիրության արդիական խնդիրներից է:

Եվ այս նկատառումով էլ ՀՀ ԳԱԱ Ն. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում տեղի ունեցավ սեմինար՝ «Հոլգեր Պեդերսենը և հայերենագիտության արդի խնդիրները» թեմայով: Սեմինարին ղեկուցումով հանդես եկավ ինստիտուտի ընդհանուր և համեմատական լեզվաբանության բաժնի վարիչ Վ. Գ. Համբարձումյանը:

Նա նախ հակիրճ անդրադարձավ անվանի հայագետի կյանքի կարևոր դրվագներին և համեմատաբանական-լեզվաբանական գործունեությանը՝ կապված հնդեվրոպական, սեմական, ֆիննաուգրական և այլ լեզուների հնչյունաբանությանը, քերականական

կառուցվածքին՝ վերաբերող բազմապիսի հարցերի հետ, որոնց լուծումը մեծ բոլոր դեպքերում մեծ նպաստ է բերել գիտության տվյալ բնագավառի զարգացմանը:

Պեդերսենը հայերեն սովորել է Մխիթարյանների միջավայրում, գիտելիքները (հատկապես հայերեն բանավոր խոսքի մեջ) ամբողջացրել էր Պետերբուրգի հայերի շրջանում, նույնիսկ գրել է հայերեն գիտական հոդված Վիեննայի Մխիթարյանների ամսագրի համար:

Հայերենի պատմությանը, հայերենի և հարևան լեզուների առնչություններին, ցուցական դերանուններին նվիրված համեմատաբանական - ծագումնաբանական աշխատությունները, որոնք նաև ժամանակին թարգմանվել են հայերեն, մինչև օրս չեն կորցրել իրենց արդիականությունը, և տասնամյակներ շարունակ եղել են հայ և օտարազգի լեզվաբանների ամենաօգտագործելի աշխատություններից: Հայերենի ինքնուրույն և ավելի արխաիկ լեզու լինելու վերաբերյալ Պեդերսենն արել է այն, ինչ, կարելի է ասել, չի արել հայերենագետ-հնդեվրոպաբաններից ոչ ոք՝ թե՛ ժամանակին և թե՛ հետագայում: Պեդերսենի դերն

այս առումով բացառիկ է, թեև ոչ լիովին հասկացված կամ հետևության արժանացած:

Զեկուցումն ընթանում էր հետևյալ հարցերի շուրջ՝ ի՞նչ է տվել Հ. Պեդերսենը իր ժամանակի հայագիտությանը, ինչպիսի՞ն է նրա տեսությունը լեզուների բնույթի, դասակարգման, ըստ այդմ՝ նաև հայերենի պատմության ուսումնասիրության առումով, ի՞նչ է նուստրատիկ լեզվաբանությունը, և ո՞րն է նրա կարևորությունը աշխարհի լեզուների ճանաչման մեջ:

Նշվեց, որ Պեդերսենի հայերենագիտական աշխատություններում առաջ են քաշվում մի շարք վարկածներ, փորձ է արվում ստուգաբանելու բազմաթիվ բառարմատներ, հայերենի տվյալները համեմատվում են հնդեվրոպական նորահայտ լեզուների՝ իտալիական (հինանատոլիական), թուրքական լեզուների, ինչպես նաև ոչ հնդեվրոպական (այլ ընտանիքի) լեզուների հնարավոր համարժեքների հետ:

Հայ լեզվաբանության պատմությանը նվիրված աշխատանքներում Պեդերսենի հայերենագիտական գործունեությունը ուսումնասիրված է բավականին ընդհանուր գրծերով:

Ըստ զեկուցողի՝ Պեդերսենի մեծ ավանդը և գիտական խիզախ կռահումներն ու հարցադրումները հորդոր են մեր օրերում այդ անվանի համեմատաբան-հնդեվրոպաբանի, հայագետի գիտական ժառանգության նոր ուսումնասիրության՝ վերը նշված և դրանց առնչվող հարցերի շրջանակում:

21.02. 2021

Հայտնի է, որ 2000 թ. «Յունեսկո»-ի որոշմամբ փետրվարի 21-ը համարվում է «Մայրենի լեզվի օր», որ Հայաստանում նշվում է արդեն տարիներ շարունակ: Մեծ է մայրենի լեզվի դերը՝ որպես տվյալ ազգի ինքնության առաջին կարգի վկայություն: Հայերենի դեպքում այն ստանում է ավելի մեծ կարևորություն՝ ոչ միայն հանրության միասնության, այլև պատմական անցյալի առումով:

Եվ այդպես, ամեն տարի ՀՀ-ում այդ կարևոր տոնը նշվում է տարբեր բնույթի միջոցառումներով: ԳԱԱ լեզվի ինստիտուտն այդ առիթով նախկինում նախաձեռնում և կազմակերպում էր հանդիպումներ՝ լեզվի մաքրությանը և պահպանությանը նախանձախնդիր մտավորականներին հուզող

հարցերը բարձրաձայնելու համատեղ քննարկելու և լուծումներ փնտրելու նպատակով:

Այս տարի ևս Մայրենի լեզվի միջազգային օրը նշվեց ինստիտուտի գիտաշխատողների ջանքերով, որին, ի դեպ, մասնակցում էին նաև Գավառի պետական համալսարանի դասախոսների մի սովորական, ուսանողությունը, ընդ որում առցանց քննարկման ձևով: Շոշափվեցին առաջնահերթ և կարևորագույն հարցեր: Դրանցից մեկը վերաբերում էր լեզվի դպրոցական և բուհական դասագրքերին, վերջիններիս ոչ միայն բովանդակությանը, այլև լեզվին:

Բուռն քննարկման արժանացան նաև մայրենի լեզվի մաքրության և պատշաճ գործածության, զանգվածային լրատվության միջոցների լեզվին, լեզվական մեղանշումներին վերաբերող հարցերը:

Արևմտահայերենի պահպանության հարցին անդրադարձավ հայտնի քաղաքական գործիչ Հ. Հակոբյանը, որ իր փաստերով ու օրինակներով հիմնավորվող խոսքում կրկին շեշտեց հայկական գաղթօջախներում և մայր հայրենիքում արևմտահայերենի գործածությունն ապահովելու խնդիրները չանտեսելու և վճռա-

կան քայլեր անելու անհրաժեշտությունը:

Հետաքրքիր ու բովանդակալից քննարկումից գոհ մնացին բոլորը: Վստահաբար կարելի է ասել, որ օրվա խորհրդին համահունչ էր միջոցառումը, որի համար պետք է արժանին մատուցել կազմակերպիչներին:

03. 03. 2021

Հայ բարբառագիտության բնագավառում որոշակի վաստակ ունի Անահիտ Հանեյանը. 2021 թ. մարտի 3-ին կրդառնար 80 տարեկան: Անվանի բարբառագետի հիշատակին խոսք են ասել իր աշխատակից գործընկերները. նշել մի քանի դրվագ նրա գործունեությունից:

Ա. Հանեյանը հայ բարբառների նյութերի հավաքչական աշխատանքի ոգին էր: Նրան հաջողվում էր բարբառախոսներից գրառել նաև ժողովրդական խաղիկներ, ազգագրական արժեք ունեցող տեղեկություններ, քաղում էր տեղեկատու անձից առավելագույնը, իր գործընկեր աշխատակիցներին նույնպես վարժեցնելով նման աշխատանքին: Նրա կողմից գրանցված բարբառային նյութերը հնարավորություն են տալիս կատարելու տարաբնույթ ուսումնասիրություն-

ներ՝ ըստ լրացուցիչ տեղեկությունների:

Նա անխոնջ բարբառագետ էր, իր գործին անմնացորդ նրվիրված գիտնական: Ծնված լինելով ադանահայի ընտանիքում, մանկուց տեղյակ էր այլ լեզուների՝ արաբերեն, ֆրանսերեն և այլն, իսկ 1947 թ. ընտանիքով գալով հայրենիք՝ ստանում է բանասիրական հիմնավոր կրթություն և մասնագիտանում է հատկապես հայ բարբառների ուսումնասիրության բնագավառում:

Դպրոցական և ուսանողական տարիներին նրա հետաքրքրությունները մեծ են եղել, սակայն որոշել է ընդունվել Գիտությունների ակադեմիայի Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի ասպիրանտուրա: Այն հաջողությամբ ավարտելուց հետո Ա. Հանեյանը անմիջապես սկսում է աշխատել նույն ինստիտուտում՝ նախ որպես գիտաշխատող, հետո՝ ավագ գիտաշխատող, ապա՝ բարբառագիտության բաժնի վարիչ:

Հայ բարբառագիտության մեջ լեզվաբանական աշխարհագրության կամ բարբառագիտության՝ որպես ինքնուրույն գիտակարգի վերջնական առանձնացումը կապված է 1977 թ. կազմված «Հայերենի

բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրի» հետ, որի ստեղծմանը, ի թիվս անվանի բարբառագետներ Հ. Մուրադյանի, Ա. Գրիգորյանի, Դ. Կոստանդյանի, Մ. Մուրադյանի, իր մասնակցությունն ունեցավ նաև Ա. Հանեյանը:

Ա. Հանեյանը հեղինակել է «Տիգրանակերտի բարբառը» մենագրությունը: Սա առաջին ծանրակշիռ ուսումնասիրությունն է, որում քննության է առնվում և ինչ-որ չափով կործատից փրկվում եղեռնազարկ Ամիդ-Դիարբեքիի հայության լեզուն ու խոսքը: Տիգրանակերտի բարբառի մասին մինչ Հանեյանի այս աշխատասիրությունը որևէ այլ ուսումնասիրություն չի եղել, միայն Հ. Աճառյանն է «Հայ բարբառագիտություն» աշխատության մեջ հինգ էջի սահմաններում տվել բարբառի համառոտ նկարագիրը: Ա. Հանեյանը այդ մենագրության մեջ հանգամանալից քննության է առել Տիգրանակերտի բարբառի հնչյունական համակարգը, շեշտափոխական, պատմական և փոխադեցական հնչյունափոխությունը: Քննվում են նաև անվանական, դերանվանական, բայական համակարգերը՝ և՛ համաժամանակյա, և՛ տարաժամա-

նակյա հայեցակետերով: Գիրքն ունի նաև հավելված, որում տրվում են նմուշներ բարբառով, գրաբար-բարբառ բառացանկ և բարբառային բառերի բառարան:

Արևմտյան բարբառները կորստից փրկելու գործին լրծված գիտնականը «Հայ բարբառագիտական ատլաս» ժողովածուում հրատարակում է «Եդեսիայի բարբառը» ուսումնասիրությունը՝ կատարելով բարբառին վերաբերող կարևոր ճշգրտումներ: Հինգ տասնյակից ավելի գիտական հոդվածների հեղինակ է, որոնք լույս են տեսել հանրապետական գիտական ամսագրերում և ժողովածուներում:

Գիտնականը նաև բազմաթիվ միջազգային գիտաժողովների բանախոս է:

Ա. Հանեյանի բարբառագիտական հետազոտությունների մեջ արժեքավոր տեղ ունեն հնչյունաբանությանը վերաբերող նրա ուսումնասիրությունները, որոնցից է «Գրաբարի բառասկզբի յ ձայնորդի արտացոլումը արդի հայերենի բարբառներում» հոդվածը: Անվանի լեզվաբանը համահեղինակն է նաև «Հայերենի բարբառների տառադարձման համակարգի», որի ստեղծմամբ հնարավոր եղավ տարբերանը-

շանել հայերենի բարբառների խրթին հնչյունները: Հետագայում Ա. Հանեյանը իր դոկտորական թեզի շրջանակում հեղինակել և հրատարակել է «Ձայնեղ շնչեղները հայերենի բարբառներում» ուսումնասիրությունը: Սակայն, ցավոք սրտի, գիտությունների դոկտորի աստիճան ստանալու գործընթացն անավարտ մնաց երկարատև և ծանր հիվանդության պատճառով:

Հայ բարբառագիտության երախտավոր գիտնականի՝ հիշատակության արժանի աշխատանքներից են «Բնության երևույթների անվանումները հայերենի բարբառներում» իմաստային-թեմատիկ խմբի բառանունների վերաբերյալ հոդվածները, որոնցից են՝ «Քամի հասկացության բառիմաստային դրսևորումները հայերենի բարբառներում», «Ամպ հասկացության բառադրսևորումները հայերենի բարբառներում» և այլն, որոնցից հատկապես չափազանց ուշագրավ է «Ծիածան» հասկացության բառագուգաբանությունների լեզվաաշխարհագրական բնութագիրը և հոգեվոր-մշակութայինարժեքը» հոդվածը:

Ա. Հանեյանը կյանքի վերջին տարիներին կատարել է նաև

ստուգաբանական, բառաքննական աշխատանքներ, որոնք ներկայացված են «Գօտի» բառանվան ստուգաբանության շուրջ», «Բառաքննական դիտարկումներ (բլիթ, գաւիթ, խրճիթ, կնճիթ)», «Գավառ բառանվան ստուգաբանության շուրջ» հոդվածներով:

Մեծ է նաև Ա. Հանեյանի ներդրումը բարբառագետ մասնագետների պատրաստման գործում: Նա գիտական դեկավար կամ խորհրդատու է եղել հայագիտության մեջ հիմնարդեն նշանակալի աշխատանքներ կատարած բարբառագետների ինչպես մայր մեր հայրենիքում, այնպես էլ արտերկրում: Ա. Հանեյանը վախճանվեց 2019 թվականի մարտի 12-ին և հուղարկավորվեց Շահումյանի գերեզմանատանը: Հայ բարբառագիտության երախտավորի հիշատակը միշտ վառ է մնալու գործընկերների սրտերում:

*Բ. գ. թ. Ջ. Բառնասյան,
բ. գ. թ. Հ. Խաչատրյան,
բ. գ. թ. Ա. Վարդանյան*

04. 05. 2021

Տարին հոբելյանական է լեզվի ինստիտուտի բարբառագիտության բաժնի ավագ գիտաշխատող Ա. Վարդանյանի

նի համար: Նա 70 տարեկան է: Իր գործին անվերապահորեն նվիրված գիտնական լինելով՝ Արտակ Վարդանյանը հիացնում է իր հետաքրքրությունների լայն շրջանակով՝ բանագետ-բարբառագետից մինչև գրող-թարգմանիչ, հայ ավանդական երգարվեստի գիտակ, հայոց բառուբանի ակունքները պեղող և իր գտածոները սիրով ու գուրգուրանքով հանրությանը ներկայացնող բանագետ-բանահավաք և վերջապես՝ մեղմաբարո, բարեկիրթ, պատրաստակամ ընկեր ու բարեկամ... Մեր բաժնի աշխատակիցների անունից շնորհավորում եմ մեր հարգարժան ընկերոջ հոբելյանը՝ մաղթելով նրան քաջառողջություն և ամենայն բարիք:

Բ. գ. թ. Ջ. Բառնասյան

12. 05. 2021

Ս. թ. մայիսի 10-ին ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի հեռավար հարթակում տեղի ունեցավ ընդհանուր և համեմատական լեզվաբանության բաժնի հերթական սեմինարը, որը վարում էր բաժնի ավագ գիտաշխատող, բ. գ. թ., դոցենտ Մերի Սարգսյանը: Սեմինարի թեման շատ արդիական էր և հետաքրքիր, նվիրված էր կիրառական լեզ-

վաճառության արդի խնդիրներից մեկին՝ հայերենի ձևային նկարագրությանը:

Դեռևս 2018 թվականից Մ. Սարգսյանի ղեկավարությամբ և Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան հովանավորությամբ սկսվել են «Հայերենի բառակազմության ձևային նրկարագրություն և համապատասխան էլեկտրոնային շտեմարանի ստեղծում» գիտահետազոտական նախագծի աշխատանքները: Մեմինարի ընթացքում Մ. Սարգսյանը ներկայացրեց շտեմարանի կազմության հիմքում ընկած սկզբունքները, հայերենի ձևանազմանն առնչվող խնդիրները, դրանց լուծման ուղիները, շտեմարանի հնարավորությունները և այլն: Նշեց. «Ծրագրաշարը մշակված է այնպես, որ շտեմարանում տվյալներ մուտքագրելիս համակարգը հեռացնում է կրկնությունները: Շտեմարանի տվյալները ենթակա են խմբագրման, սակայն միայն հեղինակների կողմից: Շտեմարանում տվյալների մուտքագրման փուլից հետո կարելի է որոնման համակարգով գտնել անհրաժեշտ տվյալներ, իրականացնել տրվյալների համեմատություններ, դիտումներ, խմբագրումներ և այլն: Օգտատերերը տվյալների

շտեմարանից կարող են օգտվել որոնումների շնորհիվ: Որոնումներն ու հարցումները կազմակերպելու համար ըստեղծվել է կադապար, որը բառակազմության ձևային նկարագրման շտեմարանի օգտատերերին հնարավորություն է տալիս ստանալու իրենց հետաքրքրող տվյալները»: Շտեմարանում հնարավոր է կատարել երկու տիպի հարցում՝ սովորական և ընդլայնված: Սովորական հարցում կատարելիս որոնումը կազմակերպվում է ըստ բառի: Ընդլայնված հարցումները հնարավորություն են տալիս տեսնելու տարբերակային ձևերի, շեղումների և անկանոնությունների ամբողջական պատկերը:

Այս էլեկտրոնային շտեմարանն իր տեսակի մեջ, ըստ էության, եզակի է՝ ծավալով և բառային նյութի ընդգրկումով, կարող է լիովին լուծել բառերի կազմության հետ կապված խնդիրները: Շտեմարանը կարող է ծառայել հասարակության լայն շրջանակներին:

17. 05. 2021

Արդեն ավանդույթ է դարձել ինստիտուտի բաժիններում հեռավար սեմինար-հաղորդումների անցկացումը: Մ. թ. մայիսի 17-ին ՀՀ ԳԱԱ Հ. Ա-

Ճառյանի անվան լեզվի ինստիտուտի հեռավար հարթակում տեղի ունեցավ ընդհանուր և համեմատական լեզվաբանության բաժնի հերթական սեմինարը, թեման էր բաժնի վարիչ, Բ. Գ. Պ. Վ. Գ. Համբարձումյանի «Հայերենը և կելտական լեզուները» մենագրության հիմնական դրույթների քննարկումը: Բանախոսը նշեց, որ աշխատանքը ընդգրկում է ներածություն և վեց գլուխ:

Դրանցից 1-ին և 2-րդ գլուխներում (համապատասխանաբար) կատարվում է հին գրական հայերենի և նրա բարբառների, կելտական լեզուների և նրանց բարբառների քննություն:

Աշխատանքի 3-րդ գլուխը նվիրված է հայերենի և կելտական լեզուների ծագումնային առնչությունների հարցերին՝ արդի համեմատաբանության և հայերենագիտության տվյալների ներառումով: Այդ հարցերին անդրադառնալն ունի մեծ նշանակություն արդի համեմատական լեզվաբանության համար:

Հաջորդ երկու գլուխներում ուշադրության առարկա են հնչյունական և բառային զուգաբանությունները՝ ըստ հրապարակի վրա եղած գիտական ուսումնասիրությունների տրվ-

յալների, Հ. Աճառյանի, Գ. Ջահուկյանի ցանկերի, այլն հատուկ ուշադրություն է դարձվում Թ. Գամկրելիձեի և Վյաչ. Իվանովի հայտնի աշխատության մեջ այս կամ այն չափով տեղ գտած հայերեն և կելտական լեզուների զուգահեռներին: Նշեց, որ «հայ-կելտական առնչություններին վերաբերող նման քննությունը խիստ կարևոր է հնդեվրոպական լեզուների համեմատական և տիպաբանական ուսումնասիրության համար, մանավանդ հայերենի նախագրային շրջանի պատմության շատ հարցերի նորովի լուսաբանման տեսանկյունից»:

Վերջին գլուխը ներկայացնում է բառային զուգաբանությունների բառի-մաստային (թեմատիկ) խմբերը՝ ըստ Կ. Բաքի և Գ. Ջահուկյանի խմբավորման:

Ընդգծեց, որ հնդեվրոպական երկու խմբի լեզուների համեմատական-տիպաբանական քննության այս փորձը հեռանկարային է՝ առհասարակ նման ուղղվածության ուսումնասիրությունների ձեռնամուխ լինելու առումով:

08. 06. 2021

Ս. թ. հունիսի 7-ին ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի

ինստիտուտի հեռավար հարթակում տեղի ունեցավ ընդհանուր և համեմատական լեզվաբանության բաժնի հերթական սեմինարը, որը վարում էր բաժնի ավագ գիտաշխատող, Բ. Գ. Թ., դոցենտ Մերի Սարգսյանը: Սեմինարի թեման նվիրված էր կիրառական լեզվաբանության արդի խնդիրներից մեկին՝ հայերեն էլեկտրոնային սրբագրման համակարգին և նրա կազմության սկզբունքներին:

Բանախոսը ներկայացրեց հայալեզու տեքստերի էլեկտրոնային նոր սրբագրիչի տրվյալների շտեմարանի բառապաշարի ձևային նկարագրության խնդիրները: Նշեց, որ «Հայերեն էլեկտրոնային սրբագրման համակարգ» գիտահետազոտական թեմայի շրջանակներում իր ղեկավարած աշխատանքային խումբը ըստեղծել է սրբագրման մի համակարգ, որի միջոցով փորձ է արվում ամբողջական և լիարժեք կերպով սրբագրել արդի արևելահայերենով գրված ցանկացած տեքստ, ինչպես նաև օգտագործելով վեբ տեխնոլոգիաների բոլոր հնարավորությունները՝ հայերեն էլեկտրոնային սրբագրման համակարգը հասանելի դարձնել հանրության լայն շրջանակներին:

Քին՝ ապահովելով համակարգից հեշտությամբ օգտվելու հրապարակություն:

Էլեկտրոնային նոր սրբագրիչը կնպաստի ինչպես լեզվաբանական հետազոտությունների բնագավառում համակարգչային տեխնիկայի կիրառությանը, համակարգչային ծրագրերի միջոցով տեքստերում եղած լեզվական սխալների վերացմանը, այնպես էլ լայն առումով հայերենի՝ որպես համացանցային լեզվի հաջող գործառնությանը:

26. 06.2021

Ս. Թ. հունիսի 24-25-ին տեղի ունեցավ ինստիտուտի «Ջահուկյանական ընթերցումներ» գիտաժողովը, որին մասնակցում էին մեր հանրապետության գիտական տարբեր հաստատությունների՝ ԳԱԱ լեզվի, արևելագիտության, հնագիտության և ազգագրության ինստիտուտների, Երևանի պետական համալսարանի, Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարանի, Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի, Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի, Արցախի պետական համալսարանի, «Տաթև» գիտակրթական համալիրի հայերե-

նագետ-լեզվաբաններ:

Գիտաժողովի լիազումար նիստում, այլև առանձին չորս նիստերում լավեցին շուրջ երեք տասնյակ զեկուցումներ, որոնք վերաբերում էին հայերենի ձևավային նկարագրության և տիպաբանության, հանրալեզվաբանության, լեզվի պատմության, և քերականական կառուցվածքի, հայերենի բառապաշարի տարբեր շերտերի և իմաստաբանության, առանձին բառերի ստուգաբանության, տեքստաբանության, տեղանվանագիտության, հայերենի բարբառների, խոսակցական լեզվի և բարբառային իրողությունների քննության, լեզվի ուճաբանության և թարգմանության տարբեր հարցերի:

Ըստ այդմ՝ եղած զեկուցումները կարելի է ներկայացնել ըստ թեմատիկայի բաժանելով:

ա) Բառապաշարի տարբեր շերտերի քննություն և իմաստաբանություն, այս բաժնում կարդացվեց չորս զեկուցում, հիմնականում արդի հայերենի հարցերի վերաբերյալ:

բ) Ստուգաբանությանը վերաբերող զեկուցումներում կային ոչ միայն հետաքրքիր, այլև նոր մտածումների տեղիք տրվող դիտարկումներ. այս բնագավառը բավականին լայն պատրաստվածություն է պա-

հանջում, որ ոչ միշտ է դառնում նկատելի:

գ) Հայերենի բարբառների, բարբառային իրողությունների քննությունը վերջին տարիներին լայն թափ է ստացել հայերենագիտության մեջ, գրվում են աշխատանքներ, կարդացվում են զեկուցումներ, որոնք բոլոր դեպքերում արժանի են լայն ուշադրության: Բուն իմաստով բարբառներն այսօր դիտվում են իբրև տարածքային տարբերակների ամբողջություններ, շարունակաբար նկարագրվում են դրանք բարբառագիտական ավանդական մեթոդներով, կարելի է ասել Աճառյանի սխեմայով՝ նկարագրական, հնչյունական-քերականական, բայց ոչ բառապաշարի, շարահյուսական մակարդակների ընդգրկմամբ:

դ) Լեզվի պատմության, և քերականական կառուցվածքի ուսումնասիրության հարցերին ևս անդրադարձ եղավ գիտաժողովի ընթացքում (ընդամենը երկու զեկուցում):

ե) Հանրալեզվաբանության, խոսակցական լեզվի քննության հարցերին նվիրված զեկուցումները (դրանք չորսն էին) բավականին հետաքրքիր էին իրենց արծարծումներով, սակայն ավելի մեծ ուշադրության պիտի դարձվեր դրանց լու-

ծումներին, որոնք, բնականաբար, չեն կարող վերջնական և սպառիչ լինել:

զ) Տեքստաբանության, տեղանվանագիտության և անվանակարգության հարցերի մասին զեկուցողները գիտական այլ հաստատությունների ներկայացուցիչներ էին, որոնց զեկուցումներում այս կամ այն չափով պակասում էին զուտ լեզվագիտական լուծումները, իսկ առհասարակ դրանք հաջողված էին իրենց հարցադրումների մեջ:

է) Հայերենագիտության համեմատաբար նորագույն բնագավառ է լեզվի ձևային նկարագրությունը և տիպաբանու-

թյունը, որը լեզվի ինստիտուտում ևս հաջողությամբ իրականացվում է՝ երիտասարդ մասնագետների ջանքերով, և դա նկատելի էր այդ թեմայով զեկուցումներում:

ը) Ոճաբանությունը և թարգմանության տեսությունը ավանդական բնագավառներ են, այս թեմայով կարդացված զեկուցումները ուշադրության արժանի էին ավելի շուտ ըստ նյութի, քան ըստ վերլուծության:

Մեծ գիտնականի հիշատակին նվիրված գիտաժողովը արձանագրում է նոր ձեռքբերումներ հայերենագիտության բնագավառում:

Բնավորությամբ բարեկիրթ, գիտական իմացությամբ հանրագիտակ, հարգված գիտնական և գործընկեր էր Լիանա Հովսեփյանը:

Կյանքից հեռացավ, երբ գիտնականի համար դեռ շատ գործ անելու ժամանակ պիտի լիներ: ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի առաջնակարգ աշխատող էր, ճանաչված հայագետ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, որ գիտական աշխատանքը համատեղում էր գիտական-կազմակերպչականի հետ:

Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետն ավարտելուց հետո նա ընդունվել է Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի ասպիրանտուրա «հայոց լեզվի պատմություն» մասնագիտությամբ, և այդ ոլորտում նա գրեց թեկնածուականատենախոսություն՝ նվիրված միջին գրական հայերենի հոլովման համակարգի քննությանը:

Լեզուների իմացությունը, կազմակերպչական հնարավորությունները և ղեկավարելու ունակությունը երաշխիք էին 1974-1981 թթ. լինելու ինստիտուտի գիտական խորհրդի քարտուղար, 1981-1986 թթ.՝ գուգադրական-տիպաբանական հետազոտությունների բաժնի վարիչ, 1986-1990 թթ.՝ հայոց լեզվի պատմության բաժնի վարիչ, 1990-1995 թթ.՝ ինստիտուտի փոխտնօրեն:

1969 թ. Լ. Հովսեփյանը պաշտպանում է թեկնածուական, իսկ 1987 թ.՝ դոկտորական ատենախոսություն: Վերջինս նվիրված է գրաբարի բառակազմության կադապարային քննությանը, որում հեղինակը մշակել է առհասարակ լեզվի բառակազմության ուսումնասիրության յուրօրինակ մոտեցումներ, տվել ուրույն սկզբունքերով վերլուծության լավագույն օրինակ:

Լ. Հովսեփյանը 1997 թ. աշխատանքի անցավ Երևանի պետական համալսարանում՝ ընտրվելով ընդհանուր և համեմատական լեզվաբանության ամբիոնի վարիչ, որը ղեկավարեց երկար տարիներ՝ նպաստ բերելով այդ բնագավառում ոչ միայն գիտական կարգերի պատրաստման գործին, այլև գիտական թեմաների մշակմանը: Նրա գիտական ղեկավարությամբ հայագիտության և ընդհանուր լեզվաբանության բնագավառ են մուտք գործել երիտասարդ խոստումնալից մասնագետներ:

Լայն էր Լ. Հովսեփյանի գիտական հետաքրքրությունների շրջանակը՝ հայոց լեզվի պատմություն, հայ բարբառագիտություն և բառարանագրություն, լեզուների զուգադրական կառուցվածքային տիպաբանություն, ձևայնացված նկարագրություն և կադապարում, լեզվի հետազոտության ժամանակակից մեթոդներ, գրական լեզվի նորմավորման խնդիրներ:

Հանդարտ և անշտապ աշխատանքով նա հեղինակեց մի քանի տասնյակ գիտական հոդվածներ, գրեց մենագրություններ, որոնք լույս տեսան առանձին կամ գիտական ժողովածուներում:

Անվանի լեզվաբանը հրատարակության էր պատրաստում գրաբարի լիակատար քերականությունը, որը մնաց անավարտ: Լ. Հովսեփյանի միջին գրական հայերենի հոլովմանը նվիրված աշխատությունը (տպագրված՝ «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության» ժողովածու, հ. 2, Ե., 1975 թ.), «Սովետահայ լեզվաբանությունը 60 տարում» (1982 թ.), «Գրաբարի բառակազմությունը» (1987 թ.), «ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարանների լեզուն» (1997 թ.) գրքերը մնայուն արժեք են հայերենի պատմական-մշակութային ուսումնասիրության բնագավառում: Հայերենի բառակազմական կադապարների տեսությունը Լ. Հովսեփյանի ներդրումն է հայ լեզվաբանության մեջ:

Ով տեղյակ է Ա. Բակունցի ռուսերեն գրած ակնարկներին, որոնք ժամանակին՝ 1920-ական թթ. կեսերին տպագրվել են մամուլում, կիմանա, որ դրանք անվանի գրողի երկերի ակադեմիական հրատարակության 2-րդ հատորում ներկայացված են հայերեն՝ Լ. Հովսեփյանի թարգմանությամբ:

Լ. Հովսեփյանը կրթության աչքի ընկնող կազմակերպիչ էր, իր եռանդն ու ջանքերը դնում էր գիտական կադրերի պատրաստման գործում. եղել է ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի, ինչպես նաև ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գիտական խորհուրդների անդամ, ԲՈԿ-ի գիտական աստիճաններ շնորհող 019 մասնագիտական խորհրդի անդամ:

Իր գիտական-մանկավարժական երկարատև գործունեության ընթացքում Լ. Հովսեփյանը նվիրումով դասավանդել է լեզվաբանության ներածություն, ընդհանուր լեզվաբանություն, լեզվափոխակապություն, մասնագիտության արդի խնդիրներ:

Մի հետաքրքիր ուժով և հմայքով իր շուրջն էր համախմբում ամենքին՝ իր ասպիրանտներին, գործընկերներին, իր եռանդով

օրինակ դառնում բոլորիս, մղում նոր աշխատանքի և ձեռքբերումների:

Աշխատանքի մեջ շատ խիստ էր և պահանջկոտ ընկեր Հովսեփյանը, մենք երկյուղով էինք մեր աշխատանքներն իրեն ներկայացնում, բայց երբ հավանության էր արժանացնում, վե՛րջ, ուրեմն իսկապես արժանի աշխատանք էր: Պրոֆեսոր Լ. Հովսեփյանի ասպիրանտը լինելը մեծ պատիվ էր մեզ համար: Աշխատանքից դուրս նա մեր ավագ ընկերն էր, խորհրդատուն, հարազատը, բարեկամը: Իրենց տանը հավաքում էր մեզ՝ իր ասպիրանտներին, հյուրասիրում իր ձեռքով պատրաստած տեսակ-տեսակ ուտեստներով, իսկ հետո թեյի կամ սուրճի սեղանի շուրջ գրական ընթերցումներ էին լինում, մեզ պատիվ էր անում՝ ներկայացնելով իր գրական անտիպ թարգմանությունները:

Հայ լեզվաբանության հմուտ մասնագետի, մեր շատ սիրելի գիտական ղեկավարի, խորհրդատուի, ավագ գործընկերոջ, մեծ ուսուցչի խոսքերը, խորհուրդները մեր ականջին են, Լիանա Հովսեփյանն իր կենդանի ներկայությամբ միշտ ուղղորդելու է մեզ թե՛ գիտության և թե՛ կյանքի մյուս ասպարեզներում, իսկ նրա բացառիկ կերպարը միշտ վառ կլինի մեր հուշերում:

*Բանասիր. գիտ. թեկնածու Մ. Ա. Մարգարյան
(Լ. Ս. Հովսեփյանի ասպիրանտ)*

ՌԻՄԱ ՆԻԿՈԼԱՅԻ ՇԱԼՈՒՆՑ (1937-2021)

Կյանքից հեռացել է ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի երկարամյա աշխատակից, բ.գ. դ. Ռիմա Նիկոլայի Շալունցը: Նա ինստիտուտի միջին սերնդի ներկայացուցիչ էր, իր գիտական ողջ գործունեությունը ծավալել է ժամանակակից հայերենի բառապաշարի և տերմինաբանության, բառարանագրության, խոսքի մշակույթի ուսումնասիրության բնագավառում, հեղինակել է ուշագրավ մենագրություններ և բազմաթիվ հոդվածներ՝ տեսական և գործնական բնույթի:

Ռիմա Շալունցը ծնվել է Գորիսում 1937 թ. հոկտեմբերի 9-ին: 1944 թվականին ընդունվել է Գորիսի թիվ 2 միջնակարգ դպրոցը: Ավարտելուց հետո որոշ ժամանակ աշխատել է Գորիսի պետական թատրոնում՝ որպես լեզվի մասնագետ:

1961- 1965 թթ. սովորել է Երևանի Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետում, ապա ընդունվել ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի ասպիրանտուրան՝ «Բառագիտություն և բառարանագրություն» մասնագիտությամբ: 1972 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ «Համանուն բառերը ժամանակակից հայերենում» թեմայով, իսկ 1994 թ.՝ դոկտորական ատենախոսություն «Զանգվածային լրատվության լեզուն և ոճը» թեմայով: Վերջինս լույս է տեսնում իբրև ուսումնասովանողական ձեռնարկ, որ գործածվում է բուհերում:

Ռիմա Շալունցի բուն մասնագիտությունը եղել է բառագիտությունը: Գիտական բարձր արժեք ունեն նրա ուսումնասիրությունները ժամանակակից հայերենի համանուն և հականիշ բառերի վերաբերյալ՝ դրանց դասակարգման, կառուցվածքի առանձնահատկությունների վերհանման և վերլուծության, ոճական արժեքի գնահատության տեսանկյունից: Նա ուշագրավ դիտարկումներ ունի արդի հայերենի տերմինային համակարգ համանիշության և բազմիմաստության վերաբերյալ. այդ հարցի վերաբերյալ նա ունի ուշագրավ դիտարկումներ:

Մնայուն, կրթության գործին օգուտ բերող աշխատություններ Ռիմա Շալունցի «Արդի հայերենի համանունների դպրոցական բառարանը» (Ե., 1980 թ.), որում ընդգրկված են ինչպես դպրոցական դասագրքերում, այնպես էլ հայ դասական և խորհրդային գրողների երկերում (19-րդ դ. 70-ական թթ. սկսած) գործածված համանուն բառերը:

Նա իր գործին նվիրված մասնագետ էր, բազմիցս հանդես է եկել մամուլում հանդիպող լեզվական սխալների և վրիպումների, դրանց վերացման, հայերենի անաղարտության վերաբերյալ հոդվածներով, որոնք նպաստ էին բերում հայերենի գրական նորմավորմանը: Ժամանակին լայն հնչեղություն ուներ «Մեր լեզուն, մեր խոսքը» հեռուստատեսային հաղորդաշարը, որն անդրադառնում էր հայերենին անհարազատ ոճերին, հոլովական ոչ ճիշտ կիրառություններին, կապակցելիության սխալներին և այլն. Ռ. Շալունցը ունեցել է իր մասնակցությունը այդ հաղորդաշարի աշխատանքներին:

Նա կառավարությանն առնթեր տերմինաբանական խորհրդի անդամ էր, ինստիտուտի տերմինաբանության և խոսքի մշակույթի բաժնի առաջատար գիտաշխատող, ակտիվ մասնակցություն էր ունենում գիտական տարբեր բնույթի հարցերի՝ ատենախոսությունների, գիտաժողովների և բաժնի, նաև ինստիտուտի գիտական խորհրդի նիստերի քննարկումներին, բազմիցս մասնակցել է տարբեր ընդգրկման գիտաժողովների և կոնֆերանսների: 2000 թ. նա բնակվում էր ԱՄՆ-ում, որտեղ և 2021թ. հունվարի 22-ին կնքել է իր մահկանացուն:

Ռ. Շալունցին ճանաչողները միշտ կհիշեն նրան, հայերենի անխոնջ ուսումնասիրողին, զուսպ, համեստ, աշխատասեր գիտնականին:

Բանասիր. գիտ. թեկնածու Ս. Վ. Պապիկյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<i>Խմբագրական. Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1660-ամյակը.....</i>	3
--	---

ՀՈԴՎԱԾՆԵՐ

Վ. Գ. Համբարձումյան. Բառաքնական և ստուգաբանական դիտարկումներ.....	4
Մ. Քումունց. Հնդեվրոպական «ուռչել» հասկացությունը Սյունիք-Արցախի բարբառային բառապաշարում.....	15

ԲԱՆԱՎԵՃ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Յու. Ս. Ավետիսյան, Դերանվան ուսուցման հիմնախնդիր- ները գրական արևելահայերենում.....	23
Ա. Գ. Բարսեղյան, Տեքստի կապակցման միջոցների գործածությունը հուշագրության մեջ.....	33
Ա. Ս. Գալստյան, Նորակազմ բառերը արդի հայերենի բառապաշարում.....	44
Լ. Գ. Թեյյան. Արդի հայերենի նորմը և հեռուստատեսության լեզուն.....	52

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Տ. Ղ. Սիրունյան. Լատիներենի քերականության ազդեցությո- ւյան նմուշներ Հովհաննես Ծործորեցու «Համառոտ տեսութիւն քերականի» աշխատության մեջ.....	62
Մ. Ա. Սարգսյան, Ն. Խաչիբաբյան. «Կորոնա» բաղադրիչով նորակազմ բառերի քննություն.....	69

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Թ. Ա. Ասոյան. Հայերենի բարբառների նվիրված ուշագրավ ուսումնասիրություն.....	75
ԳՐՔԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ.....	79
ԳԻՏԱԿԱՆ ԿՅԱՆՔ.....	83
ԼՐԱՏՈՒ.....	96

СОДЕРЖАНИЕ

Редакционная: 1660-летие Месропа Маштоца – 3. С т а т ь и:

В. Г. АМБАРЦУМЯН. Лексикологические и этимологические заметки – 4: М. С. КУМУНЦ. Индоевропейское наименование “распухать” в лексике Сюникско-арцахского диалекта армянского языка – 15.

Д и с к у с с и и о б с у ж д е н и я: Ю. С. АВЕТИСЯН. Основные проблемы обучения местоимений в литературном армянском языке (Местоимение как отдельная часть речи. Внутренняя частиречная классификация местоимений). 23. А. Г. БАРСЕГЯН. Средства связи текста в мемориальном романе «Мой отец» В. Исаакяна – 33. А. С. ГАЛСТЯН, Новые слова в лексике современного армянского языка - 44. Л. Г. ТЕЛ-ЯН - Языковая норма современного армянского языка и язык телевидения – 52. **С о о б щ е н и я:** Т. Г. СИРУНЯН. Образцы влияния латинской грамматики в труде «Краткая теория грамматики» Ованеса Цорцореци - 62. М. А. САРГСЯН, Н. П. ХАЧИБАБЯН - Исследование новообразованных слов с компонентом «корона» - 69. **Р е ц е н з и я:** Т. А. АСОЯН. Интересное исследование по армянскому диалектологу - 75.

К н и ж н о е о б о з р е н и е -79: Н а у ч н а я ж и з н ь - 83. Хроника - 96.

С О Н Т Е Н Т S

A r t i c l e s: V. G. HAMBARDZUMYAN, Lexicological and Etymological Reviews - 4. M. S. KUMUNTS. Indo-European Concept “swell” in Syunik-Artsakh Dialectal Vocabulary of Armenian Language- 15.

D i s c u s s i o n: Yu. S. AVETISYAN. Teaching Lexical Eastern Armenian. Pronouns as a Separate Part of Speech, Classification of Pronouns - 23. A. G. BARSEGHIYAN. Use of Means of Text Connection in Memoirs- 33. A. S. GALSTYAN. New Words in Vocabulary of the Modern Armenian Language - 44. L. G. TELYAN. Linguistic Usage of the Modern Armenian Language and Language of TV- 52: **R e p o r t s:** S. T. G. SIRUNYAN, Examples of the Influence of Latin Grammar in the Work of Hovhannes Tsortsoretsi "A Brief Theory of Grammar" - 62: M. A. SARGSYAN, N. P. KHACHIBABYAN, Examination of Newly-formed Words with Component "Corona"- 69: **B o o k r e v i e w s:** T. A. ASOYAN. An Interesting Study on Armenian Dialectology -75: **S c i e n c e N e w s - 79: N e w s - 96.**

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը հրատարակում է «Լեզու և լեզվաբանություն» հանդեսը, որի առաջին համարը լույս է տեսել 2003թ.:

Հոդվածները պետք է ուղարկել տպված և համակարգչային տեսքով, 8-10 էջի սահմաններում, տողերի միջակայքը՝ 1,5, տառաչափը՝ 12 և Sylfaen տառատեսակով (ամփոփումները ռուսերեն և անգլերեն՝ Times New Roman): Վերևում նշվում է հեղինակի անունը, ազգանունը, հաստատության անվանումը, հոդվածի վերնագիրը:

Հղումները և գրականության ցանկը պետք է համապատասխանեն:

Խնդրում ենք գրախոսական հոդվածներն ուղարկել գրախոսվող գրքի հետ:

Մեր հասցեն՝ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ

ՀՀ, 3750015, Երևան, Լուսավորչի 15

Հեռ.՝ (+374 10) 565 337

Կայքէջ՝ www.language.sci.am

Էլ.փոստ՝ inslang@sci.am

Հանդեսի պատասխանատու քարտուղար՝ meri-sargsyan@mail.ru

К СВЕДЕНИЮ

НАН РА институт языка имени Р. Ачаряна издает журнал “Языкиязыкознание”, первый номер которого был издан в 2003г.

Статьи следует присылать в виде распечатки и компьютерного набора, объем- в пределах 8-10 машинописных страниц, интервал- 1,5, размер шрифта - 12, шрифт- Sylfaen (резюме на русском и английском- Times New Roman). В начале указываются имя, фамилия, наименование учреждения, заглавие статьи.

Ссылки и список литературы должны соответствовать друг другу.

Просим статьи с отзывом или рецензией прислать с рецензируемой книгой.

Наш адрес: НАН институт языка имени Р. Ачаряна

РА, Ереван, Лусаворича 15

Тел.: (+374 10) 565 337

Веб. сайт: www.language.sci.am

Эл.-почта: inslang@sci.am

Ответственный секретарь: meri-sargsyan@mail.ru

ACKNOWLEDGEMENT

NAS RA language institute named after H. Acharyan is publishing afresh «Language and linguistics» magazine, the first number of which was published in 2003.

Please, send articles in hard and soft copies, within 8-10 pages, line spacing- 1,5, font size- 12, fonts- Sylfaen (the summary in Russian and English - Times New Roman). Author's name, institution and contact data should be placed in the upper right corner of the title page.

References or footnotes should be adequate to the list of bibliography.

Please, send reviews with the corresponding book.

Our address: NAS language institute named after H. Acharyan

RA, Yerevan, Lusavorich 15

Phone: (+374 10) 565 337

Web page: www.language.sci.am

E-mail: inslang@sci.am

Editorial secretary: meri-sargsyan@mail.ru